



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեալափով կամ կրիչով
մեալոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



eb. apu. an



Վ Ա Յ Ա Ն Տ Է Ր Ե Ա Ն

ՅՐԱԳԸՆ ՔՆՆԱԿԱՆՍԵՊՈՒՆ ՎԵՐՈՒԿՈՒԹՅՈՒՆ

Կ Ր Ե Տ

Ս Ի Մ Է Ո Ն Յ Ե Ն Վ Ո Ր Ե Ը Ն



Ի Ե Ր Ը Ն

1923

22.

1. 17.

1. 17.

1. 17.

291.99-092 [Տեղյակ]

3

Վ Ա Յ Ա Ն Տ Ե Ր Ե Ա Ն


ՄԱՐՏ 1923

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կ Ր Կ Ց

Ս Ե Ր Ե Ա Ն Ե Կ Ե Ր Ե Ա Ն

26667
500
121
1543
A II
31948




Կ Ե Ր Ե Ա Ն

1923

23 x 15

1079



Այս աշխատութիւնը տպագրուած էր արդէն, երբ ստացանք “Նորք”, իսնդէսի առաջին գիրքը, որտեղ վա-
րան Տէրեանի կեանքի վերջին շրջանի մասին յօդուած
ունի քանաստեղծի բնկեր Պօղոս Մակինցեանը: Այդ յօդ-
ուածից առնում ենք վ. Տէրեանի մահուան ստոյգ թուա-
կանը, որ է 1920 յունվարի 7-ը:

Բացի այդ՝ “Նորք”, ի նոյն թուի մէջ նիկ. Մառ իր
գնահատական յօդուածում յայտնում է, որ տարաբախտ
քանաստեղծը “Ընձենատրի», թարգմանութեան ձեռնար-
կելով կարողացած է թարգմանել պօլեմի միայն սկզբնա-
կան տասներկու տունը:

Ս. Յ.

Յ Ե Ն Կ

1. <i>Մինչև Տէրեան</i>	1
2. <i>Բանաստեղծք եւ իր սերունդք</i>	8
3. <i>Կեանքք եւ միջավայրք</i>	13
4. <i>Եզգագութիւններ</i>	19
5. <i>Մտաբանք եւ սրնումներ</i>	30
6. <i>Հիասթափութիւն եւ մեղուտցում</i>	41
7. <i>Արեւածագ եւ գերուղարձ</i>	49
8. <i>Տէրեան արուեստագէտ</i>	60

Գ Ի Ն Չ Ե Ի Տ Է Բ Ե Ա Ն

Աւերջին երեսնամեակի ընթացքում արեւելեան Հայերի մէջ բանաստեղծական գրականութիւնը ուրոյն, մշակուած ձեւ ստացաւ: Առաջացաւ բանաստեղծական լեզու, որ կարողացաւ արտայայտել նոր ժամանակի արամագրութիւնները, նոր մարդու բարդ ու նուրբ հոգեբանութիւնը: Այս կատարելագործութիւնը տեղի ունեցաւ ոչ թէ արտաքին ազդեցութեամբ, անհաստատ եւ երերուն ճանապարհով, այլ ներքին արժէքների ամնորեայ եւ տեւական զարգացումով: Անշուշտ, եւրոպական արուեստը, մասնաւորապէս ռուսական գրականութիւնը կարեւոր ազդեցութիւն ունեցան արեւելահայ բանաստեղծների վրայ: Բայց այս ազդեցութիւնը աղատ եղաւ արհեստական բնաւորութիւնից եւ երեւան եկաւ կատարեալ գիտակցութեամբ, ներքին համակիր ոգով, չ'ազարտելով եւ չ'աղաւաղելով Հայ բանաստեղծութիւնը թէ իր խորքի եւ թէ իր ձեւի մէջ:

Այս տեսակէտից կարեւոր տարբերութիւն կայ մեր հրատարակագրութեան, մեր վիպագրութեան եւ մեր բանաստեղծութեան միջեւ: Ռուս լեզուի ազդեցութիւնը արեւելահայ հրատարակագրութեան վրայ շատ անգամ բացասական եղաւ: Գրիգոր Արծրունին, որ մի ժամանակ ազդեցութիւն ուներ մտքերի վրայ, գրում էր արհեստական հայերէնով, ռուսերէնին ստրկաբար հետեւելով: Վիպագրութիւնը այսպիսի վիճակ չէր ներկայացնում անշուշտ: Բայց այդ ճիւղի մէջ եւս մենք ունինք առաջնակարգ հեղինակներ — Բաֆֆին եւ մանաւանդ Շիրվանզադէն — որոնց լեզուի վրայ նկատելի է ռուս լեզուի բացասական ազդեցութիւնը:

Եթէ հրատարակագրական եւ վիպական արձակը բաւական ենթարկուեց արտաքին ազդեցութեան, բանաստեղծական լեզուն մնաց իր մաքրութեան կէ յտակութեան մէջ, գեթ առաջնակարգ հեղինակների գործերում:

Արեւելահայ բանաստեղծութիւնը այսպիսով զարգացման եւ կատարելագործութեան բնականոն ուղին բռնեց: Այստեղ անմիջապէս յիշում ենք մենք այն ախար վիճակը, որին ենթարկուեց վերջին քառորդ դարի ընթացքում արեւմտահայ բանաստեղծութիւնը: Հեռացած ոչ միայն Հայաս-

տանի ստեղծագործող եւ կենդանի ժողովրդից, այլ եւ աստանդական քեր-
քիայի սահմաններից, արեւմտահայ տաղանդաւոր բանաստեղծները գրում
էին արտաքին ազդեցութեան տակ:

Այս պարագան ստեղծեց մի բանաստեղծութիւն, որ կրում է իր վրայ
մեծ չափով արհեստականութեան կնիք: Գրական արժեքները, ինչպէս եւ
առհասարակ քաղաքակրթութիւնը, ստեղծուած են ժողովրդի ստեղծագոր-
ծութեան հնոցում, հաւարակամութեան յարատեւ ազդեցութեան ներքոյ:
Երբ որ բանաստեղծը կարում է կեանքից եւ կամնում է ստեղծագործել
օտար բանաստեղծների ազդեցութեան տակ — նրա բանաստեղծութիւնը
դառնում է անզոյն, անկենդան: Մինչդեռ զոյնը եւ կենդանութիւնը այնպիսի
յատկութիւններ են, առանց որոնց կարող չէ լինել բարձր, արժեքաւոր բա-
նաստեղծութիւն:

Արեւելահայ բանաստեղծութիւնը իր կապը պահեց կենդանի ժողո-
վրդի եւ իրական կեանքի հետ: Այս հողի վրայ նա զարգացաւ եւ այս
նպատակը պայմանների մէջ առաջացան այդ բանաստեղծութեան տաղան-
դաւոր ներկայացուցիչները:

—

Ցասնիններորդ դարի յիսնական թուականներից գոյութիւն ունի արեւ-
ելահայ բանաստեղծութիւնը: Ռաֆայէլ Պատկանեանի նշանաւոր «Արաբսի
Արտասուրը», գրուած է 1855 թուականին, Միքայէլ Նալբանդեանի հաշա-
կուած «Մեր Հայրենիքը» փոստգրուած է 1859 ին: Այդ ժամանակաշրջանից
մինչեւ հիմա անցել է մտաւորապէս վաթսուն տարի — եւ այդ երկարատեւ
ժամանակամիջոցի ընթացքում բանաստեղծութեան խնդիրները, նիւթը, ձեւը
կարեւոր փոփոխութեան են ենթարկուել: Երկու հիմնական շրջան կարելի է
գծել արեւելահայ բանաստեղծութեան պատմութեան մէջ: Առաջինը՝ սկզբի
օրերից մինչեւ ութսունական թուականների կեսը: Երկրորդը՝ ութսունական-
իննսունական թուականներից մինչեւ մեր ժամանակները: Առաջին շրջանը
հրապարակաբար բանաստեղծների շրջան է: Ռաֆայէլ Պատկանեան, Միքայէլ
Նալբանդեան, Մուրադ Շահազիզ այդ շրջանի տաղանդաւոր ներկայացուցիչ-
ներն են: Այսօր, երբ նրանք անհետացած են եւ նրանց դորձը դարձել է ար-
դէն պատմական գործ — քննադատութիւնը պետք չէ միտողմանի կերպով
գնահատել այն: Նրանք երեւան եկան այնպիսի մի ժամանակ, երբ արեւելա-
հայ գրական լեզուն նոր էր ստեղծուած եւ երբ իրենց առջեւ չուէին նոր
բանաստեղծութեան օրինակներ: Ստեղծագործութեան դժուարին փնտապար-
հի վրայ նրանք եղան առաջամարտիկներ եւ կատարեցին այն, ինչ որ մեր
կեանքի առարկայական պայմանները կարող էին թողնալ այն ժամանակ:
Մի կողմ թողնելով նրանց հրապարակագրական-հասարակական գերը, որ
այն ժամանակ ծանրացած էր բանաստեղծի վրայ ոչ իրենց կամքով, նրանք
որոշ գեր կատարեցին նաեւ բանաստեղծութեան մէջ: Թէ Ռաֆայէլ Պատ-

կանեան, թէ Միքայէլ Ղարանդեան եւ թէ Սմբատ Շահազիզ էջեր ունին իրենց գործերի մէջ, որոնք բանաստեղծական լեզուի, պատկերների, զգացումների տեսակետից ուշագրաւ են եւ որոնք անկասկածելի կերպով նոր բանաստեղծութեան եւ նոր արուեստի ազդեցութիւններ են:

Ինչ էր մեր գրական լեզուի վիճակը 1855 թուին, երբ հրատարակուեց Ռաֆայէլ Պատկանեանի «Արարտի Արտասուգը»: Այդ թուականին տակաւին ըստ չէր տեսած խաչատուր Արովեանի «Վերք Հայաստանի»-ն, որով սահմանադուում է արեւելահայ աշխարհիկ գրականութիւնը: Այդ թուականին տակաւին սկսուած չէր Ստեփան Ղազարեանի «Հիւսիսափայլը», որով հիմք է դրուում արեւելահայ նոր հրապարակագրութեան: Աշխարհարարի եւ գրարարի վէճերը, նոր եւ հին լեզուի պայքարները այնուհետեւ միայն ծանր կերպարանք առան: Եւ տակաւն 1855 թուականին բանաստեղծութիւնը տալիս է նոր լեզուի այգպիսի բնորոշ եւ նշանակալից արտադրութիւն:

Եւ 1855 թուից սկսած մինչեւ 1885 թուականը — մի ամբողջ երեսնամակ — այդ բանաստեղծութիւնը կատարում է իր դերը եւ ճանապարհ է բաց անում նոր բանաստեղծութեան համար:

Արեւելահայ բանաստեղծութեան երկրորդ շրջանը սկսուում է Յովհաննէս Յովհաննիսեանի երգերով: Ղրա բանաստեղծութեան առաջին ժողովածուն հրատարակուում է Մոսկվայում, 1887 թուին, երբ նա 23 տարեկան երիտասարդ էր: Բայց գրում էր նա դեռ պատանի հասակից, դեռ այն ժամանակ, երբ Ղազարեան ճեմարանի աշակերտ էր: Յովհաննէս Յովհաննիսեանի բանաստեղծութիւնը փոխանցման շրջանի բանաստեղծութիւն է: Իր սկզբնական գրութեանքների մէջ նա կրում է Ռաֆայէլ Պատկանեանի եւ Սմբատ Շահազիզի ազդեցութիւնը: Բայց այս ազդեցութիւնը կրելով հանդերձ նա գնում է նոր ճանապարհով, որի համար թէ բանաստեղծական մարտը տաղանդ ունէր եւ թէ գրական լուրջ պատրաստութիւն: Եթէ պատանի հասակում Յովհաննէս Յովհաննիսեան ծանաչում էր գլխաւորապէս հայ հրապարակախոս բանաստեղծներին, համալսարանական շրջանում սկսեց ծանաչել համաշխարհային բանաստեղծներին: Ղրան մտաշելի էին յուժեղ եւ լատինական դասական բանաստեղծներից սկսած մինչեւ գերմանական եւ ռուսական հին եւ նոր բանաստեղծները: Յովհաննէս Յովհաննիսեանի գրական գաստիարակութեան մէջ դեր կատարեցին այդ զանազանակերպ գրականութիւնները: Արտաւին ազդեցութիւնների մէջ անշուշտ ամենից նշանակելին էր ռուս գրականութեան եւ ռուս լեզուի ազդեցութիւնը, որին նա վաղ հասակից ընտելացել էր եւ որ նրան այնչափ համակրելի էր: Բայց շնայելով այս շեքով համակրութեան եւ շնայելով ռուս արուեստի կատարելալ իւրացման — Յովհաննէս Յովհաննիսեան մնաց խորապէս հայ բանաստեղծ, հայութիւնը

Հասկանալով ոչ թե քաղաքականապէս, այլ լեզուի, արուեստի, գրական նշանակութեամբ:

Իր ժողովրդի եւ իր լեզուի հետ նրա հոգեբանական կապը ուժեղ էր եւ ներքին: Նա հրապարակաբար չէր, ինչպէս էին նրա նախորդները: Քաղաքական խնդիրները չէին յուզում նրա պոեզիան: Բայց հայ ժողովրդի դարուոր ստեղծագործութիւնը եւ հայ երկիրը նրա բանաստեղծական հոգուն խորին յոյզեր էին հաղորդում: Եւ եթէ Նոր-Նախիճեանի բանաստեղծը երեւակայութեամբ քայլում էր «Մայր Արաքսի ափերով», Աղաբաշապատի երժանատի քերթողը սրտով ապրում էր հայրենի Արազի հետ, որ գալիս էր

Ժէ՛ն քարերին, ափին տալով...

Յովհաննէս Յովհաննիսեանի հետ սկսում է ոչ միայն նոր քնարական բանաստեղծութիւնը, հրապարակախօսական բանաստեղծութեան զարգացումից յետոյ, այլ եւ նրանով հինք է գրում մեր ժողովրդական բանաստեղծութեան:

Այսպիսով, արեւելահայ բանաստեղծութեան վախճանամայ տեւողութեան ընթացքում Յովհաննէս Յովհաննիսեան ներկայանում է այն փոխանցման կէտը, որով առաջին շրջանը վերջանում է եւ որից սկսում է երկրորդ շրջանը:

Այս երկրորդ շրջանի բանաստեղծութիւնը արդէն երեսուն տարի է ինչ գործիքին ունի: Ցարեր սերունդի եւ տարրեր տաղանդի մարդիկ լցնում են այդ բանաստեղծութեան ամբողջ բովանդակութիւնը: Բայց գրականութեան պատմութեան մէջ առանձնապէս բարձրանում են մի քանի բանաստեղծներ, որոնք ուժեղ անհատականութեամբ եւ գեղարուեստական տաղանդով բնորոշում են ընդհանուր տեսակը եւ որոնք իրարից հետու կանգնած հինգ կամ տասն տարով՝ պահում են իրենց երկերի մէջ արեւելահայ նոր բանաստեղծութիւնը:

Այդ բանաստեղծներն են Յովհաննէս Թումանեան, Աւետիք Խաչատրեան, Գեորգի Գեօրգեան, որոնք մի կողմից յաջորդում են Յովհաննէս Յովհաննիսեանին եւ միւս կողմից նախորդում են Ահա՛ն Տերեանին, որ այս երեսնամեակի վերջին տաղանդաւոր բանաստեղծն է:

Յովհաննէս Թումանեան ծնում է Յովհաննէս Յովհաննիսեանից հինգ տարի յետոյ, 1869 թուին, Լոսիի Գսեղ գիւղում: Գրականութեան մէջ երեւում է մտաւարպէտ ութնամեական թուականների վերջերում եւ իննամեական թուականների սկզբում: Թումանեան հարստացնում է քնարական բանաստեղծութիւնը, որ սկսած էր նրանից առաջ, բայց մանուանդ կարեւոր դեր է կատարում բանաստեղծական ընդարձակ գրուածքների — պոէմների մշակութեան գործում: Սմբատ Շահազիզի «Ղեւնի վիշաբ», որ պոէմի ձևով հրատարակուել էր 1865 թուին, բայց որ իրօք հրապարակագրական գործ էր — միակն էր մինչև այդ: Յովհաննէս Թումանեան գրեթէ

նոր և սկսում այդ գործը, ուստի մեծ բանաստեղծներ Լերմոնտովի և Գուչկինի ներշնչումով և միաժամանակ խորագիտ ինքնուրույն ձևով: Լերմոնտովը երգել էր հովհանսեան երգերի գեղեցիկութիւնները և լեռնային ժողովուրդների բարբր: Յովհաննէս Բուսմանեան երգում է Լուսիի շքնաղ բնութիւնը և այդ լեռնային ժողովուրդի կեանքը: Քնարական բանաստեղծութիւններից և պոեմներից դատ՝ Բուսմանեան գրական մշակութեան է եւթմարկում ժողովուրդական լեզուները, հեքիաթները և մեր հին վէպը — Մասուեցի Դաւիթը: Գրական այս միջոց մէջ նա որոշ ներշնչում է ստանում Ղազարոս Աղայեանից և ապիս է այնպիսի գեղարուեստական գործեր, որոնք ձեւի և բովանդակութեան կողմից հաւասարագիտ արժեքաւոր են և որոնք մեր գրականութեան լուսագոյն ստեղծագործութիւններից կը մնան միշտ: Յովհաննէս Բուսմանեան իր տաղանդը փորձեց նաեւ փիլիսոփայական և երգիծական պոէմների մէջ, որոնցից առաջինը — «Գեւոր Ընհունը» — գրուած է բանաստեղծական յուզումաւի արամաղբութեամբ և մի գեղեցիկ օրինակ է փիլիսոփայական բանաստեղծութեան:

Բուսմանեանից վեց տարի յետոյ, 1875 թուին ծնւում է Աւետիք Խասակեան, Շիրակի կենդրոնում, Ալեքսանդրապոլում, և առանձին գրքով երևան է գայիս մեր գրականութեան մէջ իննսուներկան թուականների երկրորդ կիսում: Աւետիք Խասակեան մեր քնարական բանաստեղծութիւնը զարգացնում է նշանակելի չափով: Այն, ինչ որ նրանից առաջ Յովհաննէս Յովհաննիսեան և Յովհաննէս Բուսմանեան չէին արել — անում է Շիրակի բանաստեղծը: Նրա փորձիկ երգերը արտայայտում էին ոչ միայն իր հոգու «մեծ վերքերը», այլ և այն ժամանակուայ երիտասարդութեան յոյզերն ու տագնապները: Աւետիք Խասակեանի երգերի մէջ խոսում էր մեր դաշտի և գիւղի ժողովուրդը: Եւ քանի որ այդ ժամանակ դաշտն ու գիւղը մեր սոցիալական-մտաւոր կեանքի կենդանական մտահոգութիւնն էր — նրա երգերի մէջ խոսում էր նաեւ մեր մտաւորական սերունդը: Ժողովուրդասիրական շրջանի և ժողովուրդական իդէալիզմի գրական, բանաստեղծական արտայայտութիւնն էր Աւետիք Խասակեան, որ այն ժամանակուայ սոցիալական հոգեբանութեան առանցքն էր ներկայացնում և որ մեծ չափով պայմանաւորեց նրա հաշակը:

Բայց Աւետիք Խասակեան չմնաց Շիրակի և Արագածի կախարդական միջավայրում: Երիտասարդ հասակից ուսել էր նա Գերմանիայում, կարգացել էր գերմանական և առհասարակ եւրոպական բանաստեղծներն ու փիլիսոփաները, որոնք նրան տարբեր ուղիներ մտանանշեցին: Եւ Խասակեան իր քնարական բանաստեղծութեան մէջ միաժամանակ արտայայտեց զժգոհ և որոնող հոգեբանութիւնը, որոշ չափով նիցէլիզմ՝ և սիմբոլիզմ, որ նրա արամած հոգուն պատշաճ էր գայիս այդ ժամանակ և որ նրա գործին բազմազանութիւն տուեց:

Քնարական բազմաուեսակ բանաստեղծութիւններից յետոյ և նրանց

Հետ միաժամանակ՝ Աւետիք Իսահակեան սկսեց մշակել նաև պոէմների գրահանութիւնը: Գրեց փիլիսոփայական պոէմ — «Աբու Ալա Մահարին», գրեց քնարական պոէմ — «Մանթաշի փէրին», վերջերս էլ գրեց վիպական պոէմ — «Սասնայ Մհեր», որոնք երկին էլ տարբեր ձևով գեղեցիկ են և որոնք նորնպես կը մնան մեր գրականութեան մէջ, ինչպես Յովհաննէս Թումանեանի գեղեցիկ գործերը:

Աւետիք Իսահակեանից քիչ յետոյ երևաց Գերենիկ Գեմիրճեան, որ ինքնատիպ բանաստեղծ է և որ տաղանդաւոր էջեր ունի ինչ քնարական բանաստեղծութիւնների և ինչ պոէմների մէջ: Մինչ Յովհաննէս Թումանեան և Աւետիք Իսահակեան երգում էին Հայրենի լեռներն ու ձորերը, գիւղն ու գաշաը, բնութիւնն ու երկիրը — և նրանց մէջ ապրող լեռնական ու գիւղացի ժողովուրդը — Գերենիկ Գեմիրճեան սկսեց երգել քաղաքների մէջ ապրող մարդու զգացումները: Անշուի և բովանդակութեան կողմից այդ բանաստեղծութիւնները որոշ չափով նորութիւն էին արեւելահայ գրականութեան մէջ և յիշեցնում են մասամբ այն հոգեբանութիւնը, որ նրանից յետոյ արտայայտեց Վահան Տերեան: Իր ճաշակաւոր և նորը քնարական բանաստեղծութիւններից զատ՝ Գերենիկ Գեմիրճեան ունի նաև մի քանի պոէմներ — «Կեանքի Տեսիլը», «Անկ Թխմո՛ւր», «Ոչ այն աշխարհի», «Սրբի Աշխիհը» — փիլիսոփայական, պատմական, քնարական շունչով, որոնցից առաջինը մասնաւորապէս ուշագրաւ է, իբրև գեղեցիկ փորձ՝ մեծ բնութիւնը և տիեզերքը երգող:

Արեւելահայ բանաստեղծական գրականութեան իրենց բաժին մասնակցութիւնը բերին նաև այնպիսի ոյժեր, որոնք արուեստի տեսակետից առաջնակարգ գրագետներ չեն, բայց որոնք այս կամ այն չափով դեր ունին ընդհանուր գործի մէջ: Յովհաննէս Կոստանեան, Շիրակից, որ Աւետիք Իսահակեանից առաջ երգել է ժողովրդական մտփոններ և որ որոշ տեսակետով նախորդել է նրան: Աւստ Գանուէլեան, Ազուլիացի, որ գրական գեղարուեստական լուրջ պատրաստութիւն ունէր և որ տուել է մտաւորական արժէքով բանաստեղծութիւններ ու պոէմներ: Ալեքսանդր Դաատուբեան, Զաքարիայից, որ մի ժամանակ յայտնի դարձաւ իբրև քաղաքացիական վշտի երգիչ և որ յաճախ կարգացում էր բեմերից: Յակոբ Յակոբեան, Գանձակից, որ գրեց աշխատասիրական երգեր և ինտրոմանեց Ադալեգրին: Հուշանիկ Կուրղինեան, Ալեքսանդրապոլից, որ աշխատասիրական բանաստեղծութեան տւելի յաղղօրինակներ տուեց և արտայայտեց 1905 թուականի յեղափոխութիւնը գրահանութեան մէջ:


Այսպէս Արեւելահայ բանաստեղծութիւնը վերջին երեսնամակի ընթացքում բազմա-եսակ գրողների միջոցով զարգացաւ և դարձաւ մեր քաղաքակրթական փայլուն նուաճումներից մէկը:

Այդ բանաստեղծութիւնը օգտուելով արտաքին գրականութիւններից — գլխաւորապէս ասուական և գերմանական, նաև ֆրանսական արուեստից

— Թաց խորապէս մեր կեանքին կապուած: Այդ բանաստեղծութեան կարեւոր ներկայացուցիչները ծնուած, մեծացած էին հայաշատ գաւառներում, սգաւուած էին այդ գաւառների մէջ պահուած հայ լեզուի եւ ժողովրդական արուեստի թանգագին գանձերից: Ազգարշապատը Բովհաննէս Բովհաննիսեանի միջոցով, Ղուին՝ Բովհաննէս Թումանեանի, Շիրակը՝ Աւետիք Խաւհակեանի, Ախալքալաքը՝ Աւհան Տերեանի եւ Գերենիկ Դեմիրճեանի, միւս վայրերը ուրիշների միջոցով գրականութեան տուին իրենց ունեցած կարեւոր քաղաքակրթական արժէքները:

Այդ բանաստեղծութիւնը արտայայտեց մեր սօցիալական զարգացման տարրեր շրջանները: Աւթուանական թուականներին կշմրածնական արամադրութիւնը, որ մասամբ երեւան եկաւ Բովհաննէս Բովհաննիսեանի բանաստեղծութիւնների մէջ: Իննսուանական-իննհարիւրական թուականներին մեր ժողովրդասիրական շրջանը, որ արտայայտուեց Բովհաննէս Թումանեանի եւ Աւետիք Խաւհակեանի բանաստեղծութեան մէջ: Քսաներորդ դարի առաջին տասնամեակին մեր աշխատաւորական արամադրութիւնը եւ հանրամարդկային զգացումները, որ երեւան եկան Աւհան Տերեանի, Շուշանիկ Կուրղինեանի բանաստեղծութիւնների մէջ տարրեր ձեւով եւ տարրեր տաղանդով:

Այսօր արեւելահայ բանաստեղծութեան վերջին շրջանի տաղանդաւոր բանաստեղծը — Աւհան Տերեան չկայ այլեւս: Նոր սերնդի համար հետաքրքրական եւ ուսանելի է, թէ ինչ տեղ էր գրաւում Աւհան Տերեան մեր գրականութեան մէջ եւ թէ ինչ է գրական-գեղարուեստական նշանակութիւնը այն ողբերգական բանաստեղծի, որ ապրեց պատմութեան մի մեծ շրջանում եւ որ մեռաւ այնքան վաղամամանակ:



ԲԱՆԱՍՏԵՂԺՆԵՐ ԻՐ ՍԵՐՈՒՆԻՆԵՐ

Վաճան Տերեան ներշնչուած բանաստեղծ է: Իր գրքի առաջին էջից մինչև վերջին էջը զգացում է բանաստեղծի յուզումը, անկեղծ շնչաւոր: Կրօնապաշտեցող երբեմն անհարմիր են, նրա արտայայտութիւնները յաճախ ցուցնում են երեսասարդ գրողի բնական սայթաքումները — բայց նա, մինչև անգամ այդ անտարժեք անվարձ արտայայտութիւնների մէջ, բանաստեղծ է միշտ: Ընթերցողը կարող է այս կամ այն պակասը մտանոնիչ անել, լիբոսի, պատկերների, արտայայտութիւնների տկարութիւն տեսնել, այս կամ այն ստանաւորը թող գտնել: Բայց շնայելով այդ բոլոր տեքնիքական և գրական թեւութիւններին՝ Վաճան Տերեան իսկական բանաստեղծի շունչ ունի, որ իր տկարութեան բոլորներին անգամ յոյզ է պատճառում և բանաստեղծական արամազրութիւն է հաղորդում:

Վաճան Տերեան քնարերգու բանաստեղծ է: Իր ստանաւորների մէջ ազգային տարրը, քաղաքացիական միշտը, ժողովրդական կեանքը բացակայում է: Կա նման չէ դամառ-բախտային, որ ազգային արամազրութիւնների երգիչ էր, Յովհաննէս Յովհաննիսեանին, որ քաղաքացիական վշտի պոետ էր: Արտշ տեսակէտից նման չէ նաև Յովհաննէս Թումանեանին և Բ. Լեւոնի Իսահակեանին, որ յաճախ ժողովրդական կեանքի բանաստեղծներ են:

Վաճան Տերեան զգացումների երգիչ է: Կրօն բանաստեղծութիւնների մէջ ցուցնում է մի մարդկային հոգի, մի վերաւոր և յուզումալի կեանք, որ խորապէս հոգեբանական է: Այս պարագան աւելի ևս բարձրացնում է նրա բանաստեղծական արժեքը և նրան դարձնում է հոգեբան-բանաստեղծ: Վաճան Տերեանի բանաստեղծութիւնների մէջ կարելի է կարգաւ մի պատանու, մի երեսասարդի հոգեկան ներքին տագնապները, սկզբնական ժամանակի յոյսերը, յետագայ ժամանակների յուսահատութիւնն ու մոայլը, և ապա ապաքինումն ու հաշտութիւնը: Այս հոգեկան կեանքը Վաճան Տերեան արտայայտել է զարմանալի գրաւիչ ազդանշով: Ընթերցողը չէ հետեւում նրան այն «առարկայական» հետադրրութեամբ, ինչպէս կը հետևէր մի անձնութիւն, օտար հոգու պատմութեան: Վաճան Տերեանի բանաստեղծութիւնների մէջ երգուած հոգեկան կեանքը սիրելի է մեզ, ընկեր է, բարեկամ է, և այնչափ մտերիմ է, որ կարծէք մեր խորքանշխարհի կեանքը լինի այն: Գրական և հոգեբանական այն կարողութիւնը, որով այդ կեանքը այնքան կենդանի է դարձել, այնքան ճշմարտապէս մարդկային կերպարանք է առել — Վաճան Տերեանի բանաստեղծական գաղտնիքն է: Իրրև բանաստեղծ՝ նա նկարագրած առարկային անմիջականութիւն է հաղորդում, պատկերների մէջ հոգի է դնում և ստանաւոր, անհատական ապրումները դարձնում է մարդկութեան ապրումներ:

Այսպէս է որ Վաճան Տերեան շլինելով ազգային արամազրութիւնների

երգիչ, ոչ էլ քաղաքացիական վշտի ու ժողովրդական կեանքի բանաստեղծ — այնուամենայնիւ խորապէս կապուած է հաւաքականութեան հետ: Արտաբանաստեղծութեան մէջ արտայայտուած են եւ մարդկային իդէալները, եւ հաւաքականութեան արամադրութիւնները եւ սոցիալական մտորումները:

Ղազան Տերեանի բոլոր որոնումները — իր ժամանակի երիտասարդութեան որոնումներն են: Բանաստեղծը երգում է ոչ միայն մի անհատական հոգու ներքին տաղանայներն ու խոհերը, այլ եւ իր սերնդի հաւաքական յոյզերը, ինչ որ նրա բանաստեղծութիւնը դարձնում է աւելի խորունկ եւ աւելի լայն: Ինչպէս մի տաղանդաւոր գեղագէտ, որ իր հերոսների պատկերացման մէջ կարողանում է անջատել մասնաւորը, պատահականը, ժամանակաւորը եւ տալիս է ընդհանուրն ու տիպիքականը — այնպէս էլ բանաստեղծը տալիս է իր հոգուց այն, որով նա նման է միւս մարդկիկներին եւ որով կապուած է մարդկութեան հոգուն: Մասնաւոր, պատահական զգացումները չեն, որ բանաստեղծին դարձնում են բանաստեղծ եւ նրա գործը՝ գեղարուեստական: Արքան բանաստեղծը շատ է կապուած մարդկութեան հետ իր լուսագոյն զգացումներով եւ որքան բանաստեղծական գործը արտայայտութիւն է այդ կապի — այնքան մեծ է բանաստեղծը եւ այնքան յարասեւ է նրա գործը:

Ղազան Տերեանի բանաստեղծութիւնը ոչ միայն հեղինակի, այլ եւ իր ժամանակի արամադրութեան արտայայտութիւնն է:

Ինչպէս որ արեւմտահայերի մէջ պետքս դուրեան արտայայտեց իր ժամանակը եւ դարձաւ նոր շրջանի ազդարար — այնպէս էլ արեւելահայերի մէջ Ղազան Տերեան եղաւ իր ժամանակակից սերնդի բանաստեղծը: Պետքս դուրեան արտայայտեց 70-ական թուականների հասարակական շրջումը՝ ֆրանսիական Եղեափոխութեան ազդեցութեամբ առաջացած: Ղազան Տերեան արտայայտեց 900-ական թուականների սոցիալական արամադրութիւնը, Ռուսական 1905 թուականի Եղեափոխութեամբ սկսուած, որ դիմում էր դեպի նոր Եղեափոխութիւնը, կամ իր բանաստեղծական խոսքով՝ «արեւածագը»: Պետքս դուրեանի հոգեբանութիւնը ֆրանսիական յեղափոխութեան եւ մեր այն ժամանակուայ առաջաւոր երիտասարդութեան հոգեբանութիւնն է: Ղազան Տերեանի հոգեբանութիւնը Ռուսական Եղեափոխութեան եւ մեր նոր սերնդի հոգեբանութիւնն է: Թէ այնտեղ եւ թէ այստեղ սոցիալական հոգեբանութիւնը եւ սոցիալական արամադրութիւնը երեւան է եկել բանաստեղծի անձնաւորութեան մէջ եւ ստացել է անհատական գունատրուած: Բանաստեղծը դարձել է այդպիսով այն կետը, որի միջից անցնում են միւս հոգիները կամ այն կենդանական առուն, որի մէջ թափուած են միւս վտակները: Եւ յայտն են միանում եւ ձուլւում միմեանց մէջ՝ մտայն եւ ամբողջը:

Թէ Պետքս դուրեանի եւ թէ Ղազան Տերեանի անձնաւորութիւնները պատմական անձնաւորութիւններ են, անշուշտ գրական իմաստով: Եւ նրանց գործերն էլ հաւաքականութեան խոսքած, կենդանի ու գեղեցիկ արտայայտութիւններն են՝ գրականութեան սահմանում:

Վաճան Տերեանի բանաստեղծութիւնը մեծ շարժով միայնութեան եւ որոնումների բանաստեղծութիւնն է: Այս տեսակետից եւս նա հոգեբանորէն նման է 900 ական թուականի սերնդին, որ իրեն տակաւին միացած չէր զգում մեծ ամբողջի հետ, որ ճամբաներ էր որոնում եւ որ տանջւում էր: Վրաստանի տանջանքը ժամանակի տանջանքն էր: Վրաս որոնումը — դարի որոնումն էր:

Վաճան Տերեան չէ մնում սակայն միայնութեան ամուլ տանջանքների մէջ: Իր հոգեկան ազնուանքի շրջանում նա խուսափում էր մարդկութիւնից, կամենում էր անզորութիւն գանել անապատական խաղաղութեան եւ հեռուոր լեռների մէջ: Բայց զա կը նշանակէր բացասումն իսկ մարդկային հոգեբանութեան եւ իր անզիմացրելի բնութեան: Եւ ինչպէս Զրադաշտը, որ սարից պէտք է վերագանար մարդկութեան մէջ, կամ քրիստոս, որ անապատից վերագարձաւ աշխարհ՝ պայքարելու եւ մեռնելու համար — այնպէս էլ Վաճան Տերեան չէ կարողանում փրկութիւն գանել միայնակեցութեան կամ ինքնաժխտումի մէջ: Բանաստեղծը զգում է, որ ինքը էականապէս սոցիալական ստեղծագործութիւն է եւ որ մարդկային հասարակութիւնից դուրս ոչ մի փրկութիւն չկայ: Այն խորհուրդները, որ պատում էին նրա գոյութիւնը անապատական շրջանում — վերագանում են մարդկութեան մէջ եւ մարդկային միջավայրում աւելի խորութիւն եւ աւելի գեղեցիկութիւն են ստանում:

Վր որոնումների շրջանում Վաճան Տերեան տիրութեան, թախիծի, կարօտի բանաստեղծն է: Ղա քննու չ է եւ մեղմ, հիւանդ է եւ թուլակամ: Իր վերագարծի շրջանում նա առոյգ է եւ ուժեղ, առոյգ է եւ հաստատակամ: Ընկերութեան, մարդկութեան ճակատագիրը նրան խորապէս զբաղեցնում է — եւ նա ներբողում է այն պայքարը, որով մարդկութիւնը հասնում է իր իղեալներին:

« Եկայ որ այստեղ, ձեզ համար այսօր
Հրեղէն խօսքեր կրոնեմ եւ խնդում,
Լսեմ յաղթական մարտի ցնծութիւն,
Տեսնեմ շարքերը ձեր հօգուածոր: »

Վր որոնումների եւ կարօտի բանաստեղծը դառնում է պայքարի բանաստեղծ: Բայց նա մնում է բանաստեղծ բառիս գեղարուեստական, կատարելալ առումով: Սոցիալական երջանկութեան գաղափարը, մարդկութեան բարբոսութիւնը, ժողովուրդների խաղաղութիւնը եւ աշխատաւոր դասերի ազատագրման խնդիրը նրան պրոպագանդիստ չեն դարձնում: Վրաս վերագարծի երգերը շչմարտիս բանաստեղծութիւններ են, աւելի անմիջական, աւելի կենդանի, աւելի ինքնաբերական, աւելի հաղորդական — եւ ուրեմն աւելի բանաստեղծական: Դուք տեսնում էք, որ այդտեղ աւելի ինքնուրոյնութիւն կայ, աւելի հզոր անհատականութիւն, աւելի բնականութիւն, քան որոնումների երգերի

մէջ, որտեղ գեղեցիկ տրամութեան եւ հիւանդոտ տազնասպներէ միջից լուսւմ են յաճախ արհեստական ձայներ, ձայներ, որոնք կրկնութիւն են, փոխառութիւններ են, նմանութիւններ են, եւ կամ պատանեկան անդոյն, անորոշ, տարտամ զգացումներ են:

Վաճան Տերեանի վերագործի երգերի մէջ աւելի հասուն բանաստեղծութիւն կայ եւ աւելի խորունկ իմաստութիւն: Ղեկուն այդտեղ աւելի պատկերաւոր է եւ աւելի ծօխ, ոճը աւելի բնորոշ է, արտաբայութիւնները աւելի ուժեղ եւ անհաստական — եւ ամբողջ բանաստեղծութիւնը աւելի համարձակ յղացուած եւ աւելի վտաճ կերտուած: Վաճան Տերեանի այդ բանաստեղծութիւնները լուսադոյն օրինակն են, թէ ինչպէս կարելի է երգել աշխատաւոր դասերի ազատագրութիւնը, երգել պոլշքարը, յաղթութիւնը — եւ լինել միաժամանակ քնարերգու բանաստեղծ, մարտի բանաստեղծ: Արտհետեւ գժուար է մտածել, թէ ինչու սերը, տանջանքը, անհաստական տրամութիւնը կարող են նիւթ դառնալ բանաստեղծութեան, իսկ մարդկային իրէպնները, սոցիալական լայնարձակ կեանքը, աշխատաւորի յախտեմական աւելզումածը չեն կարող ունենալ իրենց բանաստեղծ-արուեստագէտը:

Վաճան Տերեան ցոյց տուեց, որ բանաստեղծի անձնաւորութիւնը մի միակողմանի, անանդական զիրք չէ, որտեղ միայն կեանքի մէկ մասն է արձանագրուած: Նա ցոյց տուեց, որ բանաստեղծը իրրեւ կենդանի մարդ եւ իրրեւ ընկերային էակ կարող է եւ պէտք է իր հոգու մէջ բովանդակ կեանքը ցուցնի — եւ անհաստական վիշտն ու կարտը, եւ մարդկային իրէպնները, եւ պայքարն ու մարտը, եւ յաղթութիւնն ու փառարանութիւնը: Այստեղ էլ, ինչպէս իր նիւթի ընտրութեան մէջ, մասնաւոր չէ, որ նրան հետաքրքրում է եւ նրա բանաստեղծական զեմքը բնորոշում, այլ ընդհանուրը եւ ամբողջը...

Վաճան Տերեան դուրս գալով մեր գաւառից՝ ունի իր մէջ հայ ժողովրդական լեզուի ոգին ու բոլորը: Միաժամանակ պահում է նա իր մէջ բազմատեսակ տպաւորութիւններ մեր երկրից եւ մեր միջավայրից: Իր երկիրը եւ իր ժողովրդին սիրում է նա բանաստեղծական անխորդախ եւ ազնիւ սիրով: Իր երազներէ մէջ նա պատկերացնում է ոչ միայն այսօրուան երկիրը, այլ եւ այն, որ հազարաւոր տարիներ առաջ նախորդել է մեզ — երկիր Նախիրն: Մեր երկրի պատմութիւնը, գրականութիւնը, բարքերը, հոգեբանութիւնը, խոսուածքը Վաճան Տերեանի բանաստեղծական անձնաւորութեան մէջ կենդանի են միշտ:

Բայց այս բոլորը նա ունի իրրեւ զգացում, իրրեւ հոգեբանական եւ գեղարուեստական ձգտում — եւ ոչ իրրեւ նեղմիտ ու նեղսիրտ քաղաքականութիւն: Եւ ունենալով այդ՝ նա կապում է մի մեծ կեանքի հետ, որ ապրում էր մեր մտ, որ խորագէտ ազնիւ էր եւ որ տանում էր նրան զեպի

ընդհանուր մարդկութիւն: Ղազան Տէրեան սիրեց ուսն երկիրը եւ ուսն ժողովրդին: Մտերեց նրա լեզուն եւ նրա խորունկ գրականութիւնը: Եւ այդ սիրոյ ու ճանաչման մէջ նա մշակեց իր ունեցածը, իր հայրենականն ու տեղականը, որ մեծացաւ այդ ազգեցութեան տակ եւ մեր գրականութեան համար ոչքան արժեքաւոր գործեր արտադրեց:

Ղազան Տէրեան մի սերնդի ներկայացուցիչ է, որ դուրս է գալիս ազգային եւ տեղական նեղ շրջանակից եւ որոնում է հոգեկան եւ բարոյական կապեր՝ միւս ազգերի եւ ընդհանուր մարդկութեան հետ: Բանաստեղծը այդ կապի մէջ տեսնում է ոչ միայն մարդկային իդէալ, այլ եւ յարասեւութիւնը Նաիրի երկրի, այլ եւ կենսամակութիւնը այն ժողովրդի, որից ելած է նա եւ որի քաղաքակրթութեան նուիրումն է քերթողական իր կոչումով:

Ս. Մ. Ճանապարհի վրայ նա անշուշտ որոշ ներշնչումներ ստացել է մեր միւս բանաստեղծներից — Թումանեանից, Իսահակեանից — բայց իրրեւ նոր ժամանակի եւ նոր սերնդի մարդ՝ նա կարողացաւ այդ մասը արտայայտել աւելի ազատ եւ մանաւանդ աւելի հաւատարմով:

Ղազան Տէրեան մեր բանաստեղծութեան մէջ մտքեց քաղաքի նոր հոգեբանութիւնը: Ներք ծնուել էր գիւղում, բայց անուելով եւ զարգանալով քաղաքում՝ տեսաւ որ քաղաքները մարդկութեան միութեան եւ եղբայրութեան խնդրում բացառիկ դեր են կատարում: Ս. Մ. պարագան ոչ թէ անշուշտ Ղազան Տէրեանի ենթակայական նախասիրութեան հետեւանք էր, այլ անտեսական նոր կարգերի արգասիք էր, որ փոխում էր բարքերը եւ հոգեբանութիւնը, յեղաշրջում էր իդէալները եւ մարդկութեան առջեւ նոր ուղիներ էր բաց անում: Եւ այնտեղ, որտեղ հին գրագէտները շին կարողանում բանաստեղծութիւն երեւակայել — Ղազան Տէրեան ամենամաքուր ներշնչումներ ունեցաւ եւ ազնիւ բանաստեղծութեան օրինակներ տուեց: Մենք գիտեմք, որ գիւղը, արտը, գաշտը, լեռը բանաստեղծութիւն ունին: Բայց մենք չգիտեմք, որ փողոցը, մայթը, ճաշարանը, գործարանը շոյնդէս ունին իրենց բանաստեղծութիւնը, որ տարրեր է առաջինից, բայց որ թերեւս աւելի խորունկ եւ աւելի նուրբ է: Արտհետեւ այնտեղ ազրում է մի մարդկութիւն, որի զգացումները քաղաքակրթութեան ու պրոգրէսի յարասեւ ազգեցութեան տակ նրբացած ու խորացած են:

Ղազան Տէրեան իրրեւ նոր հոգեբանութեան եւ նոր սերնդի տաղանդաւոր ներկայացուցիչ ունեցաւ շատ հեռուորդներ, որոնք սկսեցին երգել նրա ձեւերով, յանախ նրան անմիջապէս նմանեցնելով: Նոր սերնդի երկրասարդ գրողներն են նրանք, որոնք մինչեւ այժմ շքերազանեցեցին Ղազան Տէրեանին, բայց որոնք նպաստեցին նրա ժողովրդականացման:

Վ Ղազան Տէրեան հեռացաւ մեզանից այնպիսի մի բուն ժամանակ, երբ մտքերը եւ զգացումները յեղաշրջուած են իրենց խորքի մէջ, երբ նոր կեանքի հետ միասին կերտուած է նոր լեզու, նոր բանաստեղծութիւն, նոր գրականութիւն: Նա եղաւ այդ նոր բանաստեղծութեան տաղանդաւոր ազգաբարբը: Նրա

ուղին մնացել է այսօր թափուր եւ նրա տեղը եղբրականօրէն բաց մեր գրահանութեան մէջ:

Բայց այն դերը, որ բանաստեղծը կատարել է՝ կը մնայ միշտ, եւ կը դասանայ պատմական՝ իր սերնդի եւ իր ժամանակի նման:

III.

Կ Ե Ե Ն Բ Ը Ե Ի Մ Ի Զ Ե Կ Ե Բ Ը

Վահան Տերեան, իսկական անունով Վահան Տէր-Գրիգորեան, ծնուել է Եւտայքալաբի Գանձա գիւղում, 1885 թուականին, գիւղական քահանայի ընտանեկում: Գիւղը ջաւախքի գեղատեսիլ եւ բարձրագիր վայրերից է, շրջապատուած սրանչելի արօտներով, հեքիաթական փարվանայ լճից ոչ հնուս: Իր սկզբնական տարիներն անց է կացրել նա մի այգոյսի բնական միջավայրում, մեծ քաղաքների ժխտից հեռու, մի ժողովրդի մէջ, որ ունէր իր ուրոյն գեղջը եւ որ խօսում էր կենդանի, ուժեղ, պատկերաւոր հայերէն:

Հայրը մեծ կրթութիւն չունէր, բայց ինքնաշխատութեամբ բաւական բան էր սովորել եւ կարողանում էր կարգալ ոչ միայն հայերէն, այլ եւ ռուսերէն: Իր զաւակներին նա ամեն կերպ աշխատել է ժամանակի պահանջած կրթութիւնը տալ: Մանկական տարիներում նրանց ուսման հոգսը վերցրել է իր վրայ, բայց երբ մեծացել են ուղարկել է մասաւոր կենդրաններ, միջնակարգ եւ բարձրագոյն կրթութեան համար: Վահան Տերեանի երեք եղբայրները սովորել են Թիֆլիսի գիմնազիումում եւ Ներսիսեան դպրոցում: Իսկ ինքը բաւական վաղ հասակից ուղարկուել է Մոսկվա, ուր եւ սովորել է Ղազարեան ճեմարանում:

Ղազարեան ճեմարանը Վահան Տերեանի մասաւոր դաստիարակութեան կենդրոնական վայրն է դառնում: Այդտեղ նա սովորում է ոչ միայն ռուսերէն, այլ եւ հին ու նոր հայերէն: Չէ կարելի ասել, թէ հայերէնի դասուանդութիւնը Ղազարեան ճեմարանում բաւարար բարձրութեան վրայ է եղել: Այն պատանիները, որոնք ծագում էին ռուսախօս ընտանեկներից՝ Ղազարեան ճեմարանի մէջ աշակերտելով երկար տարիներ՝ շատ աննշան բան էին սովորում: Բայց այն պատանիները, որ ծագում էին հայկական գաւառներից եւ որոնք գիտէին իրենց գիւղի յաճախ շատ պատկերաւոր ու արտայայտիչ լեզուն՝ Ղազարեան ճեմարանում կարողանում էին մշակուել եւ կատարելագործուել: Այդ շրջանում ճեմարանի հայոց լեզուի դասատուն էր Կա-

բազեա Կուսիկեան, որ շէրքեզախոս ծագում ունէր, բայց որ տարիներէ աշխատանքի գնով կարողացել էր սովորել մեր լեզուն եւ որ դրում էր բաւական կանանաւոր ու սահուն հայերէն: Լազարեան ճեմարանի նախկին սաների տեղեկութիւնների համաձայն՝ Կարապետ Կուսիկեանը աշակերտների սիրելի ուսուցիչն էր, որ հասկանում էր պատանիներին եւ որ ամեն կերպ աշխատում էր աջակցել նրանց կրթութեան գործին:

Վահան Տէրեան Լազարեան ճեմարանի մէջ ունեցաւ շատ ընկերներ, որոնք գնացել էին Մոսկ֊ա մեր երկրի դանազան կողմերից եւ տարել էին իրենց հետ դանազան բարքեր ու բարբառներ: Գպրոցական կրթութիւնից դատ եւ նրանից աւելի՝ այս միջավայրն է, որ խորապէս դաստիարակիչ է: Այդ ընկերների թուի մէջ կային երկուսը, Յոլակ Նանդազեան եւ Պողոս Մակինցեան, որոնց հետ Վահան Տէրեան շատ մտերիմ եղաւ ոչ միայն գպրոցական շրջանում, այլ եւ համալսարանում, այլ եւ այնուհետեւ կեանքում եւ գրական ստղարիզում:

Գպրոցական շրջանում Վահան Տէրեան եղել է — իր ընկերների տեղեկութեան համաձայն — շատ ընդունակ եւ ընթերցասէր աշակերտ: Բացի դաստարանական աւարկաներից եւ յաճախ նրանցից շատ աւելի՝ Վահան Տէրեան գրազոււմ էր բազմատեսակ գրքերի ընթերցանութեամբ: Կարգում էր նա գրական, պատմական, սոցիոլոգիական աշխատութիւններ: Այդ ժամանակուայ Ռուսաստանի քաղաքական եւ սոցիալական շարժումները մասնաւորապէս շատ էին ազդում վերջին տեսակի ընթերցանութեան վրայ: Աշակերտները եւ ուսանողները — ինչպիսի գիտութեան էլ հակում ունենային — ընկերարանական եւ քաղաքական աշխատութիւնները ընդհանրապէս աւելի էին կարգում, որովհետեւ այդպէս էր պահանջում կեանքը եւ պատմական վայրկեանը:

Վահան Տէրեան 18—19 տարեկան տպաւորուող պատանի էր, երբ Ռուսաստանի կենդրոնական քաղաքներում տեղի էին ունենում ուսանողական շարժումներ, բանուորական գործադուլներ, սոցիալական խռնուածներ, որոնք զարմանալի կերպով էլէքտրականացնում էին միմտղորդը եւ ազդում էին երիտասարդ սերնդի վրայ: Քսան տարեկան էր նա, երբ տեղի ունեցաւ 1905 թուականի Յեղափոխութիւնը, որի հետ այնքան մեծամեծ յոյսեր էին կապուած եւ որ առաջին ցույցն էր նետում դարերի միութեան մէջ:

Իր գասընթացը Լազարեան ճեմարանում տարտում է նա փայլուն կերպով 1906 թուին, որից յետոյ մտնում է Մոսկ֊այի համալսարանը՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար:

Համալսարանում ընտրում է նա պատմա-լեզուաբանական ճիւղը, որ աւելի էր յարմարում իր բնոյթին եւ իր գրական հակումներին: Լուրջ կերպով նուիրում է նա գիտութեան եւ գրականութեան: Կարգում եւ ուսումնասիրում է հայոց հին եւ նոր, արեւելեան եւ արեւմտեան գրողներին: Ռուսուսուսիրում է Ռուսաց ընդարձակ գրականութիւնը իր բազմազան ճիւղե-

րով, բանաստեղծներին, միպասաններին, քննադատներին, ինչպէս եւ ընկերաբան գրողներին: Հետեւում է նաեւ եւրոպական գրականութեան — գերմանական, ֆրանսիական, անգլիական, սկանդինաւեան գրողներին, որոնց մէջ սիրում է Հաուսպաններին, Շնիցլերին, Վերլէներին, Վերհարըներին, Օսկար Ուայլդին, Կիտա Համսունին: Եւ յս հեղինակներից առանձնապէս սիրում էր Վերլէներին, որին կարդանում էր կարգաւ ֆրանսիական բնագրի մէջ եւ որից որոշ շրջանում բաւական ուժեղ ներշնչում ստացաւ: Բացի գեղարուեստական գրականութիւնից կարգում էր նաեւ փիլիսոփայական գրուածքներ — Սպինոզա, Կանտ, Հեգել, Նիցշէ: Կարելի է ասել, որ նոր ժամանակի գրականութեան նկատմամբ Վաչան Տէրեան լայն եւ բազմակողմանի ծանօթութիւններ ուներ:

Բայց նրա ծանօթութիւնը միայն նոր գրականութեամբ չէր սահմանափակում: Նա գիտէր նաեւ հին գրականութիւնը — լատինական եւ յունական գրողներին: Լատինական լեզուի գիտութիւնը նրան հնարաւորութիւն էր տալիս լատին բանաստեղծներին կարգաւ բնագրի մէջ: Բանաստեղծ Աւետիք Իսահակեան իր մի նամակի մէջ, ուրիշ հետաքրքրական տեղեկութիւնների հետ միասին, հաղորդում է մեզ, որ Վաչան Տէրեան թարգմանել է լատինական բնագրից Էրազմի «Յիմարութեան գովեստը», որ սակայն մինչեւ հիմա չիացել է անտիպ:

Բացի լեզուական եւ գրական այս բազմակողմանի ծանօթութիւններից՝ Վաչան Տէրեան գիտէր նաեւ մեր հարեւան վրաց ժողովրդի լեզուն եւ գրականութիւնը: Պետերբուրգի համալսարանում առանձնապէս հետեւել է նա յայտնի գիտնական Նիկողայոս Մարրի հայկարանութեան եւ վրացագիտութեան դասերին: Վրացերէն բնագրից թարգմանել է նա Շոթա Ռուսթավելու հին պոէմը, հաշակատը «Ղնննաւորը», եւ թարգմանել է շատ յաշող, որպէս մեզ հաղորդեց պրոֆեսոր Մարր՝ 1920 թուի Գեկտեմբերին Վիննայում գտնուած միջոցին: Եւ յդ թարգմանութիւնը եւս, որ Մարրի կարծիքով շատ անզ միջում է բնագրի հետ, մինչեւ այժմ չիացել է անտիպ:

Վաչան Տէրեան շատ վաղ հասակից սկսել է ոտանաւորներ գրել: Առաջին անգամ 1905 թուին, երբ նա քսան տարեկան երիտասարդ էր, իր ձեռագիր ոտանաւորների տետրակը ցրց է տալիս Աւետիք Իսահակեանին: Բանաստեղծը կարգում է տետրակը եւ անկեղծ կերպով խրախուսում է նրա գեղատի հեղինակին: Նշմանալի վերաբերմունք ցրց է տալիս նրան մեր միս առաջնահորդ բա աստեղծը, Յովհաննէս Թումանեանը: Վաչան Տէրեան իրապէս ոգեւորում է այս երկու անուանի բանաստեղծների եղբայրական վերաբերմունքից, որովհետեւ ինքն էլ մեր գրականութեան մէջ բարձր էր գնահատում Թումանեանի եւ Իսահակեանի տաղանդը:

Քսաներէք տարեկան հասակում, 1908 թուականին, Վաչան Տէրեան հրատարակում է իր բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն, «Սկնշաղի Անուշենի», խորագրով: Նոր բանաստեղծը անմիջապէս աչքի է

ընկնում: Գրական շրջաններում խոսում են նրա մասին և Նիկողայոս Ազրա-
լեան մի համակրական յոգուած է հրատարակում Բիֆֆիսի «Չանգակ»
թերթում, նրա երևումը ընթացիկս ուղղունելով¹:

1912 թուականին Մոսկվայում հրատարակում է իր բանաստեղծու-
թիւնների երկրորդ ժողովածուն, որ մի ընդարձակ հատոր է, գեղեցիկ տպա-
գրութեամբ, և որի մէջ մտնում են Միմընայի Անուրները իբրև մի գլուխ
ամբողջութեան մէջ:

Այնուհետև Աւահան Տէրեան առանձին հատոր չի հրատարակում,
բայց շարունակում է միշտ նոր էջեր արտագրել, որոնց մի մասը տպագրուած
է զանազան պարբերականների մէջ, բայց մեծ մասը — և որքան գիտենք
կարելոր մասը — մնացած է անտպ:

Իր բանաստեղծութիւններից զուրս Աւահան Տէրեան գրադուած է նաև
հրատարակչական գործով: Մոսկվայում Յուլի Խանդազեանի, Պողոս Մա-
կինցեանի, Ալեքսանդր Մեանիկեանի ինչպես և Կարեն Միքայելեանի հետ
հրատարակում է «Գարուն» պարբերական գիրքը, որ ունեցաւ երեք խոշոր
հատոր — առաջին երկուսը գրական, իսկ երրորդը քննադատական բովան-
դալութեամբ:

«Գարունը» թէ գրական և թէ քննադատական տեսակէտից մեր մէջ
նոր հոսանք մտցրեց, աշխատելով լուսարանել մեր կեանքն ու գրականու-
թիւնը նոր սկզբունքներով, արտայայտելով նոր սերնդի գրական — մասամբ
և — սոցիալական դաւանանքը:

Հայերէն հրատարակչական գործից զատ՝ Աւահան Տէրեան և իր ըն-
կերները նպասակ դրին ծանօթացնել հայ գրականութիւնը ուս հասարա-
կութեան: Այս գերը կատարեցին նրանց միջոցով և նրանց աշակցութեամբ
ուս գրողներ — բանաստեղծական մասը յայտնի բանաստեղծ Աւարի
Բրիւսովի, իսկ արձակը Մարտիո՛ Գորկու գլխաւորութեամբ: Առաջին անգամ
ուսական գեղեցիկ թարգմանութեամբ լոյս տեսան մեր բանաստեղծութիւն-
ները՝ սկսած հնագոյն ժամանակներից և մինչն դարերից՝ մինչև նորագոյն
բանաստեղծները: Աւարի Բրիւսով Գուսաստանի և Կովկասի գլխաւոր քա-
ղաքներում գրական դաստիարակութիւններ է կազմակերպում՝ նուիրուած հայ
գրականութեան և բանաստեղծութեան, կարգաւով իր և ուրիշների արքան
հարողատ թարգմանութիւնները: Գուս ընթերցող հասարակութիւնը —
ուս մասերականների իսկ արտայայտութեամբ — ծանօթանում է այնպիսի
գրական գանձերի հետ, որոնք կարող են պատիւ բերել քաղաքակրթական
ամենամեծ ժողովրդին: Հայ բանաստեղծները — Յովհաննէս Բուսանեան,
Աւետիք Իսահակեան, Աւահան Տէրեան — ուսական ամբիտնից յայտարարում
են իբրև մեծ բանաստեղծներ, որոնց գործերը կարող են յուզել ոչ միայն
իրենց փոքրիկ ժողովրդին, այլ և ուս մեծ ժողովրդին: Մեր գրականութեան

¹ «Չանգակ», Թիֆլիս, 1908 թ., Ելուխ 19 և 2:

պատմութեան համար նշանակալից օրեր կը մեան այդ օրերը, երբ ուսական մեծ աշխարհում յայտնի դարձաւ, որ «սիրուող» փոքր ժողովուրդը կարող է իր քաղաքակրթական արժեքներով նստել ուսու ժողովրդի կողքին, երբ Ռուսաստանի անուանի բանաստեղծը եղբայրօրէն ողջագուրուեց Բագուի, Քիֆ-լիսի, Կրեւանի ամբիօնի վրայ Յովհաննէս Յովհաննիսեանի, Յովհաննէս Թուսանեանի եւ Վահան Տէրեանի հետ, իրրեւ հաւատարը հաւատարի հետ:

Վահան Տէրեանի եւ իր ընկերների աշխատանքը այս փոխադարձ ծանօթութեան գործում շատ նշանակալից է եղել:

Իր բանաստեղծական եւ գրական աշխատանքներից զատ՝ Վահան Տէրեան գրադուել է նաեւ հասարակական եւ քաղաքական գործերով: Եղել է մեր գաւառներում եւ գիւղերում պրօպագանդիստի պաշտօնով: Ելալի է ժողովրդի մէջ իր հայրենի քաւախքում, Շիրակում, Արարատեան դաշտում: Այդ շրջանների բնութիւնը եւ ժողովրդական կեանքը անծանօթ չեն Վահան Տէրեանին, որ այն արտայայտել է անուղղակի կերպով իր բանաստեղծութեան մէջ:

Իր քաղաքական աշխարհահայեացքով մինչեւ 1906 թուականը եղել է դաշնակցական, այնուհետեւ յարել է Յոջիալ-դեմոկրատիային, մտանալով նրա ձախակողման թեւին: Ռուսաստանի մեծ Յեղափոխութեան ժամանակ եղել է արդէն համոզուած կոմունիստ, եւ այդպէս էլ մնացել է մինչեւ իր վաղաժամ մահը: Քաղաքական եւ սոցիալական այս բնաշրջումը սեղի է ունեցել մեր կեանքի աւարկայական զէպքերի ազդեցութեան տակ, լինելով հետեւանք մեր հասարակական զարգացման եւ մեր պատմական պրօգրէսի, որ սերտ կերպով կապուած էր մեր հարեւան Ռուսաստանի հետ: Կոմունիզմին նա յարեց ոչ միայն իրրեւ բանաստեղծ, հետեւելով աշխատաւոր ժողովուրդների դարաւոր իդէալին, այլ եւ գիտակցարար, կարգալով եւ բուսամասիթելով կոմունիստական ընկերաբանական գրականութիւնը: Այս ուսումնասիրութեան ընթացքում թարգմանեց Անիմի յայտնի գիրքը՝ «Государство и Революция» («Պետութիւն եւ Յեղափոխութիւն»), որ հրատարակուեց նրա մահից յետոյ Ալեքսանդր Մեանիկեանի նախաբանով:

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետոյ Վահան Տէրեան մասնակցութիւն ունեցաւ Խորհրդային կառավարութեան գործերին, եղաւ Բրեստ-Լիտովսկում հաշտութեան բանակցութիւնների ընթացքում, աշխատելով պաշտպանել Կովկասի եւ Հայաստանի շահերը, ընդդէմ Թիւրքական նուաճողական քաղաքականութեան: Քիչ յետոյ եղաւ հայկական գործերի Կոմսարի փոխանորդ, վարելով իրապէս Խորհրդային Ռուսաստանի սահմաններում գտնուող հայութեան հանրային բոլոր գործերը: Այդ շրջանի նրա գործունէութիւնը հակառակորդ կուսակցութիւնների խուերում խիստ քննադատութեան տեղի տուեց: Ճշմարտութիւնը հարկադրում է սակայն խոստովանել, որ նա ծառայեց հայ ժողովրդին անկեղծաբար, սիրով եւ անձնուիրութեամբ: Միայն թէ հայ ժողովուրդ ասելով՝ նա հարեւում էր նրա աշխատաւոր, գոր-



A II 31948

1043

1079

502

26661



ծառք, շքանք տարրերը՝ եւ իր գործունեութիւնը առաջ էր տանում այնպէս, որպէս թեւազրոււմ էր իր աշխարհաստեղծութեանը: Մասնաւորապէս, խորհրդային կառավարութեան մտաւնեցած իր դիրքի շնորհիւ, նա կարողացաւ արեւմտահայ գաղթականների համար նշանակելի աշակցութիւն ստանալ եւ այդ աշակցութիւնը իրագործել անձամբ, անցնելով Հիւսիսային Կովկաս, կտրելով չափազանց վտանգաւոր վայրեր: Հայ աշխատատեղի ժողովրդի փրկութիւնը եւ զարգացումը, ոչ միայն Կովկասի սահմաններում, այլ եւ Արեւմտեան Հայաստանում — նա տեսնում էր յեղափոխական Ռուսաստանի յաղթութեան մէջ: Եւտազայի դեպքերը ցոյց տուին, որ այդ նուրբ քնարերգութեամբ տեղի աւելի ճիշտ էր հասկացել մեր կեանքի հիմնական պարզեմը եւ աւելի համարձակութեամբ էր հետեւում պատմական, անհրաժեշտ ուղին:

Չահան Տերեան Եւրոպայի ժողովրդի տարիներում կատարեց իր քաղաքացիական պարտականութիւնը եւ մեռաւ հերոսի նման: Իր կատարելապէս գեղարուեստական բանաստեղծութիւնների մէջ նա մտրգարեացել էր գալիք փոթորիկը, եւ երբ այդ փոթորիկը եկաւ, նա զգաց, որ նա պիտի մաքրի, զտի մեր ախտաւոր հասարակարգը եւ երջանկութիւն պիտի բերի յեանորդ սերնդին:

«Այս աղմկահիւս կեանքի խենթ բոցում
Այրում է սիրտս սրբազան մի դող,
Յուզում է հոգիս մի վե՛ր հիւսցում,
Եւ սարսափելին թում է դիւթող . . .»

Ուզում եմ վաղուայ ցնծութեան զուշակ,
Կարօտս նետած լուսեղէն հեռուն,
Վառել երգերս որպէս դոշակ,
Ու մեռնել, որպէս հերոսն է մեռնում . . .»

Մեռաւ նա Եւրոպայի ժողովրդի տարիներում, Օրէնքուրդ քաղաքի մտ, 1919—1920 թուի ձմեռան, մի հեռաւոր ու անձանթ վայրում, ինչպէս ցանկացել էր իր մի բանաստեղծութեան մէջ:

« . . . Իմ գերեզմանը թող լինի հեռում,
Ուր մահացել են շուկ, երգ ու ծայն.
Թող շուրջս փութի անանց լուսիւն,
Թող ինձ շիշեն, թող ինձ մոռանան . . .»


Քաղաքական դժբախտ պարագաների բերումով մեր երկիրը եւ մեր ժողովուրդը չկարողացան ժամանակին իրենց վշտակցութիւնը եւ իրենց երախտա-

գիտական համակրանքը բերել բանաստեղծի աճիւնին: Նա թաղուեց «անլաց»,
«լուսթեան» մէջ:

«... Ինձ անլաց թաղեցէք, ինձ անխօս թաղեցէք,
Լուսթիւն, լուսթիւն, լուսթիւն, անստաման...»

Բայց այսօրուայ սերունդը գիտե արդէն, որ Վահան Տէրեան եղել է նրա հոգեկան որսուսիների, նրա բարոյական եւ մտաւոր ապրումների սքանչելի բանաստեղծը:

Եւ որովհետեւ նա ներկայացրել է մի պատմական շրջան, եւ ներկայացրել է մաքուր, անխառն արուեստով — Վահան Տէրեան կը մնայ այդպէս, նաեւ յետնորդ սերունդների համար:



IV.

Ա Ջ Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ո Ւ Ն Ն Ե Ր

Այլ եւս կտակած չէ վերցնում այն գաղափարը, որի համաձայն շրջապատող կեանքը խորին ազդեցութիւն ունի բանաստեղծների վրայ: Բանաստեղծական տաղանդը, ուրան էլ նա բնածին լինի, իր կենսական ճանապարհի ընթացքում յաճախ շատ նշանակալից սոցաւորութիւններ է ստանում եւ յաճախ համաձայն այդ սոցաւորութիւնների՝ այս կամ այն ձևէն է ընդունում: Ինչքան բնաւ չգիտենք եւ կրքէք էլ չենք կարող գիտենալ, թե ինչպէս կը լինէր ընկածին տաղանդն ինքն իր մէջ, քանի որ մարդկային արժեքները կրեւան են գարխ միայն կեանքում եւ կեանքի բազմաստեղծ ազդեցութիւնների ներքոյ: Ինչ որ մենք գիտենք, այն տաղանդն է, որ սնոււմ եւ մեծանում է որոշ միջավայրում, որ պատրաստոււմ է աստիճանաբար մարդկային ընկերութեան մէջ:

Չենք ուզում քննութեան տանել այն բնագանցական եւ աւելորդ խրնդիրը, թե արուեստագէտի որ շափը բնածին է եւ որ շափը արտաքին աշխարհի շփման մէջ զարգացած: Ընկերաբանական, պատմական եւ հոգեբանական գիտութիւնները չեն կարող առարկայական մեթոդով եւ մանուանդ գիտական արժեքով բուծել մի այդպիսի ինդիւս: Ինչ որ գիտութիւնն ասում է հաստատ կերպով, այն է, որ մարդիկ ծնոււմ են ֆիզիքական եւ բարոյա-

կան որոշ տուեալներով: Եւ ինչ որ միւս կողմից գիտութիւնն ստում է, այն է, որ այդ տուեալները ձեւաւորում եւ արժէք են ստանում յետոյ:

Եթէ մենք բնածիրը ինքն իր մէջ չենք կարող առարկայապէս պատկերացնել, գրա փոխարէն կարող ենք տեսնել եւ գնահատել այն ազդեցութիւնները, որ արուեստագէտն ստանում է իր ծնուած օրից մինչեւ իր զարգացումն ու կատարելագործումը:

Գրականութեան համար, եւ մանաւանդ գրականութեան պատմութեան համար, այս վերջինն է առարկայորէն հնարաւոր, եւ ուրեմն այդ վերջինն է արժէքաւոր:

Վասն Տէրեանի կենսագրական համառօտ ուրուագիծը մեզ կարող է որոշ ուղեցոյց լինել, քննելու համար այն խնդիրը, թէ ինչ ազդեցութիւնների մէջ մեծացաւ եւ զարգացաւ այդ տաղանդաւոր բանաստեղծը: Ընչուչա չէ կարելի Վասն Տէրեանի բանաստեղծական ամբողջ արժէքը ներկայացնել այսօր, քանի որ նրա գործը ժամանակի ընթացքում, յետագայ երեւոյթների ուղղութեամբ նորանոր ձեւով կարող է երեւան գալ: Առաւել եւս չէ կարելի նրա բանաստեղծական գործի վրայ եղած ազդեցութիւնների մասին շատ թէ քիչ կատարել կերպով խօսել այժմ: Յետագայում, Վասն Տէրեանի ամբողջական կենսագրութեան հրատարակութեան հետ միասին, այս խնդիրը կարող է կարելու փոփոխութեան ենթարկուել: Բայց ընդունելով հանդերձ այդ փոփոխութիւնները եւ վերնապէս բաղձալով հանդերձ, որ նրա կենսագրութիւնը կարելի եղածին չափ շուտ լոյս տեսնի — մենք մտածում ենք, որ եղած փաստերը կարելի է որոշ չափով դասաւորել, վերլուծման ենթարկել, մեկնաբանել եւ հաւանական եզրակացութիւններ հանել: Ընչուչա, անհրաժեշտ է այդ աշխատանքի մէջ փութկոտ շլինել, եզրակացութիւններն ու ընդհանրացումները եթէ ոչ շատ, գեթ կարելու եւ բնորոշ տուեալների վրայ գնել: Այսպէս մտածելով, կարծում ենք որ հնարաւոր է տալ այս կարելու խնդրի եթէ ոչ վերջնական ձեւակերպումը, գեթ սկզբնական ուրուագիծը: Եւ թերեւս այս ուրուագծից առաջնայ հետզհետեւ խնդրի առաւել կամ նուազ ճշգրիտ պատկերացումը:

Վասն Տէրեանի մտաւոր եւ բարոյական զարգացման վրայ ամենից առաջ ազդեցութիւն է ունեցել նրա հայրը եւ իր բնուանիքը: Դժուած օրից մինչեւ լազարեան ճեմարանի շրջանը՝ Տէրեան ապրել է գիւղում իր հօր անմիջական հսկողութեան ներքոյ: Անսագրական տուեալներից խնացանք, որ նրա հայրը ընթերցասէր մարդ է եղել եւ շատ գնահատել է ուսումն ու կրթութիւնը: Իր զուգահեռներին նա հաղորդել է իր յատկութիւնները:

Բայց Վասն Տէրեան ապրել է մի միջավայրում, ուր զգացուել է ոչ

միայն մի տարիքուոր ճնշոյի բարոյական ազդեցութիւնը, այլ եւ նոր սերնդի շուռը: Կրօն անդրանիկ եղբայրները, որոնք սովորում էին Թեֆլիզում, ամառները վերադառնում էին գիւղ եւ այնտեղ ստեղծում էին կրթական, գաղափարական տրամագրութիւն: Մեծ եղբայրը, Զաւակեցի մականունով, գրում էր պատմեւածքներ, որոնց նիւթը գլխաւորապէս անուած էին գիւղական կեանքից եւ որոնք այդ ժամանակ որոշ ուշադրութիւն էին գրաւում: Կրկրորդ եղբայրը, Աբամ Տէր-Գրիգորեան, որ սովորում էր Թեֆլիխի գիմնազիւնում — յարան էր իրրեւ աշակերտական միութիւնների եռանդուն կազմակերպող: Այդ միութիւնները մեծ մասամբ զբաղւում էին գրական-մտաւոր խնդիրներով, աշակերտական պարբերականներէ մին Տրատարակում, որոնց մէջ գրում էր նաեւ Աբամ Տէր-Գրիգորեան: Ընտանիքի անդամները, թէ Հայրը եւ թէ մեծ եղբայրները գուրգուրալից վերաբերում ունէին դէպի փոքրիկ Աւանիկը, որի մտաւոր եւ բարոյական զարգացման համար անում էին, ինչ կարող էին:

Տարբարտաբար շնչք կարող մօր ազդեցութեան մասին որ եւ է հաստատաբան ասել: Բանաստեղծ Աւետիք Իսահակեան, որ այցելած է Աւհան Տէրեանի գիւղը նրա պատանութեան ժամանակ եւ որ ծանօթ էր նրա հօրը, իր նամակի մէջ ասում է, թէ մայրը մեռած էր այդ ժամանակ: Արիշ մանրամասներ չկան այս մասին նրա կենսագրութեան մէջ, եւ մնք խորապէս ցաւում ենք, որ այս պակասի պատճառով հնարաւորութիւն չունինք այս առիթով աւելին ասել: Կարելի է թերեւս աւելացնել, որ Աւհան Տէրեանի բանաստեղծութիւնների մէջ երգուած «Հայրենական տան» լքուած ու գատարկութիւնը եւ բանաստեղծի շատ դառն զգացումները որ եւ է կապ ունին մօր անժամանակ մահուան հետ:

Կրօնական ընտանիքից յետոյ Աւհան Տէրեան ամենօրեայ ապաւորութիւններ է ստացել Հայրենի գիւղից, ուր անցել է նրա մանկութիւնը: Այս շրջանում նա խօսել է միայն Հայ լեզուն եւ իմացել է միայն մայրենի լեզուն: Մի միջավայր է դա, ուր պահպանուած է մեր ժողովրդի ուրոյն արժէքները եւ ուր չէ տիրում միւս ազգերի ճնշող, յամախ այլասերող ազդեցութիւնը: Այս տեսակետից Ախալքալաքի Կանձա գիւղը անուշա աւելի նպաստաւոր միջավայր էր Հայ բանաստեղծ ծնելու համար, քան օրինակ Թեֆլիքը, Բագուն, Ատարխանը, Մոսկովան, Կոր-Կախիջեւանը: Արդ՛հետեւ Հայ բանաստեղծ լինելու համար նախ եւ առաջ հարկաւոր է կենդանի, նկարագրել, ժողովրդական, արտայայտիչ ու պատկերաւոր լեզու, ինչ որ պահպանուած է այն վայրերում, ուր Հայ ազգարնակութեան մեծամասնութիւնն է ապրում:

Իր լեզուի հիմքը Աւհան Տէրեան ապահովաբար ստացել է Հայրենի գիւղում, Հայ ստեղծագործող ժողովրդից: Կրօն բանաստեղծութիւններից երեւում է, որ այս հիմքը բաւական ուժեղ է եղել, այնպէս որ յետագայում ստացած կուլտուրական վայրերի նշանակալից ազդեցութիւնը չի կարողացել այդ հիմքը ազարտել, այլասերել, ինչ որ կը լինէր անուշա խորապէս անգեղարուեստական եւ որից յետոյ չէր մնալ այլ եւս կենդանի բանաստեղծ:

ընտանիքից եւ ստեղծագործող ժողովրդից զատ պետք է յիշել գիւղի, գաւառի բնութիւնը, որի մէջ անցել են բանաստեղծի մանկական տարիները եւ որ խորին հետքեր է թողել Տէրեանի երեւակայութեան վրայ: Իր բանաստեղծութիւնների մէջ որքան էլ խորհուրդը, ներքին տրամադրութիւնը, հագեթմանութիւնը եւ սոցիալական մտորումները գերակշիռ լինին, այնուամենայնիւ գրեթէ ամեն կէտի վրայ զգացում է բնութեան ձայնը, պատկերը, հոգին: Վաճան Տէրեան բնութեան բանաստեղծի համբաւ չունի, բայց նա անմահ կէտեր ունի, որոնց մէջ երևում է բնութեան նոր, նուրբ, խորհրդաւոր բանաստեղծը: Որովհետեւ ինչպէս կեանքը, նոյնպէս եւ բնութիւնը, կարելի է երգել տարրեր ձեւով եւ տարրեր ոգով, եւ աւանդական ձեւն ու ոգին բանաստեղծութեան միակ յատկանիշները չեն:

Վաճան Տէրեան բնութեան արտայայտութեան մէջ գրել է իմաստութիւն եւ հոգեբանութիւն, ինչ որ իր բանաստեղծութեան ընդհանուր գծերն են: Ընդ արտայայտութեան մէջ նա խորհրդագէտ է եւ ոչ պատկերագէտ, երաժիշտ է եւ ոչ նկարիչ: Բայց այս անուանումներն անշուշտ շատ նշանակութիւն չունին բանաստեղծութեան համար: Կարելիքն այն է, որ արուեստագէտը կարողանայ բնութեան գազանիքները հաղորդել մարդուն, բնութիւնը արթնցնել եւ խոսեցնել — լինի այդ պատկերներով թէ շարժումներով, խորհուրդներով թէ ձայներով:

Լազարեան շեմարանը Վաճան Տէրեանի մտաւոր եւ բարոյական զարգացման գործում նշանակալից դեր ունի: Ճիշդ է, նրա ժամանակ զարթում բացակայում էր այն միմտորդը, ինչ որ կար Սմբատ Շահաղիկ եւ Յովհաննէս Յովհաննիսեանի աշակերտութեան օրերում: Հին սէփմի ուսուցման քաղաքականութիւնը աւերներ էր գործել եւ կրթական վայրը դարձել էր քաղաքական յետադիմական նպատակների ասպարեզ: Բայց այն, ինչ որ մնացել էր, ուսումնասիրուեալ պատանիների եւ բարեխիղճ դասատուների միջոցով հնարաւոր էր լինում դարձնել զեպի լուսն օգտագործել: Վաճան Տէրեան սովորում է այդպէս հայոց հին գրականութիւնն ու պատմութիւնը, հայ հին լեզուն, որի ազդեցութիւնը շատ որոշ կերպով երևում է նրա բանաստեղծութիւնների վրայ, գրեթէ միշտ գրական իմաստով: Նրա բանաստեղծական լեզուն կենդանի ժողովրդական խօսքի եւ դասական գեղեցիկ ձևերի ներդաշնակ միացումն է: Ուշագիւր ընթերցողը Վաճան Տէրեանի գրքի մէջ շատ արտայայտութիւններ կը տեսնի, որոնք գալիս են դասական լեզուից եւ որոնք գործ են անուած ընտրութեամբ, չափով եւ ճշտակով:

Ընն տեսակէտը, որի համաձայն մեր աշխարհիկ լեզուն եւ գրականութիւնը իրենց զարգացման ճանապարհին պետք է օգտուեն մեր հին գրականութիւնից եւ լեզուից — Էսպէս ճշմարիտ է: Միայն թէ օգտուելու մեթոդը

պէտք է լինի այնպէս, որ նոր լեզուն անի եւ զարգանայ գեղեցկօրէն եւ ոչ թէ մեռնի գրարարեան կազմանքների մէջ: Ղազան Տէրեանին ժամանակակից, արեւմտահայ տարարախոս բանաստեղծ, Դանիէլ Ղարուժան նշնպէս դործ է անել գրարար օճեր ու ձեւեր: Բայց այդ գործածութիւնը շատ յաճախ փաստել է կենդանի լեզուին եւ նրա բանաստեղծութիւնը զարնչել է մութ եւ անհասկանալի: Կարեւորն այն չէ ուրեմն, որ դասական լեզուի դերը խոստովանուի նոր լեզու կերտելու գործում: Կարեւորն այն է, որ Տին ձեւերն այնպէս պատաստուին նորի վրայ, որ ամբողջ օրգանիզմն անի բնական ընթացքով:

Այս ուղղութեամբ է զարգացել Ղազան Տէրեանի բանաստեղծութիւնը նաեւ. ուսաց լեզուի ու գրականութեան համեմատութեամբ: Այս փ կասկած չկայ, որ ուս լեզուի ու գրականութեան ազդեցութիւնը եղել է նրա վրայ շատ նշանակալից: Թէ պատանի եւ թէ երիտասարդ հասակում իր մտաւոր զարգացումը ձեռք է բերում նա մեծ մասամբ ուս լեզուի միջոցով: Բայց այս ազդեցութիւնը նրան չէ հանում իր բնական հունից, այն լեզուի շրջանակից, որի մէջ ծնուել եւ մեծացել է բանաստեղծը: Ղազան Տէրեանի բանաստեղծական լեզուի մէջ չկայ ուսարանութիւն, այսինքն օճեր ու արտայայտութիւններ, որոնք փոխ առնուած լինին ուսերեկնից եւ որոնք հարազատ չլինին մեր լեզուին: Բանաստեղծը պատանեկան վաղ հասակից սարբել է Մոսկվայում, սիրել է ուս երկիրն ու ուս ժողովրդին, սիրել է մանուանդ ուսաց լեզուն եւ գրականութիւնը, որ խնցել է մայրենի լեզուի պէս: Բայց այս պարագանքը նրա լեզուի ինքնուրոյնութիւնը չեն աղաւաղել եւ հայերենի վրայ չեն դրել ուսերեկն իրրեւ անտեղի զարգարանք: Շատ դիւրին չէ ի հարկէ մայրենի լեզուի այս աստիճան ուժեղ պաշտպանութիւնը մի միջավայրում, ուր սիրում է ուսաց բարձր գրականութիւնը: Միեւնոյն երեւոյթներ չենք կորոզ հաստատել մեր ֆրանսիական ազդեցութեան նկատմամբ այն հեղինակների վրայ, որոնք սարբել են ֆրանսիայում կամ որոնք մտաւոր դաստիարակութեամբ մտա են եղել ֆրանսիական քաղաքակրթութեան: Ասում Եարձանեանը օճեր եւ զարնուածներ ունի, որոնք բառացի կերպով փոխ են առնուած ֆրանսերեկնից եւ որոնք հայ լեզուի վրայ երեւում են իրրեւ անտեղի կցումներ:

Այս տարրեր երեւոյթների հիմնական բացատրութիւնն այնտեղ է, որ մինչ Դանիէլ Ղարուժանի եւ Ասոմ Եարձանեանի բանաստեղծութիւնը խորապէս չէ սկզբնաւորում հայ ստեղծագործող ժողովրդի միջից, Ղազան Տէրեանի հիմքը հայ գիւղն է, հայ գաւառը, մի ուժեղ, ինքնատիպ լեզու եւ մի առողջ, ստեղծագործող ժողովուրդ: Եւ այն, ինչ որ բանաստեղծը ստացել է մտաւոր դաստիարակութեան ճանապարհին — զարգացրել են այն գեղեցիկ խորքը, որ նա ունեցել է եւ ոչ աղաւաղել կամ այլասերել այն: Այսպէս է, որ Տին լեզուի ուսումնասիրութիւնն ու սէրը նրա մէջ մշակել են աշխարհին ու ժողովրդականը: Այսպէս է մանուանդ, որ ուս լեզուի ու գրականութեան խորին համակրանքը նրա մէջ աւելի եւս պնդուացրել են հայկականը:

Եւ ստեղծուել է մի բանաստեղծական գործ, որի վրայ դասական եւ արտաքին ազդեցութիւնները զարմանալի կերպով օգտակար են եղել եւ որի մէջ մտած է միշտ ներքին ազնիւ խորքը:

Վաճան Տէրեանի բանաստեղծական գործի վրայ ազդեցութիւն են ունեցել Հայ, ռուս եւ եւրոպական գրականութիւնները:

Հայ բանաստեղծական գրականութիւնը նրանից առաջ, վերջին երեսնամեակի ընթացքում, բաւական շարժացել էր թէ ձեւով եւ թէ նիւթով: Նա այդ շարժացած գրականութեան հոգեւոր զաւակն էր: Նրա ժամանակ արդէն մենք ունէինք առաջնակարգ բանաստեղծներ, որոնք մշակել էին մի գեղեցիկ, արտայայտիչ լեզու: Յովհաննէս Յովհաննիսեան, Յովհաննէս Թումանեան, Ըւեստիք Իսահակեան, Դերենիկ Դեմիրճեան տուել էին արդէն բանաստեղծական կարեւոր գործ: Ըյսպիսի գրական միջավայրում նա առաջ եկաւ, կարգաց այդ բանաստեղծներին դեռ պատանի հասակից, սիրեց նրանց եւ ազահովաբար կրեց նրանց բանաստեղծական գործի ազդեցութիւնը: Բայց այդ ազդեցութիւնը կրելով հանդերձ՝ Վաճան Տէրեան մնաց էապէս ինքնուրոյն բանաստեղծ, եւ ինքն էլ իր կարգին ունեցաւ երիտասարդների մէջ շատ հետևողներ: Նա ստրկաբար չենթարկուեց իրենից առաջ եղած բանաստեղծական գործին, այլ իւրացրեց այդ գործը, ընդունեց նրա գեղեցիկ մասերը եւ մանաւանդ զարգացրեց, կատարելագործեց այն:

Հայ բանաստեղծներից նա մտ էր ժամանակով, գրութեան ձեւով, արամազրութիւններով Դերենիկ Դեմիրճեանին: Նրա սկզբնական բանաստեղծութիւնների մէջ յաճախ զգացում է այն շունչը եւ այն վերաւոր արամազրութիւնը, որ յատուկ էր Դերենիկ Դեմիրճեանին: Բայց դժուար է ասել, թէ Դերենիկ Դեմիրճեան Վաճան Տէրեանի վրայ ունեցած լինի մասնաւոր ազդեցութիւն: Ընդհակառակը, նրանց պէտք է զիտել իրրեւ մի ընդհանուր շրջանի եւ միեւնոյն սերնդի բանաստեղծներ. նոյն ժամանակի բանաստեղծներ, որոնց վրայ ծանրացած է միեւնոյն դերը: Նրանց մէջ լուելեայն վէճ կայ սերնդի արտայայտիչը լինելու նկատմամբ: Նրանք հաւասարապէս օտարանդաւոր են եւ հաւասարապէս կարող են այդ դերը կատարելու: Բայց վերջ է վերջոյ Վաճան Տէրեան, իրրեւ աւելի երիտասարդ ոյժ եւ իր խորքի մէջ հաւասարացող հոգի, գառնում է սերնդի բանաստեղծական ներկայացուցիչը: Դերենիկ Դեմիրճեան ջրուած արամազրութիւններ ունեցաւ գրեթէ միշտ, զանուեց բազմապիսի եւ հակադիր ազդեցութիւնների ներքոյ, ունեցաւ միշտ կենդանախոյս զգացումներ, եղաւ դժգոհ ու պահանջիտ, չկազուեց հաւարականութեան հետ, որի դէմ նա անգիտակից քէն ուներ — եւ կանգնեց մեկուսի իր տաղանդով եւ իր բարոյական ամբիժ խորքով: Վաճան Տէրեան նոյնպիսի գրամազրութիւններ ուներ սկզբնական շրջանում, բայց

Տեսողական կարողացաւ իր մէջ ներխուժող հակադիր ոյժերը մեղմել, կարողացաւ բարձրանալ այն ամենալայններից եւ հոգեկան ներքին ազդեացներից, որ տարիքը եւ ժամանակը զրկել էին նրա վրայ: Ղաֆան Տէրեանի երկրորդ շրջանի բանաստեղծութիւնը հաւատքի, ստեղծագործութեան բանաստեղծութիւն է: Եթէ նրա որոնումները եւ տատանումները իր սերնդի եւ մեր կեանքի որոնումները եղան, նրա հաւատքն ու ստեղծագործական իդէալը նոյնպէս մեր կեանքինն էին, լոզհանութիւնն էին: Արանով նա կարողացաւ որոշ շրջանի անվիճելի եւ անորոշելի բանաստեղծը դառնալ:

Մեր գրողներից ամենից շատ Ղաֆան Տէրեանի վրայ ազդեցութիւն է ունեցել Ա. Իսահակեան: Արոնումների ազդանգաւոր բանաստեղծը Ղաֆան Տէրեանից առաջ եղել է նա: Այն կարտը, այն երազը, այն գեղեցիկ «սուար», որից այնքան յուզմունքով խոսում է Ղաֆան Տէրեան — Աւետիք Իսահակեանի «անբուն» մտորումներն են եղել:

Այս երազը եւ այս հոգեկան անդիմազրելի ճգնումը արտայայտել են նաեւ Յովհաննէս Թումանեան եւ Լեւոն Շանթ: «Անուշը» երազի եւ կարտի մի սքանչելի պոէմ է, «Գեպի Անհունը» հոգեկան բուռն ձգտումի վերաբերմի է, «Լեւոն աղջիկը», «Երազ օրերը» պատանեկան գրաւիշ թարմութեամբ եւ հրաշալի անմիջականութեամբ այդ երազն ու ձգտումն են արտայայտում:

Ղաֆան Տէրեան կարգացել եւ ներշնչուել էր այս բոլորից:

Բայց Աւետիք Իսահակեանի քնարերգութիւնը ապահովաբար նրան աւելի է գրաւել, որովհետեւ նրա երգը զարմանալի կերպով նման է Իսահակեանի երգին, եւ նրա «վերքն» էլ Իսահակեանի այնքան մտերիմ վերքերին: Ղաֆան Տէրեանի եւ Աւետիք Իսահակեանի այդ կարտի, որոնումների բանաստեղծութիւնները կարգաւու ժամին յաճախ կարելի է մտածալ, թէ ո՞վ է հեղինակը — Իսահակեան, թէ Տէրեան: Կրօնց մէջ նման են ոչ միայն արամագրութիւնը, զգացումները, այլ եւ յաճախ արտայայտութեան ձևը, պատկերները, երաժշտական շարքը: Ղաֆան Տէրեան ջաւախցի լինելով երգում է Շիրակի դաշտերը, ծաղիկները, «զմբուխտ» ջրերը, նրանց վերեւ կախուած վառ աստղերը եւ այն «բարձունքները», որ երազում են երկուսն էլ, ուր ուզում են հեռանալ թէ մէկը, թէ միւսը:

Եւ ոչ միայն նման են երկու բանաստեղծների երազը, մեկուսացումը, «անյայտ» եւ «անորոշի» ողբերգական կարտը — այլ եւ որոշ տեսակետից նման է նրանց կեանքի երգը: Երկուսն էլ հաւատք ունին, երկուսն էլ վերադարձ ունին: Երկուսն էլ մարդկութեան եւ հաւարականութեան հետ «հաշտուելու» արամագրութիւն ունին: Թէ ինչպէս պիտի գայ այդ հաշտութիւնը եւ ինչ պայմաններով պիտի հաշտուին բանաստեղծները, այդ տարբեր խնդիր է — բայց երկուսն էլ պիտի դառնան մեր մէջ եւ «վառ են մարդկանց սրտերը մեռած»:

Ղաֆան Տէրեան Աւետիք Իսահակեանի խորին ներշնչումներ է ստացել: Բայց նա կարողացել է այդ ներշնչումները զարգացնել եւ նրանց աւելի

մարդկայնական գոյն առ: Մինչ Աւետիք Իսահակեանի հոգու վրայ ծան-
րացած էր մի գժբախտ ներկայ, Աւհան Տէրեան տեսնում էր աւելի հետուն,
“լուսաւոր ապագան”: Իսահակեանի վրայ անցեալի ւսանողութիւնները կային
որ խորին մտահոգութիւն էին պատճառում նրան: Տէրեան աւելի նոր սերնդի
արտայայտիչ լինելով՝ ազատ էր այդ ւսանողութիւններից: Աւետիք Իսահա-
կեան ապրելով եւ գործելով ազգային ուսանողների շրջանում՝ իր պարտաւո-
րական հարկն էր առիտ այդ ուղղութեան: Աւհան Տէրեան դեռ վաղ
հասակից զգաց ուսանողների անժամանակակցութիւնը, եւ որովհետեւ երի-
տասարդ էր եւ ուժեղ կապեր չուներ այդ շարժման հետ — թողնց այն
արուեստագետի համարանկութեամբ: Իսահակեան շրջապատող մարտութիւն-
ների եւ նստապաշարութեան մէջ խղճի խայթ ուներ, Տէրեան այս տեսակե-
ակց աւելի բախտաւոր էր, աւելի պարզունակ էր եւ ազատ էր աւելորդ
կասկածներից:

Եւ սակայն Աւհան Տէրեան Աւետիք Իսահակեանի պէս հայ ժողովրդի
բանաստեղծն էր եւ նրա փառքին էր ծառայում զմայլելի հաւատարմութեամբ:

Հայ գրականութիւնից յետոյ Աւհան Տէրեանի վրայ ազդեցութիւն է
ունեցել ուսուցիչականութիւնը:

Նրա ժամանակ ուսուցիչականութեան մէջ նոր դարաշրջան էր սկսուած:
Տղատայի գիւղացիական շրջանին յաջորդել էր Մարտիմ գորկու բանաստեղծական
շրջանը: Բանաստեղծութիւնը իր մեթոդներով եւ իր յատուկ ձեւով ար-
տայայտութիւն էր առիտ ժամանակի արամադրութեան: Բանաստեղծները
երազում էին զեղեցիկ սրտան, երբ անարգարութիւնը պիտի վերանար եւ
երբ մարդկանց մէջ պիտի թագաւորէր ճշմարտութիւնն ու հաւատարմութիւնը:

Նրկու ուղղութիւն գնում էին քով-քովի — Աւետիքը եւ Միտրոյիլը:
Բայց այդ երկու ուղղութիւնները իրար չէին հակասում: Մեկը կեանքն էր
արտայայտում, միւսը՝ երազը: Մեկը ներկայացնում էր իրականութիւնը,
միւսը նայում էր հետուն եւ կարօտում էր գայիք իրականութեան: Բանաս-
տեղծները տեսնում էին ժամանակի թշուառ կեանքը, միապետութեան
զաժանութիւնը, ազնուականութեան եւ զրամատիրութեան ոճիրները —
եւ բնում էին յոստատեմքով զեպի այդ կեանքը: Բայց նրանցից
շատերը չէին կորցնում հաւատքը լուսաւոր սրտան, ապրում էին երազներով,
ցնորքներով, իդեալներով եւ գուշակում էին “Արեւածագը”:

Վաստանդին Բալմնա, Աւարիի Բրիւտով, Ալեքսանդր Բրոկ նոր բանաս-
տեղծութեան սկիզբը գրին ուսաց գրականութեան մէջ: Այդ բանաստեղ-
ծութիւնը անկեղծ չունչ ուներ, հաղորդիչ արամադրութիւն ուներ, թռիչք
ու ոգեւորութիւն ուներ: Բալմնա զեպի լուսաշող Արեւն էր գիտում:
Բրիւտով յանձնում էր կեանքին ու մարդկութեան, Բրոկ ներբողում էր
“կրակը”, որ պիտի վառէր հանգած “հրդեհը”:

Վահան Տերեան այդ բանաստեղծների մէջ շնչելով՝ երգում էր իր «Արեւածագը», դառնում էր «վազուան ցնծութեան գուշակ» եւ կամենում էր «վառել երգերը որպէս մի գրուշակ»:

Ռուս գրականութեան բարձր թոխչքը, գեղեցիկ արուեստը եւ մարդկային շունչը նրա վրայ կարեւոր ազդեցութիւն ունեցան: Այս ազդեցութիւնը ամբողջացաւ այն ազդեցութեամբ, որ ունեցան նրա վրայ ուսւ ժողովուրդը եւ ուսուական ընդարձակ երկիրը:

Վահան Տերեանի բանաստեղծութիւնների մէջ յաճախ զգացում է այն լայն մարդկային սիրտը, որ յատուկ է մի մեծ ժողովրդի եւ այն մելամաղձոտ հեւքը, որ զգացում է Ռուսաստանի զաշտերում: Այդ միջափայլում ապրելով, նա հաղորդում է միւս ժողովուրդների հետ, մարդկութեան հետ: Նրա առջեւ հին, ասանդական սահմանները վերանում են եւ նա նայում է աշխարհի վրայ, որպէս մի վայրի վրայ, որ բոլոր ժողովուրդներինն է հաւասարապէս: Եւ իր մարդկային իդէալների, երազի, ծարաւի մէջ նա անեղագին բացականչում է.

«Միեւնոյն է ինձ Հարաւ թէ Հիւսիս. . .»

Ռուս ժողովրդի, երկրի եւ գրականութեան սէրը Վահան Տերեանին չհասնեց բնաւ իր էութիւնից եւ հայ բանաստեղծի իր սահմանուած կոչումից: Ընդհակառակը, այդ սէրը նրա մէջ աղնուացրեց քերթողի կոչումը եւ միացրեց նրան մարդկութեան հետ, ինչ որ ամբացրեց նրա տառանուող հոգին եւ բարձրացրեց նրան ծանր ողբերգութեան մէջ:

Եւ այս բարձրացումը ոչ միայն իրեն՝ պոետին էր վերաբերում, այլ եւ այն ժողովրդին, որի բանաստեղծն է նա. . .

Ռուսաց գրականութիւնից բացի Վահան Տերեան կապուած էր նաեւ եւրոպական գրականութեան հետ: Նա գիտէր ոչ միայն եւրոպական նոր ազգերի գրականութիւնը, այլ եւ դասական յունական եւ լատինական գրականութիւնները: Դասնօթ էր նա այդ գրականութիւններին ոչ միայն ուսւ լեզուի միջոցով, այլ եւ յաճախ ուղղակի կերպով, կարգալով լուսագոյն երկերը բնագրի լեզուով: Այս ընդարձակ ծանօթութիւնը եւ այս հմտութիւնը նրա գրական գործի վրայ անշուշտ ազդեցութիւն են ունեցել: Այն վստահութիւնը, որ նա ունի իր բանաստեղծութեան մէջ, նրա հմտութեան եւ ծանօթութեան հետեւանք են: Նա գիտէ ինչ է գրում, նա գիտէ ուրիշները ինչ են, նա գիտէր թէ մեծ բանաստեղծները ինչպէս են արտայայտել այս կամ այն պարբերը, այս կամ այն զգացումը: Եւ նրա բանաստեղծական գործը ունի որոշ շափ, որոշ կանոնաւորութիւն իր ամբողջ հեւագին թոխչքի մէջ: Շատ անգիւր նա յիշեցնում է դասական քերթողներին՝ սիմբոլիստական

և ևեայիստական իր ներազոտ, կենսալից և յուզումնալից բանաստեղծութիւնների մէջ: Դասնօթ լինելով եւրոպական, հայ և ռուս մեծ գրողներին, ունենալով մշակուած ճաշակ և բնութական կարողութիւն — նա իր բանաստեղծութիւնը թերեւս առանց մտադրութեան կերտել է այդ ուղղութեամբ: Նրա բանաստեղծական գործը յաճախ թուում է համադրութիւն ոչ միայն զանազան գրական դպրոցների, այլ և տարրեր գրական գեղեցկութիւնների: Վահան Տէրեան գրական ծանօթութեան և գիտակցութեան մէջ չկորցրեց բնաւ իր անմիջականութիւնը: Նա ձեաց միշտ հմուտ և ինքնարտիւս միաժամանակ:

Այս յատկութեամբ նա նման է Կրանտիացի սիմբոլիստ բանաստեղծ Պօլ Վերլէնին, որին սիրում էր և որից ստացել է որոշ ներշնչումներ: Վերլէն ճանաչուած և յարգուած բանաստեղծ էր ռուս գրականութեան մէջ տանիմներորդ դարի վերջերին: Ռուսաց նոր բանաստեղծները նրան շատ էին գնահատում, կարդում էին ոգեւորութեամբ և յաճախ թարգմանութիւններ էին անում նրանից: Վերլէնի ստեղծած ձեւերը, չափը, բանաստեղծական երաժշտութիւնը գործածական դարձաւ նաեւ ռուս բանաստեղծութիւնների մէջ: Վահան Տէրեանի և Վերլէնի կապը գլխաւորապէս այս միմուտորտի մէջ առաջացաւ: Սակայն չպէտք է բնաւ չափազանցել Վերլէնի ազդեցութիւնը ո՛չ ռուս բանաստեղծների և ո՛չ Վահան Տէրեանի վրայ: Կարճ ժամանակեայ գրաւումն էր դա մի բանաստեղծով, որ սիմբոլիզմի հայրն էր համարուած և որ իրօք բարձր էր միւս սիմբոլիստներից իրրեւ ճշմարիտ, ներշնչուած բանաստեղծ: Բայց այդ ճշմարիտ, ներշնչուած բանաստեղծը մշտականութիւն չունեցաւ: Իր հոգեկան տագնապների մէջ Վերլէն թուլացաւ, պարտուեց և զիմեց զեպի սովանտիզմ ու միասփիզմ:

Վահան Տէրեան զուրս եկաւ այդ տագնապների միջից և զիմեց զեպի ևեայիզմ, զեպի լուսաշող Արեւածագը:

Մեզ համար գնահատելի է այս վերջինը, որովհետեւ նա առողջ և զօրաւոր է ոչ միայն իրրեւ մարդկային իդէալ, այլ և իրրեւ արուեստ ու բանաստեղծութիւն:

Գրականութիւններից զատ Վահան Տէրեանի բանաստեղծական գործի վրայ ազդեցութիւն ունեցաւ մեծ չափով շրջապատող կեանքը: Մենք տեսանք, թէ ինչպիսի շրջան անցրեց նա գիւղում մանկական տարիներում: Պատանեկան հասակում ապրեց նա Մոսկվայում, աշխատաւորական շարժումների նախորեակին և այդ շարժման միջոցին: Երիտասարդական հասակում ապրեց նա մեր գաւառներում, կոփկասեան կենդրոններում և Ռուսաստանում, այն ժամանակ, երբ 1905 թուի Յեղափոխութիւնը պարտուեց և բնդարձակաձաւալ երկրում տիրեց սարսափելի յետաշրջում: Այսպիսով, մանկութիւնից մինչեւ երիտասարդութիւն անցրեց նա երեք շրջան — երազներ, պայքար և պարտութիւն:

Կեանքի բոլոր արտայայտութիւնները կրեցին այս ծանր յեռաշրջան ազդեցութիւնը: Գպրոցը, գրականութիւնը, փիլիսոփայութիւնը, մտայն, թատրոնը, ընտանիքը, սէրը, անհատական կեանքը — բոլորի վրայ իջաւ յեռաշրջումը: Բանաստեղծները, որ երգել էին գեղեցիկ դարունը, յուսահատ եւ յոռեատես ձայներ արձակեցին: Մահուան եւ ոչնչութեան պրորօքսիմը սովորական դարձաւ գրականութեան մէջ, եւ շատերը ոչնչութեան մէջ տեսան բոլոր խնդիրների եւ բոլոր իդէալների լուծումը:

Վահան Տերեան այս միջավայրի մէջ ապրեց եւ խորապէս ազդուեց ընդհանուր արամազրութիւնից: Կրթ երազները, կարօտը, ցնորքները, ինչպէս եւ նրա մտայնը, թախիծը, յոռեատեսութիւնը սերտ կերպով կապուած են շրջապատի հետ: Իր տարիքը զուգադիպում էր այդ փոփոխակի զգացումներին: Մանկութեան եւ պատանութեան ցնորքները զարմուած էին կեանքի անյաղթելի ժայռին եւ փշուր փշուր էին լինում: Պատանեկան երազներին յաջողութիւն էր հիասթափութիւն, եւ սէրը դառնում էր իրական դառնութիւն: Այսպէս. սօցիալական եւ անհատական վերիվայրութեան մէջ գալարուած էր նա, «կրակները անցնում էին», «անուրջները գնում էին», եւ ինքը մնում էր «ցրտահար», «հողմափար»:

Յուսահատութեան եւ մտայնի մէջ ժամանակի մարդիկ որոնում էին կինը, կնոջ մարմինը, որպէս փրկութեան միջոց: Զգայական ու տարփատենչ Սանինը ներս էր խուժում բոլորի օրգանիզմը:

«Ցանկութիւնը» խեղդում էր ամենազուսպ եւ ամենաառաքինի գոյութիւններին անգամ, եւ «արիւնտ շուրթերը» մի վայրկեան մոռացում էին բերում:

Վահան Տերեանի բանաստեղծութիւնների մէջ զգացում է ընկերային եւ անմեական այս խառնակ ու վերաւոր արամազրութիւնը:

Բայց Քասար երկար չէ տեսում — եւ մարգու ստուածային պատկերը յաղթանակում է:

Վահան Տերեան ոչ յուսահատութեան ու յոռեատեսութեան գերի է դառնում եւ ոչ կրքերին ու զգայականութեան:

Մարդը եւ հաւաքականութիւնը պիտի յաղթեն: Բանաստեղծութիւնը, արուեստը նայում են հետուն եւ այնտեղ գուշակում են «յաղթական մարտի ցնծութիւն», Յեռաշրջումը յաւերժական չէ, եւ անհատն ու ընկերութեան թշնամի տարրերը շին կարող անվերջ յաղթանակել: Բանաստեղծի տեսողութեան մէջ երկիրն արդէն արթնանում է խաւարից եւ «արեւն այնտեղ հօւր եւ ոսկի է թափում»...

«...Իմ սրտում արդէն արշալոյս է, յարութիւն...»


Բանաստեղծութիւնն այսպէս կարողանում է տեսնել հետուն եւ յուսահատ հոգիներին թեւ ու թռիչք է տալիս:

Վահան Տերեան բազմազան ազգեցութիւնների և ներշնչութեան մէջ կարողացաւ հաւատարիմ մնալ ինքն իրեն, պահեց ոչ միայն իր ինքնուրոյն արուեստն ու գրականութիւնը, այլ և իր հաւատքը և իր իդէալը:

Եւ այն ժամանակ, երբ շատերը խեղդուած էին մտային ու կրթի մէջ, Վահան Տերեան երգեց «Հղօր» և «Հպարտ»:

«...Նոր սիրով լեցուն, դարձայ ես ձեզ մօտ,
Սէ նոր երգեր են նշում իմ հոգում...»

Այսպէս նա սկսեց իր առաջին երգերը և այսպէս փակեց նա իր բանաստեղծութեան կախարդական գիրքը:



V.

ԵՆՈՒՐՁՆԵՐ ԵՒ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Վահան Տերեանի բանաստեղծական գործը իր կեանքի զանազան շրջանների արտայայտութիւնն է:

Նա ունի մի կեանք, որ կանգնած, մայուն վիճակի մէջ չէ և որ շարժուած է անհասական և հաւարական կրկնակի հիմունքներով: Այս շարժման մէջ նրա հոգեբանութիւնը նեխարկուած է փոփոխութեան, զարգացման և բնաշրջման: Եւ նրա բանաստեղծութիւնը այն է, ինչ որ իր ամբողջութեան մէջ ներկայացնում է նրա կեանքը:

Հոգեբանական և բանաստեղծական այս զարգացումը չպէտք է շփոթել անձնական քմահաճոյքների, պատահական տրամադրութիւնների և երերուն սպառնալիցութեան հետ: Վահան Տերեան իր բոլոր զգոյնութեամբ և իր նօրբ յուզութեամբութեամբ հանդերձ՝ գիտակցական, հիմնաւոր բնոյթ ունի, ուժեղ է ներքնապէս և վերջ ի վերջոյ դիմացկուն է կեանքի ողբերգութեան հանդէպ: Նրա հոգեբանական փոփոխութիւնը և բանաստեղծական գործի զանազանակերպութիւնը սկարութեան արտայայտութիւն չէ, այլ զորութեան և խառնուածքի իր անհասական կեանքի դեպքերը, տարիքի տարբեր շրջանները, շրջապատի հաւարական պայմանները ազգում են նրա վրայ և ղեկավարում են նրա հոգու ընթացքը: Եւ բանաստեղծական գործը — ինչպէս

ամեն ճշմարիտ բանաստեղծի մէջ — հետեւում է այս հոգեբանական ընթացքին:

Գծուար է անուշտ ճշգրիտ մասերի բաժանել մարդկային հոգու այս ամբողջական ծանապարհը: Բայց անհասկանելի է վերջնապէս, որ այդ ծանապարհը յարողական գրութիւններ ունի, եթէ ոչ մէկը միտից խոստապէս սահմանագծուող, գեթ մէկը միտից որոշակի տարբերուող:

Վահան Տէրեանի բանաստեղծական կեանքի եւ բանաստեղծական գործի մէջ ուրիշները կարող են ուրիշ շրջաններ նկատել, նայելով թէ ինչպէս են գնահատում եւ հասկանում բանաստեղծին: Մենք մեր կողմից նրա բանաստեղծական գործի մէջ նկատում ենք երեք հիմնական շրջան, որոնք զուգահեռաբար են նրա հոգեբանական զարգացման եւ արտայայտում են այդ զարգացումը:

✓ Առաջին շրջանը նրա անմեղ պատանութեան շրջանն է, որի բնորոշ գծերն են՝ անուրջներ եւ որոնումներ: Բանաստեղծը այդ շրջանում երազ ու կարոտ ունի, նա որոնում է իր իդէալը եւ ձգտում է անկարելիութեան: Իսկնթ եւ անյազ տենչալքների ոսկեղէն շրջանն է այդ, որ բնու. սահման չի ճանաչում եւ որ աշխարհը տեսնում է պատրանքների մէջ:

✓ Երկրորդ շրջանը մալլ իրականութեան շրջանն է: Անուրջները մարում են այդ շրջանում, որոնումները կորցնում են նախկին թափը եւ մանուսանդ նախկին հաւատը: Մերը գոհացում չի տալիս բանաստեղծի մեծ երազներին, կինը չէ կարողանում լուծել կեանքի եւ տիեզերքի ողբերգական առեղծուածը: Տիրում է հրասթափութիւն եւ մեկուսացում: Բանաստեղծը ձանձրանում, յոգնում է կեանքից եւ դիմում է դէպի «բարձունքներն» ու «անապատները»:

✓ Երրորդ շրջանը վերագարծի շրջանն է: Բանաստեղծի հոգու վրայ իջած մալլը տեղի է տալիս եւ բացւում է պայծառ առաւօտը: Աշխարհը տեսնում է նա իր իսկական գոյներով, կեանքը երեւում է նրան իբրեւ զրկանք, պայքար եւ յաղթութիւն: Մարդիկ նրա եղբայրներն են այլ եւս, եւ հաւաքականութիւնը այն միակ միջավայրն է, որտեղ բանաստեղծը կարող է ապրել, շնչել եւ ստեղծագործել:

Այսպէս: Առաջին շրջանը կարելի է անուանել գրութիւն, երկրորդ շրջանը հակագրութիւն, իսկ երրորդ շրջանը — համագրութիւն: Վահան Տէրեան ներքին ծանրածանր տագնապների միջից անցնում է դէպի հոշակաւոր սինթէզը եւ նրա բանաստեղծական գործն էլ վերջին շրջանում գիտնում է դէպի այդ «լուսաւոր» ճամբան:

✓ Իր առաջին շրջանի բանաստեղծութիւններն, ուրեմն, անուրջների եւ որոնումների բանաստեղծութիւններն են: Այդ բանաստեղծութիւնները Վահան Տէրեան հրատարակել է 1908 թուին Թիֆլիզում «Մ'ծնչալի անուրջներ», խորագրով եւ տեղաւորել է իր բանաստեղծութիւնների ընդար-

ձակ ժողովածուի մը, որ հրատարակել է Մոսկվայում 1912 թուին: Ինքը՝ Պաճան Տերեան գիտակցել է, որ իր առաջին շրջանի բանաստեղծութիւնները սերտ կերպով կապուած են յետագայ բանաստեղծութիւնների հետ: Մոսկվայի հրատարակութեան համառօտ նախարանի մէջ նա երկու խօսքով բացատրում է, թէ ինչու «Միմնչադի անուրջները» կցում է իր ընդարձակ ժողովածուին: Բանաստեղծը վարում է այդպէս — ինչպէս ինքն է ասում — «աչքի առաջ ունենալով այն սերտ կապակցութիւնը, որով միացուած են Միմնչադի անուրջները այս գրքում ամփոփուած յետագայ գրուածների հետ...»

Զգիտե՛ք, թէ բանաստեղծն ինքը ինչ էր հասկանում սերտ կապակցութիւն ասելով եւ թէ ինչ իմաստով էր պատկերացնում տարբեր շրջանների կապը: Մի բան անկասկած ենք համարում, այն, որ բանաստեղծի գործի մէջ կային տարբեր շրջաններ եւ որ այդ տարբեր շրջանների մէջ կար սերտ կապակցութիւն:

✓ Պաճանի շրջանի բանաստեղծութիւնները նա ինքը որակել է անուրջներ խօսքով: Կարօտի, երազների եւ որոնումների բանաստեղծութիւններ են նրանք որոնք որոշ չափով տարտամութիւն ունին, լուսաւոր իդէալներ չեն եւ ոչ էլ պայծառ ցանկութիւններ են — աւելի ճիշդ ուրեմն անուրջներ են: Այս անուրջները անուանել է նա Միմնչադի անուրջներ, որով աւելի եւս ճիշդ որակում է նրա կարօտի եւ երազների բնոյթը: Աւերջայտս — եւ ոչ արշալոյս: Արշալոյսին մարդիկ անուրջներ չեն ունենում, նրանք որոշ ցանկութիւններ ունին այդ ժամին, պայծառ, լուսաւոր ձգտումներ: Մինչդեռ անուրջը աղօտ հասկացողութիւն է, տարտամութեան եւ անորոշութեան գաղափարն ունի իր մէջ, ճիշտ այնպէս, ինչպէս ասում է Ա. Իսահակեան՝

«Անյայտ, անորոշ, անձեռն տննչերով
Զգտում է նոզիս նոռու, շատ նոռու...»

«...Նւ ինչպէս երազ — եւ կայ, եւ չկայ...»

Պաճան Տերեանի անուրջներն էլ եւ կան, եւ չկան: Պատրանքներ են նրանք, ցնորական պատանու ստեղծած գեղեցիկ հեքիաթներ: Այդ անուրջները տխուր են մեծ չափով, որովհետեւ բանաստեղծը խուլ նախազգացումն ունի թէ նրանք իրականութիւն չեն կարող գառնալ: Քախածուից են նրանք, որովհետեւ խուսափողական են եւ տեսական չեն, մինչեւ իսկ որպէս երազ եւ անուրջ*:

Պաճան Տերեանի այս արամագրութիւնը մասամբ անձնական պատճառներից է, մասամբ հուսաբական, լինելով ժամանակի ճնշուած եւ երբորն հոգեբանութեան հարազատ արտայայտութիւն: Այդպէս էին մեծ չափով Ռուսաստանի այն բանաստեղծները նաեւ, որոնք ապրում էին Պաճան

Տերեանի ժամանակ եւ որոնց վրայ նոյնպէս ծանրացած էր մի մտայլ, թախ-
ծալից դարաչրջան:

✓ Բայց ինչ էլ որ լինի, բանաստեղծը սիրելու եւ ապրելու բուն կարօտ
ունի: Նրա հոգին անդիմադրելի կերպով ձգտում է եւ որոնում է երջանկու-
թիւն: Պատանեկան վառ երեւակայութեան եւ սքանչելի երազների մէջ նա
տակաւին չէ կարողանում գիտակցել, որ հերիաթների երջանկութիւնը գոյու-
թիւն չունի մեր անկատար աշխարհում եւ որ մեր բարոյական համայնքերը
եղբրական կերպով սահմանազծուած են: Բայց չզիտակցելով այդ՝ բանաս-
տեղծը զգում եւ տեսնում է այն, եւ զրանից է առաջանում նրա անուրջների
անհուն թախծութիւնը:

Սերը այդ անուրջների եւ որոնումների մէջ հիմնական տեղ է գրաւում:
Վահան Տերեան կեանքում ճանաչել է սիրոյ քաղցրութիւնը: Եթէ Պետրոս
Դուրեանի սերը նրա կենսագրութեան մէջ մտնի մնացած կէտերից է, Վահան
Տերեանի սերը որոշ է: Ապրելով մեծ մասամբ Ռուսաստանի կենդրոնում,
Մոսկվայում, ունենալով երիտասարդ եւ մտաւորական ազդիկների շրջան,
Վահան Տերեան եղել է այդ շրջանի սիրուած, համակրուած բանաստեղծը:
Նա եղել է նոր սերնդի սիրելին անխորհր կերպով, եւ ազդիկները շատ յաճախ
սածել են զէպի Տերեան գուրգուրալից, կարօտագին վերաբերում:

Այդ ազդիկներից բանաստեղծը ընտրել է մէկին եւ ամուսնացել է նրա
հետ: Արդեօք այս մէկն է եղել նրա թախծալից որոնումների եւ նրա վառ
կարօտի երջանիկ առարկան, արդեօք Վահան Տերեան նրան է նուիրել իր
այնքան յուզումալից եւ այնքան գեղեցիկ բանաստեղծութիւնները — չենք
կարող ասել: Կարող ենք ասել միայն, որ բանաստեղծը սիրել է մէկին եւ
այդ մէկին նուիրել է իր պատանեկան ու երիտասարդական սիրոյ զմայլելի
քերթուածները:

Բայց կինը եւ կանացի սերը նրան կատարեալ միտիմարութիւն չեն հա-
ղորդել — եւ նրա անուրջներն ու որոնումները կանգ չեն առել սիրոյ իրա-
կանացման առջեւ:

Այստեղ է ահա բանաստեղծի հոգու մեծագոյն զրաման եւ սքանչելի են
առաջանում նրա հոգեկան գաղաբութիւնները: Սերը, մինչեւ իսկ ապրած, իրական
սերը նրան որոշ չափով թախիծ է պատճառել: Որովհետեւ բանաստեղծը
սիրոյ գերագոյն վայելքի մէջ զգացել է, որ նրանով իր հոգու անեղծուածը
չէ լուծուած, որ իր խննթ հոգու անուրջներն ու որոնումները սիրոյ վայելքից
յետոյ աւելի եւս կարօտալի են դառնում: Երազի եւ իրականութեան յաւի-
տանական հակադրութիւնն է այս, ձգտումի եւ ունեցածի մշտական եղբրական
ընդհարումը:

Այս ընդհարումը սովորական մարդկային հոգեբանութեան հիմնական
երեւոյթներից է: Բայց նա մանաւանդ հիմնական երեւոյթ է մտաւորական
եւ բանաստեղծական հոգիների համար, որոնց մէջ ներքին տագնապը եւ
բարոյական խռովքը աւելի գործօն եւ աւելի զորաւոր են: Վահան Տերեան չի

կարողանում բաւարարութիւն ստանալ աշխարհիկ սիրով եւ կնոջ ընծայած բոլոր վայելքներով:

✓ Կրա առաջին բանաստեղծութիւնը, սիրոյ թարմ եւ անմիջական երգը, խորագրուած է տխրութիւն բառով եւ լի է իրօք տիրութեան դառն զգացումով:

«Սահուն քայլերով, աննշմար, որպէս քնքուշ մութի թեւ,
Մի ստուեր անցաւ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով.
Իրիկնստամին, թփերն օրօրող հովի պէս թնթեմ,
Մի ուրու անցաւ, մի գունաստ աղջիկ ներմակ շորերով...»

Արձակ դաշտերի ամայութեան մէջ նա մեղմ շնչաց
Կարծես թէ սիրոյ քնքուշ խօսք ասաց նիրհող դաշտերին,
Ծաղիկների մէջ այդ անուրջ կոյսի շշուկը մնաց
Եւ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...»

✓ Բանաստեղծը աչքը բաց է անում աշխարհի հանդէպ: Դեռ պատանի է նա, անգիտակ եւ անտեղեակ սիրոյ վայելքներին ու հրապոյրներին: Ինչ որ նա տեսնում է այդ ժամին, կատարելապէս իրական բան չէ, զգայականութեամբ եւ արիւնով լեցուն կին չէ, այլ մի ստուեր է միայն, մի գունաստ աղջիկ: Եւ այդ աղջիկը քայլում է սահուն, աննշմար, բանաստեղծի գեղեցիկ արտայայտութեամբ՝ որպէս քնքուշ մութի թեւ: Ապրող եւ վայելող բազմութեան մէջ չէ, որ մտնում է նա, եւ բուն սեր կամ խենթացնող կիրք չէ, որ բերում է նա: Ընցնում է նա արձակ դաշտերի ամայութեան մէջ եւ սիրոյ քնքուշ խօսք է ասում նիրհող դաշտերին ու ծաղիկներին: Բայց ծաղիկների մէջ մտնում է այդ անուրջ կոյսի շշուկը եւ ծաղիկները այդ սուրբ շշուկով լցնում են բանաստեղծի սիրտը:

Եւսպէս է ծնւում սիրոյ բանաստեղծը եւ այսպէս է սկզբնաւորում սերը բանաստեղծի հոգում:

Բայց այս սերը անմիջական եւ ամբողջական իրականութիւն չէ: Ընուրջ աղջկայ եւ սուրբ շշուկի բանաստեղծութիւնն է այն, որսնուցների եւ կարօտի թափածալի պեղչիան, որով առաջին իսկ աղերից բնորոշում է Ղահան Տերեանի բանաստեղծական գործը:

Ընուրջ կոյսը չկայ: Ծաղիկների մէջ մնացել է նրա սուրբ շշուկը միայն: Եւ բանաստեղծը, սիրտը լի այդ նուիրական ձայնով, որսնում է անուրջ կոյսին, որսնում է խուսափող երջանկութիւնը...

Եւս երջանկութիւնը նա որսնում է ամեն տեղ: Ղահան Տերեանի բանաստեղծութիւնների մէջ կան գեղեցիկ, անմահն էլեր, որոնք արտայայ-

տում են որոնող և անուրջող հոգու բոլոր կարօտը: Այդ բանաստեղծութիւնները լի են անկեղծ, անմիջական, ինքնաբերական զգացմունքով: Իր կարօտը և իր հոգու անսահման փափագը Ասհան Տէրեան արտայայտում է նոր, ինքնուրոյն խօսքերով — և ամեն մի նոր բանաստեղծութիւն բաց է անում ընթերցողի առջև գրական շնորհների մի զարմանալի տեսարան:

Շիրակի դաշտերում պտտելիս՝ աղամանդազարդ երկնակամարի հանդէպ, բանաստեղծը տեսնում է միայն իր սիրոյ և ցնորքների առարկային: Մի քանի խօսքով նա նկարագրում է մի հրաշալի, հերթաթմական գիշեր՝ Շիրակի խաղաղ դաշտերի վրայ փռուած: Բայց այդ կախարդական գիշերուայ մէջ բանաստեղծին հրապուրում է ոչ թէ բնութիւնը, ոչ թէ հայրենի դաշտերի անսահման քաղցրութիւնը, այլ — երեւոյր և իր անծայր կարօտը:

«Աստղերն են ժպտում լուսեղէն նազով,
Սաղաղ դաշտերը մութն է նամբուրում».
— Ես կախարդուած եմ՝ միշտ նոյն երազով,
Միշտ նոյն ցնորքն է իմ սիրտը այրում:

Մօտեցած երկնի աստղերը պայծառ
ժպտում են խաղաղ քո աչքերի պէս. —
— Իմ լքուած սրտի կարօտը անծայր
Ամեն ինչի մէջ որոնում է քեզ . . .»

Այս բանաստեղծութիւնը Ասհան Տէրեանի սկզբնական հատորի մէջ է հրատարակուած և պատկանում է այն բանաստեղծութիւնների շարքին, որոնք գրուած են շատ երիտասարդ հասակում: Բայց նկատեցէք, թէ բանաստեղծը ինչպիսի հաստատա գրքով կարողանում է բնութիւնը պատկերացնել, բնութեան գեղեցիկ վայրկեանը բռնել մի քանի խօսքով — և այդ վայրկեանի մէջ տալ, նոյնպէս մի քանի խօսքով, սիրող, կարօտացող հոգու ներքին տաքնապը: Այդ բանաստեղծութեան մէջ անփոփոած են այն հիմնական յատկութիւնները, որոնք յետոյ աւելի բնորոշ կերպով երեւացին նրա հասունացած գրական գործի մէջ. — նկարչի արագ և իրիմուռն վրձին, երգչի ներդաշնակ և աղու նուագ և հոգեբանի նուրբ, խորաթմափանց մտք: Ընթերցողը այդ երկու քառերկի մէջ մերթ ընդ մերթ տեսնում է Շիրակի խաղաղ դաշտերը, որոնք մութն է համբուրում, լուսւմ է մի հրաշալի երաժշտութիւն պայծառ աստղերի տակ և զգում է մի մարդկային սիրտ, մի մարդկային խռովալից հոգի, որ հեծեծում է կարօտի մէջ և որոնում է կորսուած երջանկութիւնը:

Աժդ բոլորը անկեղծ կերպով յուզում են մէզ և մէզ տալիս են բարոյական անխարդախ հաճոյք, թող այդ հաճոյքը թախծալից լինի, ինչպէս բանաստեղծի սերն ու կարօտն է:

✓ Կր անուրջների և որոնումների մէջ բանաստեղծը յաճախ համուժ է հիւանդագին դրուժեան: Երազը, կարտը, սիրած աղջիկը, երջանկութիւնը նրա համար դառնում են հեռաւոր լուսնի շող, ինքն էլ դառնում է մի ցնորական, մի խենթ սիրահար, որ շրջում է անվերջ երջանկութեան յետեւից, որպէս հերթաթի մանուկները կապոյտ թռչնի յետեւից: Լոգերանական այս ծայրայեղ գիճակը — կրտսազը — Վահան Տէրեան ներկայացրել է մի բանաստեղծութեան մէջ, որ նոյնքան ինքնուրոյն է, որքան և գեղեցիկ: Լուսնահարը խենթի պէս հմայուած է լուսնի արծաթ շողերով և անքուն գիշերներ է անցկացնում այդ շողերին հետեւելով: Բանաստեղծը իր տենդագին կարտի մէջ մի լուսնահար է, իսկ սիրած աղջիկն ու երջանկութիւնը՝ լուսնի խուսափող շողերն են:

«Հմայուած լուսնի շողերովս արծաթ,
Սրտում փայելով անսովոր մի տենչ,
Ուրուականօրէն շրջում է անվերջ
Ցարօրէն լինն լուսնուոր զունստ:

Լուսնի շողերը թովիչ-խուսափող
Ստուերիդ նման և նեոու և մօտ,
Ես մի լուսահար, ես մի խենթ լուսնոտ,
Դու ցոլթ, դու ցնորք յախտեան խաբող:

Իմ մէջ ստուել է հիւանդ մի կարտ
Եւ շգտնելու տանջանքը մաշող,
Ես մի լուսահար, դու լուսնկայ շող,
Դու յաւերժաբար և նեոու և մօտ...

✓ Եյս հիւանդագին որոնումների ժամին բանաստեղծը կարում է այն միջավայրից, որի մէջ ծնուել և մեծացել է: Նրա հօգին թռչում է գէպի նոր վայրեր, մի անյագ ծարաւ մղում է նրան գէպի անտես և «անյայտ ճանապարհներ»: Եյս անյայտ ճանապարհի վրայ երազում է նա նոր կայքեր և նոր յեռարաններ: Հին, կղզիացած անկիւնը նրան բաւարարութիւն չի տալիս, հայրենի հողը կորցնում է իր նախնական ոյժը և Հիւսիսը գրաւում է նրան նոյնչափ, որքան և Լարաւը:

«Ես անջատուած եմ հայրենի հողից,
Հայրենի տունըս իմ սրտին օտար.
Ինձ այրում է միշտ մի անյագ թախիծ, —
Յախտեան դիւթող անյայտ ճանապարհ...»

Յուզում են, նոսում նեղեղները մեծ,
 Մազցում վերեւ եւ թաւալում ցած.
 Զմրուխտէ ջրեր, ձեզ ո՞վ վրդովեց,
 Հայրենական տուն, յաւետ մոռացում...

Միեւնոյն է ինձ Հիսիս թէ Հարսա, —
 Մի խննթ տազնսոյ կայ իմ նիւնդ սրտում,
 Կայ իմ նոզու մէջ մի անյազ ծարսա.
 — Յաւիտեան օտար, հայրենական տուն...

Այսպիսով, բանաստեղծի որոնումները դուրս են գալիս իր ծննդավայրի անձուկ սահմանից եւ թեւակոխում են ուրիշ սահմաններ, անցնում են այն վայրերը, ուր ապրում են բանաստեղծի նման մարդիկ եւ նրա պէս երազողները: Իր որոնումների մէջ նա խորապէս մարդկային է, ազատ տեղական նախապաշարութեանց եւ բարձր՝ ազգայնական նկատումներից: Այդ քննարկան բանաստեղծութեան մէջ արտացոլում է նոր ժամանակի հոգեբանութիւնը, որ արդիւնք է նոր անասական պայմանների եւ որ մարդուն ոչ թէ նուազեցնում կամ մանրացնում է, այլ աւելի եւս արժեքաւոր է դարձնում, կապելով նրան իր նմանների բազմութեան հետ: Արտհետեւ իրօք ինչ բարոյական մեծութիւն կ'ունենայ այն «անյազ ծարսա», այն «խննթ տազնսոյ», այն մարդկային իդէալը վերջապէս, որի թռիչքը ճակատագրականորէն կանգ պիտի առնէր հայրենական տան սահմանների վրայ: Իր որոնումների մէջ բանաստեղծը յիշում է դառնութեամբ, որ իր թիկունքում հայրենական տունը թաղում է մշուշի մէջ, բայց այդ եղբրական իրողութիւնը նրան վճատութիւն չէ ներշնչում, որովհետեւ իր առջեւ տեսնում է յաւիտեան դիւթող անյայտ նանսապարի:

Այս «դիւթական» ճանապարհի վրայ է, որ մարդիկ եւ ժողովուրդները միանում են միմեանց հետ եւ քայլում են դեպի մի բարձր նպատակ:

Բայց այդ դիւթական ճանապարհը չի իրականանում բանաստեղծի համար: Իր տենդագին որոնումները եւ իր անյազ ծարսաը գոհացում չեն գտնում մեր մտայն կեանքում: Այնքան հաւատով եւ այնքան ինքնամոռացումով որոնել է նա սէրը, լոյսը, երջանկութիւնը, բայց քանի որոնել է, այնքան աւելի այդ բոլորը հեռացել են նրանից: Եւ հեռոցհեռեւ բանաստեղծի վրայ իջնում է թեքահաւատութիւն, իջնում է մի դառն կասկած, թէ մի գուցէ այդ բոլոր գեղեցկութիւնները կեանքում բնաւ իսկ գոյութիւն չունին եւ թէ մի գուցէ ինքն է ստեղծել իր անուրբների եւ որոնումների ոսկեղէն առարկան:

«Նոու ես անհաս, իմ լուսէ երազ,
Բայց քեզ է սիրտս փայփայում թագուն,
Փռուած է լոյսը շուրջս եւ վրաս,
Անհուն աշխարհում եւ իմ նեզ նոգում:»

«Ըն նոու երկրի ուղին չգիտեմ. —
Գուցէ ես ինքս ստեղծել եմ քեզ...»

Այս թերահաւատութիւնը երկար եւ ապարդիւն որոնումներից յետոյ տիրում է բանաստեղծի հոգուն: Վահան Տէրեան մի քանի բանաստեղծութիւններ ունի, որոնք արտայայտում են հոգեբանական այդ ծանր վարքեանը եւ որոնք ցուցնում են, թէ բանաստեղծը ինչպիսի խորին տագնապներ է ապրում:

«Անանց կարօտն է իմ սիրտը տանջում.
— Արդեօք ո՞ր ես դու, արդեօք ո՞ր ես դու.
Ըն անուշ ձայնն է նշում ու կանչում,
— Բայց դու անհաս ես, յաւիտեան նոու...»

«Նշում եմ դարձեալ անվերջ ճանապարհ,
— Կր ժպտանս արդեօք, լուսեղէն երազ.
Կրցրնս սրտիս թախիծը խաւար,
Կրնետնս անուշ ցուրերդ վրաս...»

«Թափառում եմ ու կարօտով կանչում,
— Արդեօք կը գտնեմ աշխարհում անհուն,
Բոլոր խօսքերում քո ձայնն է նշում,
Բայց անյայտ ես դու, դու շունես անուն...»

Բանաստեղծի կասկածը հետզհետե դառնում է հաստատութիւն եւ նա սարսափով զգում է, որ իր որոնած «լուսեղէն երազը» հեռաւոր եւ անհասանելի մի բան է եւ որ իր անյազ ծարուր՝ երբեք չպիտի յազեցում գտնի: Եւ որքան էլ պատրանքային բանաստեղծի համար ամեն տեղ եւ ամեն մի խօսքում «նրա անուշ ձայնն է հնչում ու կանչում», այնուամենայնիւ դառն ճշմարտութիւն է այն, որ նա անյայտ է, նա անուն չունի:

Այսպէս են փչում բանաստեղծի ոսկեղէն երազները իրականութեան լիքի ժայռի հանդեպ:

Բայց եթէ լոյսը, սերը, երջանկութիւնը իրենց վտեմ առումով գոյութիւն չունին, թերեւս գոյութիւն ունի կիւր, մարմինը, որ կարող է բանաստեղծին շունչ տալ:

տեղծի հոգու վրայ կախուած խաւարը փարատել եւ լուծել նրա կեանքի ողբերգական պրօբլեմը: Եւ Վահան Տէրեան բուռն կարօտով երգում է «արիւնատենչ ու մեղսական ցանկութիւնը», երգում է կնոջ աչքերի «խորութիւնը հրգեհափառ»:

«Ըն մազերի ցնորական փայլը պայծառ,
Ժայռից իջնող ջրվէժի պէս առատանոս.
Ըն աչքերի խորութիւնը հրդեհափառ,
Ուր վառուած են մութ ցանկութեան ջւանք անխօս.
Ըն ժպիտը թունոտ ծաղկանց ըոյրի նման
Որ տիրաբար սպրեցնելով մահ է բերում,
Ըն խննթ մարմնի սարսուռները երջանկութեան
Ախտաբորբոք արեւներ են բոցափառում...
Թոյլ տուր սուզուեմ քո աչքերի անդունդը մութ
Թոյլ տուր ծծեմ քո մազերի բուրմունքն անուշ,
Բորբոքիք ինձ քո յոյզերով քաղցր ու անզութ,
Մարիք իմ մէջ, մարիք իմ մէջ ցնորք ու յուշ...»

Բայց անշուշտ այն, ինչ որ չկարողացաւ տալ անուրջ աղջիկը, առաւել եւս շեն կարող տալ հրգեհափառ կնոջ «մարմնի սարսուռները»: Բանաստեղծը մի վայրկեան միայն երեւակայում է, թէ նրանք «երջանկութեան արեւներ են բոցափառում»: Ճշմարտութիւնն այն է սակայն, որ նրանք հանգցնում են բանաստեղծի հոգու ներքին կրակը, այն միակ սկզբունքը, որով մի մտաւորական-իդեալական գոյութիւն կարող է շնչել եւ գեղեցկութիւն ստեղծագործել: Կասկածի եւ թերահաւատութեան ծանր ժամին Վահան Տէրեան գնաց դէպի «արնոտ համբոյր», բայց այս արիւնոտ համբոյր բանաստեղծի համար «թոյն» միայն ուներ, վայրկենական եւ խաբուսիկ քաղցրութիւնից յետոյ: Եթէ բանաստեղծի անուրջներն ու որոնումները — հոգու եւ լոյսի որոնումները — զուր անցան եւ նրա մէջ «մարեց մի լոյս սրեգակ», «օձեղէն մարմինը» չէ, որ պիտի կարողանայ վառել հրգեհը:

«... Իմ մէջ մարել է մի լոյս արեգակ,
Մահու գիշերն է մի՞նել իմ հոգում, —
Մի՞թէ դու պիտի վառես նոր փափագ,
Մի՞թէ դու պիտի հրդեհես յուզում...»

«Կանգնել ես որպէս անյաղթ հրապոյր,
Մօտեցար ահա կարող ու խոնարհ,

Մթնում բորբոքուեց մի արնոտ համբոյր
Մնորի պէս թովիչ, ցաւի պէս խնչառ։»

—
«Օձեղէն մարմնով փարել ես կրծքիս, —
Նւ ըո ցանկութեան անդ փոթորկում
Անէծք է թափում անկարող հոգիս
Նւ անյոյս ճշում ըո թունոտ զրկում...»

Բանաստեղծը ձգտում էր մեծութեան եւ հզօրութեան, սակայն դրա փոխարէն նրա հոգին կատարելապէս «անկարող» է դառնում, որովհետեւ մեղքի վայելքի մէջ ոյժը սպառոււմ է եւ մեղկութիւնն է միայն տիրապետում։ Բանաստեղծը ուզում էր օրհնութիւն — սակայն «ցանկութեան փոթորիկը» նրան անէծք է միայն բերում։ Եւ բանաստեղծը վերջ է վերջոյ իր անուրջների եւ որսուձների մէջ, իր անյազ ծարաւի եւ անանց կարօտի մէջ յուսախաբոււմ է եղբրակա՛նորէն եւ մեռւմ է բացարձակապէս ձեռնուձայն։ Երբանկութեան ճամբաները փակ են նրա առջեւ, այն երբանկութեան, որ նա երազել էր պատանեկան խանգա՛վառութեամբ, եւ ինքն էլ կոյր է լոյտի եւ անուրջ՝ ազնկայ հանդեպ։

—
«Ըո աչքերի դէմ իմ աչքերը՝ կոյր,
Կայ ըո հոգու մէջ անթափանց մի մութ,
Ըո մութ հայեացքում կայ մի քնքուշ սուտ՝
Ընզ միշտ թագցնող մի նուրբ վարագոյր...»

—
«Փակ են ըո սրտի հեռուններն իմ դէմ,
Ետէտ քեզ կապուած՝ քեզ օտար եմ ես.
Նրբ խենթ խնդութեամբ փայփայում եմ քեզ՝
Նւ սիրում եմ քեզ եւ քեզ չգիտեմ։»


—
«Փակ են ըո սրտի հեռուններն իմ դէմ,
Ըո աչքերի դէմ իմ աչքերը՝ կոյր...»

—
Ըհա պատանեկան անուրջների եւ որսուձների ճակատագրական վերափոթութիւնը։ Ըհա Վահան Տէրեանի կեանքի եւ բանաստեղծութեան առաջին շրջանը. անմեղ եւ զեռաստի, միամիտ իր երազների մէջ, յախու՛ն իր ցանկութիւններով, անկեղծ իր ոգեւորութեամբ եւ ջերմ իր կսկծալի սիրոյ

մէջ: Կեանքը նրա համար մի ոսկեղէն հերթաթ էր այդ շրջանում, որին գի-
մում էր նա անյազ ծարաւով, հաւատով, թախիծով: Այս թախիծը որոշ
ժամանակ քաղցրութեան եւ երջանկութեան թախիծ էր, բայց երջանկու-
թեան պատրանքը վերացաւ — եւ սրտի յատակում մնաց անթախիթար վիշտը:
Այդ վայրկեանին է զուգադիպում բանաստեղծի այնքան ազիտորմ ճիշդ՝

«Անուրջներս երկնածին
Գնացի՛ն, զնացի՛ն...»

Եւ այնուհետեւ բանաստեղծի համար սկսում է մի ուրիշ շրջան,
հիասթափութեան եւ մեկուսացման մտայլ շրջանը...



VI.

Հ Ի Ը Ս Թ Ը Փ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Մ Ե Կ Ո Ւ Ս Ը Տ Ո Ւ Մ

Վ Իր որոնումների եւ անուրջների մէջ բանաստեղծը վերջ ի վերջոյ գոհա-
ցում չէ ստանում: Կեանքը եւ մարդիկ մերժում են նրան այն, ինչ որ նա
ցանկանում էր այնքան կարօտով: Բանաստեղծը իր պատանեկան եւ երիտա-
սարդական յախուռն տարիների մէջ կեանքը տեսել էր այլ տեսակետով:
Ցարաբախտաբար երազող մարդու այս տեսակետը շատ յաճախ չէ զուգադի-
պում կեանքի առարկայական կերպարանքին, եւ շուտով երեւան է գալիս
անխուսափելի երկուութիւնը: Եւ որքան ուժեղ է լինում սերը եւ հիա-
ցումը, այնքան ցաւագին ու դառն է լինում հիասթափութիւնը:

Վահան Տերեւան հաւասարակշռութիւնը կորցնում է այս սարսափելի
իրականութեան հանդէպ: Լրջաշալի երազներով եւ «երկնածին անուրջներով»
նա կեանք էր մտել եւ անդրդուելի հաւատք ուներ, թէ պիտի ապրի բարի
եւ երջանիկ աշխարհում, բարի եւ երջանիկ ոչ միայն ինքը, այլ եւ շրջապա-
տող բոլոր, արարածները: Իր անձնական հաճոյքները նա որոնում էր մարդ-
կային ընդհանուր հաճոյքների միմտողորտում եւ որոնում էր սերն ու երջան-
կութիւնը առհասարակ:⁴

Վահան Տերեւանի հոգին ձգտում էր ընդհանուր ներդաշնակութեան,
այն բանաստեղծական չարմենիային, որ պէտք է տոն տար աշխարհիս կար-
գերին եւ հաւասարակշռէր մարդկութեան բարիքը: Աիրով եւ ջերմութեամբ

լեցուն էր նա զեպի բոլոր մարդիկ, «Հայրենի» թե «օտար», եւ իր երգերը հնչեցնում էր ամենի համար՝ ծանօթ թէ անծանօթ, երջանկութիւնը այսպիսի միշտ վարում էր պատկերացնում նա — եւ մարդկային գոյութիւնների մէջ նեղ, անձուկ սահմաններ չէր ընդունում:

Բայց կեանքի մէջ ոչ մէկն է իրականանում եւ ոչ միւսը, ոչ մարդկութիւնն է երջանիկ եւ ոչ բանաստեղծը:

Առաջին շրջանի ներգործուն ձգտումներից յետոյ — եթէ միայն անուրջ եւ որոնումը կարելի է ներգործական համարել — բանաստեղծի վրայ իջնում է մի ճակատագրական կրաւորական տրամադրութիւն: Նա ուղում է մտանալ ամենին, մտանալ իր սէրը, երազները, աննշանները: Եւ ինչպէս Համլէտ հոգեկան ծանրածանր կրքերից յետոյ ցանկութիւն էր ունենում «մեռնել, ննջել», այնպէս էլ բանաստեղծը անծայր եւ ազարդիւն կարօտից յետոյ փափագում էր՝ շսիրել, շտենշալ, շկանշել: ⁴

Ղաւհան Տէրեան իր հոգեկան այս ծանր տրամադրութիւնը երգել է մի շարք բանաստեղծութիւնների մէջ, որոնք գրուած են աբրբեր յաջողութեամբ, քայց հաւասար անկեղծութեամբ: Մեկը այդ բանաստեղծութիւնների մէջ, փոքրիկ եւ ըստ երեւոյթին անուրբ, զարմանալի անկեղծութեամբ եւ տխուր երաժշտականութեամբ պատկերացնում է Ղաւհան Տէրեանի հիասթափ հոգին:

«Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,
Ամենին մոռանալ,
Չսիրել, չսիրենել, չսփոսուալ —
Հեռանա՛լ...
Այս տանջող, այս ննջող ցաւի մէջ,
Գիշերում այս անջող
Արդեօք կայ իրիկուայ մոռացման,
Մոռացման ոսկէ շուր...
Մի վայրկեան ամենից նեռանալ,
Ամենին մոռանալ. —
Խաւարում, ցաւերում քարանալ
Մեն-միայն...
Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
Ամենին մոռանալ.
Չսիրել, չտենշալ, չկանշել,
Հեռանա՛լ...»

Բարոյական մի մոռալ տրամադրութիւն է սա, որ պատահում է կեանքում շատ շատերին: Մենք ամենքս մեր երիտասարդական եւ պատանեկան երազների շարաշար պարտութեան ժամին այսպիսի հոգեկան վիճակ եւ այդպիսի դառն, կրաւորական տրամադրութիւն շատ ենք զգացել: Բա-

նաստեղծը բռնել է հոգեկան այդ հանրածանօթ վիճակը, որ ընդհանուր է բոլոր տեղաշարժներին և բոլոր շղանդներին, նկարագրել է այն պարզ, համառօտ, բայց մահասարուս խոսքերով, և նրանկարագրութեան մէջ — աւելի շուտ նրա երգի մէջ — իւրաքանչիւր զգացող հոգի կարգում է իր կեանքն ու իր հիասթափման ծանր շրջանը:

Վահան ցերեանի հիասթափութեան կենտրոնը գտնուում է իր շրաւարարուած սիրոյ մէջ: Ահնը, սիրած աղջիկը նրան պիտի կապէր մարդկութեան հետ: Եւս կինը նա պատկերացնում է և և կրազում է իր այնիւ գծերի մէջ, որպէս մարդ, որպէս ընկեր միաժամանակ: Ինչպէս հաճոյքը նա երեւակայում է տիեզերական հարմնիտյի մէջ, նոյնպէս էլ իր երջանկութիւնը նա գտնում է սիրոյ և ընկերութեան բարոյական կապի մէջ:

Բայց բանաստեղծի այս բուռն ձգտումը չէ իրականանում և նրա կրազած, կարուած ներդաշնակութիւնը խուսափում է նրա որոնող ձեռքի տակ: Բանաստեղծը կարող է ունենալ կրքի և ցանկութեան առարկան, բանաստեղծը կարող է վայելել կինը իր բոլոր կախարհական շնորհների մէջ, բայց այդ չէ նրա ձգտումը:

Միւս կողմից՝ բանաստեղծը կարող է քոյր ունենալ և զթառաւ մի սիրտ, որ կը հոգայ, կը խնամէ նրան: Բայց այս գութը առանց սիրոյ և առանց խորունկ վայելքի — գերազանցապէս անկատար և անբաւարար է բանաստեղծի համար: Նա որոնում է քոյր և կին միաժամանակ, նա որոնում է առաքինութիւն և վայելք՝ մարդկային, բնական ներդաշնակութեան մէջ: Մարդը, մանաւանդ մաւառական, նուրբ մարդը այդ ներդաշնակութեան անդիմադրելի պահանջն ունի բանաստեղծը ապրում և շնչում է այդ պահանջով և այդ բուռն կրազով: Եւ կրք որ չի գտնում այն, հպարտութեամբ և խորին վշտով մերժում է միայն քրոջական զգացումը, մերժում է լինել կարեկցութեան ողորմելի առարկայ: Կեանքը գին չունի նրա համար այդ անկման մէջ և բանաստեղծական բարձր հոգին չի կարող մութացկանի պէս զթութիւն ազերսել:

«Ոչ տրտունջ, ոչ մրմունջ սգաւոր,
 Հեռացիր, մոռացիր ինձ յաւէտ.
 Իմ ուղին միշտ մի՞ին, մենաւոր,
 Կը գնամ իմ դժկամ ցաւի հետ:

Իմ նամբան անվախճան մի գիշեր,
 Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտայ. —
 Հեռացիր, մոռացիր, մի յիշիր,
 Ինձ այդպէս, քրոջ պէս մի զթա...

Յուսարեկ մութ ու մէզ թող լինի,
 Իմ վերեւ թող արեւ չինդայ,
 Լոկ երկունք, լոկ արցունք թող լինի,
 Ինձ այդպէս, քրոջ պէս մի զթմա՛ . . . »

Ահրած աղջկայ մերժումից յետոյ բանաստեղծը հիասթափուած եւ դառնաւուած է ոչ միայն սիրած աղջկայ, այլ եւ մարդկութեան դէմ: Ախշար չէ մեռած իր անհաստական սահմանների մէջ, որովհետեւ մարդկային հոգին ձգտում ունի մի անհատի շարութիւնը ամբողջ տեսակին ընդհանրացնել: Աղջիկը մերժեց բանաստեղծի կարօտագին սերը, որովհետեւ այդպէս են մարդիկ, որովհետեւ նրանք չեն կարող հասկանալ մաքուր, անարատ սիրտը եւ մի անմեղ պատանու նուիրական զգացումները: Եւ յս արամազրութիւնը նրա մէջ ծնեցնում է մեկուսացման անխուսափելի պահանջ: Բոլորն էլ նոյնն են — մտածում է, աւելի ճիշտ՝ զգում է բանաստեղծը եւ չի ուզում աւելորդ եւ արագրդին փորձեր անել միւս մարդկանց շրջանում: Մտնուանդ որ խորապէս եւ անկեղծ սիրող մարդը հոգեբանորէն չի կարող փորձեր անել, որովհետեւ նա սիրում է մի անգամ միայն, եւ այն, ինչ որ մի անգամ խորտակուած է խորտակուած է ընդ միշտ: Ահրած աղջկանից անշատման ժամին՝ դեռ ուժեղ չէ հիասթափութիւնը բանաստեղծի սրտում: Երդեպք վէրքն է թարմ, թէ տակաւին անտրոշ յոյսեր ունի բանաստեղծը: Բայց հետզհետեւ գիտակցութիւնը աւելի խորանում է, վիշտը սկսում է տարածուել բանաստեղծի ամբողջ գոյութեան մէջ, բոլոր յոյսերը շքամում են եւ իջնում է նրա վրայ մի անմայր, անսահման թախիծ: Ընտրանում է այն զգացումը, թէ այլ եւս ցաւը անդարմանելի է, թէ մարդկանց շրջապատը ոչ մի կերպ չէ կարող բուժել բանաստեղծի խորին վէրքը: Հիասթափութիւն եւ մեկուսացում ամենից: Մեկուսացում մարդկանցից, որոնք նրա « սկեղէն հեքեմեր » անարգեցին, որոնք նրան զլացան երջանկութեան նուազագոյնը: Եւ թող բանաստեղծը մենաւոր լինի իր անտանելի ցաւի հետ, թող նրա վրայ այլ եւս արեւ չինդայ, թող մինչեւ իսկ մեռնի նա հեռուոր, անձանթ վայրերում եւ թող մարդիկ նրա վրայ արցունք չթափեն:

« Իմ գերեզմանին դուք չմտննար,
 Հարկաւոր չէ ինձ ոչ ծաղիկ, ոչ սուգ.
 Եսանկարծ կը գարթնի ջերմ լալու փափազ,
 Սիրտս չի գտնի ոչ մի արտասուք:

Իմ գերեզմանը թող լինի նեղում,
 Ուր մահացել են շշուկ, երգ ու ծայն.
 Թող շուրջս փռուի անանց լուծիւն,
 Թող ինձ շխշին, թող ինձ մոռանան:

Իմ գերեզմանին դուք շփոթե՛նաք,
 Թողէք որ հանգչի իմ սիրտը յոգնած,
 Թողէք որ լինեմ նեղաւոր, մենակ. —
 Չզգամ, որ կայ սէր եւ ցնորք եւ լաց... »

Այս հիասթափութեան եւ միայնութեան մէջ թերեւս հայրենական տունը եւ հարազատ մայրը կարող էին միտնարել բանաստեղծին, ամօրել նրա ծանր վշտերը: Աւետիք Իսահակեան իր դառնութեան սեւ վայրկեաններին, մարդկանցից յոգնած եւ սիրած աղջկանից լքուած, զիմում է դէպի իր սիրելի մայրը եւ նրա ծառ հոգեկան թեթեւութիւն է զգում:

Բայց Աւհան Տէրեան զուրկ է այս միակ միտնարութիւնից: Բանաստեղծի պատանեկան, երիտասարդ տարիներում նրա մայրը չկար — այդ պատճառով եւ նրա բարոյական տագնապը աւելի եւս անյուսալի էր: Աւհան Տէրեանի բանաստեղծութիւնների մէջ այս պակասը իրօք որ շատ զգալի է: Այդ նուրբ քնարերգու բանաստեղծը, որ յենարաններ էր փնտռում բարոյական հաւասարակշռութեան համար, շատ բան պիտի կարողանար ստանալ հարազատ, կենդանի մօրից: Ո՛վ կարող է ասել, թէ ինչպէս կը վերջանար Իսահակեանի « վէրքի » տխուր պատմութիւնը, նրա կեանքի ծանր ողբերգութիւնը եթէ նա չունենար այն եակը, որ իր գոյութեամբ իսկ ամբրում է վշտերը:

Աւհան Տէրեան չունէր այդ յենարանը — եւ նրա պակշիւն աւելի եւս մնայլ գոյն ունի:

Մօր պէս ամօրիչ դեր է կատարում յուսահատական դժուարին վայրկեաններին հայրենական տունը, ծննդավայրը, այն երկիրը, ուր բանաստեղծն անց է կացրել իր մանկութեան ոսկի տարիները: Բայց ծննդավայրի գաղափարը մեծ չափով կապուած է մօր գաղափարի հետ, եւ եթէ չկայ վերջինս՝ առաջինը կորցնում է իր փրկարար հրապոյրը: Մօր մահից յետոյ՝ հայրենական տունը աւերակ է դառնում, զրկում է լոյսից եւ կենդանութիւնից — եւ իրրեւ այդպիսին աւելի եւս ծանրացնում է բանաստեղծի ողբերգութիւնը:

Ա՛հ, այս ցուրտ երկրի անյայտում անհուն
 Ընկնել եւ կորչել եւ ննջել յաւէտ,
 Ոչնչանալ եւ մոռացուել քեզ հետ,
 Աւերուած երազ — հայրենական տուն... »

Լիաթմափութեան և մեկուսացման այս շրջանը Ղաճան Տերեանի համար հաւատքի բացակայութեան շրջան է: Պատանեկան ոսկի հերեթիքը և անսահման հաւատքը ունչացած են այստեղ: Դա չէ հաւատում այլ եւս ոչ սիրած աղջկան, ոչ շրջապատի մարդկանց և ոչ հայրենի երկրին — որովհետեւ բոլորն էլ նրա համար անցած «զօրցներ» են, «աւերուած երազներ» են: Եւ յիշ շրջանում նրա մէջ չկան ներգործական ոյժեր, որոնք լըս սիւսեն հին, մարած աւերակների վրայ և կենդանութիւն տան բանաստեղծի գոյութեան: Կրաւորական մտայլ սրամազրութեան շրջան է դա՝

Մոռանալ, մոռանալ, մոռանալ,
և կամ՝

Լռութիւն, լռութիւն, լռութիւն անսահման:

Հազարաւոր մարդկանց մէջ ապրում է նա, որպէս «պաղ մարդկանց» մէջ՝

Որպէս տրտում
Անսպասում,
Մենակութիւն,
Մենակութիւն...

Եւս կրաւորական սրամազրութիւնը և հաւատքի այս խիստ բացակայութիւնը բանաստեղծի համար ստեղծում են ծանր ուղերթութիւն: Լիաթմափութիւնը և մեկուսացումը շրջապատող մարդկութիւնից՝ շպտեք է շփոթել բնու բանաստեղծի անհատականութեան հետ, որ ներգործուն զգացում է և որ իր ճիշտ ըմբռնման մէջ՝ շպտի հակադրուի հաւաքականութեան: Ղաճան Տերեան անհատեւելով իր շրջապատից և կտրուելով հաւարականութիւնից՝ կորցնում է կենտունակութեան ոյժը և դիմում է գեղի սպառում: Դրա մարդկային և բանաստեղծական զօրութիւնը այս մեկուսացման և հիատթափութեան մէջ դառնում է պարզապէս տկարութիւն:

Եւս շրջանը Ղաճան Տերեանի համար պարտութեան շրջան է, որովհետեւ նա կորցնում է այդ ժամանակ այն հիմնական տարրերը, որոնք ստեղծում են մարդկային և բանաստեղծական մեծութիւն: Արած աղէկիւր, որին նա նուիրուած էր իր պատանեկան բոլոր երազներով — զոհացում չէ տալիս նրան: Ըրջապատը, որի մէջ նա իրրեւ հասարակական էակ պիտի ապրեր և շնչեր — չի հասկանում նրան: Հայրենիքը և ծննդավայրը, որտեղ նրա գոյութիւնը սկզբնաւորուել էր — «աւերուած երազ» է դարձել նրա համար:

Եւ հիատթափութիւնն ու մեկուսացումը գառնում է բարոյական անկման մտայլ ժամանակաշրջան: Կորցնելով հաւատքն ու ներգործական ոյժը, կորցնելով ստեղծագործական աստուածային իդէալները՝ նա կորցնում է նաեւ իր գոյութեան բովանդակ հիմունքը: Գլուխը շփոթած և զգացումները խառնակ՝ նա դիմում է գեղի կերպը և ցանկութիւնը, անգիտակ-

ցարար փնտաելով այնտեղ գոյութեան յնարաններ: Բայց տարփանքների և գինտութեան մէջ հոգու ճիշտ աւելի ուժգին է լուսւմ և աւելի ողբերգական է դառնում ներքին լացը: Այս անսահման տխուր վիճակը երգում է նա մի շարք բանաստեղծութիւնների մէջ, որոնց մէջ բնորոշ է «Ախհի եղբրքին» և որ իրար պէտք է նկատել նրա յուսահատական արամազրութեան խառցած կէտը.

«Ունկնդիր եղայ հողմի խենթ երգին,
— Անամոք ցաւի սրտմաշո՛ւկ նուագ.
Կանգնած եմ՝ մոայլ վիհի եզերքին,
— Տրտում է հողիս, հիւանդ ու մննակ...

Անկերջ մի ցաւ է իմ՝ սիրտը ճնշում՝,
— Ես մոռացել եմ՝ Արեւի ուղին.
Անուրջ օրերի լոյսը չեմ՝ յիշում՝,
— Ինձ ո՞վ է մատնել այս մառախուղին...

Ունկնդիր եղայ հողմի խենթ երգին.
— Ես էլ եմ ուզում՝ հեկեկալ անյազ.
Կանգնած եմ՝ մոայլ վիհի եզերքին,
— Տրտում է հողիս, հիւանդ ու մննակ...

✓ Այս յուսահատական և պարտութեան արամազրութիւնը միայն Ասահան Տերեանի անձնական արամազրութիւնը չէր: Եթէ է նրա անուրջներն ու որոնումները իր սերնդի որոնումներն էին, այս պարտութիւնն ու անկուճը ևս ժամանակի ծանր յետաշրջման հետ էին կապուած: Բանաստեղծը ապրում էր 1905 թուի յեղափոխութեան յաջորդող լքման տարիներում և անբուսափելի կերպով կրում էր պատմութեան խորին ազդեցութիւնը: Եւ որքան էլ անհաստական շեշտ ունենայ Ասահան Տերեանի այս եզերական բանաստեղծութիւնը, ոչ մի կասկած չկայ որ նա ներշնչուած էր նաեւ սցիտալական կեանքից և համայնական արամազրութիւնից:

Գէպի ուր էր գնում Ասահան Տերեանի և իր սերնդի յուսահատական արամազրութիւնը — արդեօք գէպի մահ ու օշնաջնում, թէ ծանր գալարումներով գէպի մի նոր կեանք:

Հատերը այդ շրջանում դարձան անբուժելի յոստեաններ, շատերը մտացան մարդկութեան և ստեղծագործութեան յաւիտենական իրէականները: Առյթկեանի կեանքը և ժամանակի պատմութիւնը իր դաժան անիւների տակ խեղդեց շատերին: Բայց շատ շատերն էլ փորձեր արին դուրս գալու ծանր «մառախուղի» միջից և վերստին յիշելու «անուրջ օրերի լոյսը»: Ասահան


Տէրեան վերջինների հետ էր, որին շխարհացան նուաճել այս «ունայնա-
շունչ տխուր դաշտերը» եւ որ ձգտեց դէպի վեր, դէպի արեգակ: [Եթէ սի-
րած աղէիկը, մարդկութիւնը, հայրենիքը, կենսական բոլոր զուարճութիւնները
գոյութիւն չունին, գոյութիւն ունի գոնէ տինզերքը իր «պայծառ լեռնագա-
գաթներով», որոնց կարող է փարել բանաստեղծի յաւերժ տենչացող հոգին:

«Հեռաւոր, անել լեռնագագաթներ,
Պայծառ արեւի զահեր հիասքանչ,
Սիրոս մեռնում է, լեռնագագաթներ,
Ներքեւում նիրհող դաշտերում կանաչ:
Իմ երազները ձեր գիրկն են թողում —
Բարձր, դէպի վեր, արեգակին մօտ,
Ուր խնթ ըոցերի խորձեր դողդոջին
Լուս թալկանում են երկնում անաղօտ:
Հեռո՛ւ, օ նեռու այս ունայնաշունչ
Տխուր դաշտերից, հանդարտ ու անկեանք.
Գրկիր ինձ անել զագագաթների շունչ,
Սիրոս բորբոքիր, բարձրութեան բերկրանք:
Թող իմ աչքերը լոյսից կուրանան,
Թող սիրոս լցուի արեւի բոցով.
— Օ, երջանկութիւն անել բարձրութեան,
— Լուսեղէն երկնի անեզրական ծով...»

Եւս պայծառ լեռնագագաթները բանաստեղծի մեկուսացման վերջին
կէտն են, նրանք հետու են մարդկութիւնից եւ հաւաքականութիւնից: Բայց
նրանք մահ ու ոչնչացում չեն: Նրանք այն վերջնական հնոցն են, որտեղ բա-
նաստեղծի հոգին պիտի «բորբոքուի» եւ զտուի, լցնելով նրա ողջ գոյութիւնը
Երեւի լուսեղէն բոցով:

Նրանք Զբաղաշտի բարձունքներն են եւ Գրիստոսի անապատը: Բայց
թէ այդ բարձունքները եւ թէ այդ անապատը կեանքի եւ մարդկութեան
մերժում չեն, այլ կեանքի եւ մարդկութեան զժուարին նախապարաստու-
թիւնն են:

Եւ յատեղից պիտի ծագի առաւօտը եւ այդտեղից պիտի գայ լուսապայ-
ծառ վերագարձը:]



✓ Միտքը եւ գիտակցութիւնը Վաշան Տէրեանի մեկուսացման ծանր շրջանում շարունակում էին գործել եր պարտութեան մասյլ տարիների ընթացքում նա կարողացաւ պահպանել բարոյական հաւատարակութիւնը եւ կարողացաւ վերջ ի վերջոյ յաղթահարել իր մէջ ներխուժող բացասական, ժխտական տարրերը: Վաշան Տէրեան կամքի որոշ տոկոսութիւն ունեցաւ՝ գիմադրելու համար ոչնչացման եւ մահուան ոյժի գեմի նա կուրորէն շնթարկուեց յոռի կրքերին եւ զգացումներին, որ պաշարել էին նրան, եւ կարողացաւ հերոսաբար անցնել այն տագնապը, որ ինքն անուանում է տանջանքի գիշեր:

Արձուձների եւ անուրջների շրջանում, ինչպէս եւ հիասթափութեան եւ մեկուսացման մէջ բանաստեղծը կեանքի եւ աշխարհի մասին առարկայական ըմբռնում չունէր: Առաջին շրջանում նրան ամեն ինչ պատկերանում է վառ գոյներով: Անգիտակից պատանութեան շրջանն է այդ, որ անցնում է անթարթի պէտ ներկորդ շրջանում նրան աշխարհը անսահման կերպով մասյլ է երեւում: Հաւատքի պարտութեան շրջանն է այդ, որ թւում է թէ անվերջանալի պիտի լինի:

Բայց բանաստեղծի միտքը եւ նրա ստեղծագործական անյայթելի ոգին կենդանի էին, եւ ամեն որ սնունդ էին ստանում կենդանի իրակաւութիւնից: Արտհետեւ որքան էլ բանաստեղծը մեկուսացած, առանձնացած լինէր հաւաքականութիւնից, այնուամենայնիւ նրա «բարձունքներն», ու «անապատը», սահմանափակում էին մի կեանքով, որ մարդկութեանն էր: Եւ յ մեկուսացման մէջ Վաշան Տէրեան հասկանում է, որ անուրջը եւ երազը ապրող անհատի համար յաւերժական գոյութիւններ չեն, որ նրանք իւրաքանչիւրի համար անհրաժեշտորէն սահմանափակուած են: Բայց եթէ նրանք կարճատեւ են մի անհատի նկատմամբ, երկարատեւ են, թերեւս եւ յաւերժական են մարդկութեան նկատմամբ, որքան մարդկութիւնը յաւերժական է:

Այսպիսով, իր մեկուսացման մեջ փոխադրվում է բանաստեղծը, խորհում է կեանքի և աշխարհի մասին և գտնում է մի ըմբռնում, որով նա հետզհետե դառնում է զեպի կեանքը, զեպի հասարականությունը:

Բանաստեղծը հասկանում է, որ ամեն ինչ յարափոփոխ է մեր կեանքում և աշխարհում, որ ծնունդ մանուկը մեռնում է վաղը և այսօրուայ սիրողը վաղն այլևս չի ապրում: Բայց գրանով հանդերձ՝ կեանքը չի ուղնչանում, որովհետև մեկ ուրիշը ծնւում է այնուհետև և մեկ ուրիշը սկսում է սիրոյ և երջանկութեան շրջանը:

Հասարականությունը ապրում է այսպե՛ս անհատի ունչացումից յետոյ և տելթէ տխուր է այն, որ մեկի վայելքը կարւում է իսպառ, սրտապնդիչ է այն, որ մեկ ուրիշը շարունակում է նրա կեանքը: Այս բարոյական ըմբռնումը և վերաբերումը բանաստեղծին հաշտեցնում են ոչ միայն մահի հետ, այլ և կեանքի հետ: Բանաստեղծը հասկանում է, որ կեանքը մի պտոյտ է, որ պտտում է անվերջ և անվախճան:

Այս հանդարտ և գիտակցական տրամադրությունը արտայայտել է նա մի բանաստեղծութեան մեջ, որ իր անմշակութեան և պարզութեան մեջ իսկ, զարմանալի կերպով յուղիչ է և խորապէս հաղորդական: Այդ բանաստեղծութիւնը մարդկային անցողական կեանքի սրտաուշ պատմութիւնն է: Նա մի ամբողջ վէպ է, որ մեզ տխրեցնում է թէև, բայց որ չէ յուսահատեցնում և չէ դառնացնում՝ զեպի ապրող աշխարհն ու ապրող մարդը:

Այդ բանաստեղծութիւնը մեզ հաղորդում է այն տրամադրությունը, թէ ոչ որ չի կարող կեանքի գաղտնիքն իմանալ, թէ գժուար է, անկարելի է վերբուծել ամբողջ մեր կեանքը, քանի որ՝

Ոչ վերջ կայ, ոչ սկիզբ այս երզում,
Նրէկ նս, այսօր դու, վաղը նա...

Եւ քանի որ այդպէս է, քանի որ աշխարհի կարգով և բնութեան անգիմահարելի անօրինութեամբ իւրաքանչիւրս ապրում ենք մեր ժամանակի ոսկեղէն ներեալով, ապա ուրեմն պիտի կարողանանք հաշտուել աշխարհի հետ և բանաստեղծի պէս պիտի կարողանանք մրմնջալ անխի հանդէպ.

«Պտտուիր, պտտուիր, կարուսէլ,
Նս քո երգը վաղուց նմ լսել...»

Այս տրամադրությունը երևան է գալիս նաև փոխադրական քնարական մի գեղեցիկ բանաստեղծութեան մեջ, որ կրում է «Հատուած», խորագիրը և որ խառցում է բանաստեղծի անցրած տարբեր շրջանների: Վահան Տերեան յիշում է այդտեղ իր «լուսեղէն երազի», և իր «երջանկութեան ցնորքների», մասին, որոնք պարտուեցին խաւարչտին կեանքում: Այդ խորին թախծութեամբ ներկայացնում է այն բարոյական մասլը, որի

մէջ բանաստեղծը անցրեց իր գիտակցական կեանքի կարեւոր մասը եւ որ յաճախ երեւում է որպէս միակ յատկանշանական կողմը նրա բանաստեղծական գործի:

“... Եւ մութ էր շուրջս եւ խաւար անհուն —
 Իմ խարուած սրտում միմամած գիշեր,
 Եւ պաղ եւ ծանր, ծանր, որպէս քար,
 Եւ տաղտկութեամբ լի եւ անվերջ երկար,
 Անծիր եւ անհուն... ”

... Եւ համբ էր ընդ միշտ աշխարհն ինձ համար —
 Եւ օտար եւ մութ...
 Ես ընկած էի անգոր ու մուրթ
 Եւ յաւէտ մենակ եւ անդարձ մենակ,
 Անանուն, անյայտ, անծանօթ հեռուում... ”

Հաս երկար է թւում այս չրջանը բանաստեղծին, անծիր եւ անհուն, սակայն եւ այնպէս այդ երկարատեւ եւ ծանր տաղանայից բանաստեղծը դուրս է գալիս զուտ կերպարանքով, եւ մի նոր խնդութիւն ցնում է նրա ողջ գոյութիւնը—

“... Ինձ անեղ թուաց խնդութիւնս նոր,
 • Կարծես մի վերին եւ նուրբ հրաշքով
 Լուսացաւ իմ մէջ առաւօտն անհուն —
 Ու թեթեւ թուաց կեանքս երկրային,
 Որպէս առուակը սարերից իջնող,
 Որպէս ամպերի շարքը ոսկեղէն
 Գարնան արեւող երկնքում շուղ... ”

Բանաստեղծը դուրս գալով իր “անյայտ” եւ “անգարձ”, հեռաւորութիւնից՝ միանում է “քարին”, ու “ջրին”, միանում է բնութեան ու աշխարհին — եւ նրանցով՝ յաւիտենութեան:

“...Ճիշ հաննցի ես սիրով լուսեղէն,
 Աղաղակեցի օրհներգու ձայնով,
 Սիրտս նետեցի քարին ու ջրին,
 Խառնեցի հոգիս աստղերի երգին,
 Պարզեցի կեանքս պարզ ու խնդազին
 Յաւիտենութեան,
 Յաւիտենութեան... ”

Իր հիասթափութեան եւ մեկուսացման մէջ Վահան Տէրեան ունչութիւն էր տեսնում: Մինչեւ իսկ այն ստոյգ կենդանի ժամերը, որ նա ուներ իրր պարզ մարդ, նրան թւում էին անշարժացած, մահացած:

Սակայն իր վերադարձի ժամին, նրա մէջ մի անհուն առաւօտ է լուսանում եւ երկրային կեանքը զարմանալի կերպով թեթեւ է թլոււմ նրան: Եւ քանի որ կեանքն ու աշխարհը ըմբռնում է նա որպէս արունակութիւն մի մեծ ամբողջի, որպէս զարգացում մի հիմնական սկզբունքի, ինքն էլ սկսում է գիտել իրեն՝ որպէս մի մասնիկը յաւիտեանութեան...

Եւ յ հոգեբանական կատարելագործութիւնը նրա մէջ առաջանում է ծանրածանր պայքարից յետոյ, մի դաժան ու սարսափելի պայքար, որի մէջ շատերը ընկան եւ շատերը կեանքը անիծեցին: Բայց այդ հոգեբանական զուսմն ու բխբեղացումը եթէ մեծ յափով սօցիալական ոյժերի մշտական գործունեութեան հետեւանքով տեղի ունեցաւ, ինքն էլ որոշ յափով սօցիալական ուղղութիւն ստացաւ:

✓ Վահան Տէրեանի առաւօտի եւ վերադարձի երգերը սկսեցին նախել մարդուն, աշխարհին, անձուգարձողին՝ Բանաստեղծին հետաքրքրութիւն են պատճառում մարդու կեանքը, աշխարհային դէպքերը, մեռնողն ու ապրողը: Եւ յգ կեանքին օրհնեղութիւն է բերում նա, աշխարհին ժպտաւ, անցուդարձողին ողջոյն, եւ մարդկութեան՝ եղբայրութիւն:—

“ Այսօր դու քաղցր ես նայում, առաւօտ,
Եւ դիւթական է համբոյրը քո զով,
Եւ լայն է քացուած հեռուն արեւոտ,
Եւ զինով եմ՝ ես մի նոր երազով...”

Եննել մանապարհ, խնդուն հեռանալ,
Զուարթ եւ թեթեւ թափառել ազատ,
Եւ ոչ հայրենիք, ոչ տուն ունենալ,
Ոչ անուն, ոչ զէնք, ոչ փառք, ոչ արծաթ...

... Ողջունել սիրով անց ու դարձողին,
Օրհնեղութիւն կեանքը, աշխարհին ժպտալ,
Հարազատ լինել ջրին ու հողին
Եւ անհուն սիրով սիրել ու զթալ...

Մութ յաներժութեան դառնութիւնն զգալ
 Եւ թախծել անհուն եւ անչար լինել,
 Մեռնող մանկան մտո դառը նեկեկաւ,
 Բաց շիրմի առաջ ողջ կեանքը օրհնել...

Մեռնել անտրտունջ նազանդութեան
 Մեղմագին երգով ժպտով քնքուշ. —
 Զգալ, որ ողջը ներեաթ է միայն,
 Յտորք է անվերջ, երազ է անուշ...

Ըսյն, խոհական հոգեբանութեան արտայայտութիւն է այս գեղեցիկ բանաստեղծութիւնը: Ըյդ հոգեբանութիւնը յատկանշանական է Վահան Տերեանի վերագարձի երգերի համար: Արբան անուրջների եւ որունաւների շրջանում անհանգիստ էր նա, որբան մնայլ էր հիասթափութեան ու մեկուսացման շրջանում — այնբան լուսաւոր է ու հանգարտ վերագարձի ժամին կեանքի եւ երջանկութեան պրօբլեմը այլ եւս նրան չէ ալեկոծում, մահուան զգացումն այլեւս չէ խախտում նրա որու հաւասարակշռութիւնը: Նա հաշտուած է կեանքի, ինչպէս եւ մահուան հետ, եւ զօրաւոր է ու կանգուն այդ հաշտութեան մէջ: Ընչուշտ, մութ յաներժութեան դառնութիւնը նրան թախծ է պատճառում, բայց նա հանգարտ է մտում այդ դառնութեան հանդէպ, եւ անչար որով կարողանում է

Բաց շիրմի առաջ ողջ կեանքը օրհնել...

Վահան Տերեան այդ շրջանում խորապէս այլասեր է Ընհատական յոյզերը, որ նրան հանգիստ չէին տալիս սկզբնական շրջանում, մեղմանում են այնբան, որ նա կարողանում է մեռնել անտրտունջ նազանդութեան մեղմագին երգով: Նր անձնական վշտերից աւելի՛ նրան հետաքրքրում է ընդհանուրի կեանքը, եւ մահուան դառնութեան մէջ նա կարողանում է օրհներգել նոր ծնուող, ապրող մարդկութիւնը:

Ըյս լայն ու խոհական հոգեբանութիւնը երազից ու ցնորքից զուրկ չէ սակայն:

„... Զգալ որ ողջը ներեաթ է միայն,
 Յտորք է անվերջ, երազ է անուշ... „

Ներեաթը, ցնորքը, երազը, որ Վահան Տերեանի բանաստեղծութեան առաջին շրջանի հիմնական տարրերն են, չեն վերանում նրա զգաստ եւ իմաստուն երգերի մէջ: Միայն թէ, եթէ է մի ժամանակ բանաստեղծը

Տերեւթը, ցնորքը, երազը կեանքից եւ աշխարհից զուրս է երեւակայել, այժմ նրանց տեսնում է կեանքի մէջ Բանաստեղծը հասկանում է, որ իդէալները իրականութիւնից զուրս խարուսիկ, անիմաստ պատկերներ են, եւ արժէք ունին այնչափ, որչափ մարդկութեան ընդհանուր շրջանակի մէջ են գտնուում:

Իր բանաստեղծական զարգացման եւ բնաշրջման մէջ նա սկսեց տեսնել՝ իդէալիզմը ու էալիզմի մէջ:

Նա հասկացաւ, որ կեանքը, երկիրը, անդայման բացասական ոյժերի ճակատագրական հաւարոյթ չէ, այլ եւ լայնարձակ թուիչքի եւ մարդկային իդէալի որանչելի վայր է: Մեր իդէալը աշխարհային եւ երկրային իդէալ է: Նա կապուած է Դաշտի եւ Հովիտի հետ, որ մարդկութեան բնակավայրն է: Իսկ այն միւս իդէալը, երկրի իդէալը, որ բանաստեղծին պատանութեան տարիներում այնքան խուսկբ պատճառեց, գոյութիւն չունի, կամ գոյութիւն ունի այնչափ, որչափ դարձաւ արգասաւոր եւ ստեղծագործական:

Վահան Տերեւան իր վերագործի երգերում բնաւ չթողեց ոսկէ հերթաթի պատկերը եւ հեռաւորի տեսիլը: Այս շրջանի նրա բանաստեղծութիւնը բնաւ հակադրութիւն չէ առաջին շրջանի բանաստեղծութեան, քանի որ հեռաւորի գաղափարը մարդկութեան եւ երկրին չէ հակասում, այլ ընդհակառակը՝ լրացնում եւ ամբողջացնում է նրանց:

«Մեր ողջոյնը սիրով կը նետենք
եւ մարդկանց, եւ երկրին, եւ հեռուն...»

Եւ եթէ երկրորդ շրջանի, այսինքն հիասթափութեան եւ մեկուսացման հոգեբանութիւնը առաջինի հանդէպ նկատենք հակադրութիւն, վերագործի երգերը մեզ կը ներկայանան որպէս հաշտութիւն, համադրութիւն: Հաշտութիւն ոչ միայն աշխարհի ու մարդկութեան հետ, այլ եւ ինքն իր հետ, վերագործի դէպի նախկին իդէալները սինթէզի մեթոտով, այսինքն գտուած, ամբողջացած, լրացած...

Վերագործի եւ նոր կեանքի հոգեբանութիւնը Վահան Տերեւանի բանաստեղծութիւնների մէջ նկատելի է դեռ 1908 թուականին, երբ լրջա տեսան «Միջնադրի անուրջները»: Այնպէս որ, իր առաջին իսկ հրատարակութեամբ Վահան Տերեւան ներկայանում է մեզ որպէս ամբողջացած, հոգեբանորէն հասունացած բանաստեղծ: Այդ ժամանակ նա տակաւին 23 տարեկան երիտասարդ էր, եւ եթէ ընդունենք, որ լրջա տեսնող բանաստեղծութիւնները գրուած էին այդ թուից առաջ — պիտի եզրակացնենք որ նրա բարոյական զարգացման շրջանները աւելի եւս մատաղ տարիների հետ են զուգադրուում: Ընդունաւ, Վահան Տերեւանի յետագայ բանաստեղծութիւնների մէջ եւս կան էջեր, որոնք առաջին կամ երկրորդ շրջանի

արամազրութիւնն են արտայայտում — բայց ընդհանուր առումով բանաստեղծի հոգեկան պոռոյան արդէն կատարուած է եւ գծուած է ամբողջական շրջանը:

Վահան Տէրեան 1908 թուականին խոսում է այն „նոր կեանքի“ մասին, որ վառոււմ է ամենուրեք, եւ այն „նոր սիրոյ“ մասին, որ հրդեհուել է նրա բանաստեղծական հոգում: Այդ թուականին նա արդէն „կրկին զուարթ ու ջահէլ“ գուրս է եկել իր „մենութեան բանտից“ եւ որդոյն է տուել արեւին ու գարունին, որ բացել են նրա դէմ յաւերժական ուկեղէն հեռուն:

“... Զուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
Դարձն, ամեն տեղ նոր կեանք ես վառել.
Իմ սրտում էլ ես թուերդ փռել,
Իմ հոգում էլ ես հրդեհել նոր սէր:

Եւ անա կրկին զուարթ ու ջահէլ,
Դուրս ելայ տխուր մենութեան բանտից.
Պայծառ աչքերդ ողջունում են ինձ,
Եւ ես շեմ կարող իմ ծիշը պահել:

Բացել ես իմ դէմ ոսկեղէն հեռուն,
Ժաղկել ես սարձում, անտառձում, արտձում...
Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում —
Ողջոյն քեզ, արեւ, ողջոյն քեզ գարուն... ”

Այս նոր հոգեբանութիւնը հետզհետեւ աւելի թափ է առնում եւ աւելի մեծ կորովով է երեւան գալիս Վահան Տէրեանի բանաստեղծութիւնների մէջ: Կեանքի յոսի կողմերը սկզբնապէս ներգործեցին պատանի բանաստեղծի վրայ եւ նրան հիասթափութեան մատնեցին: Բայց իր հիասթափութեան եւ իր մենութեան բանտի մէջ բանաստեղծը կարողացաւ վերջ ի վերջոյ նուաճել բացասական սկզբունքը եւ յաղթանակով վերակենդանացաւ:

Վահան Տէրեանի հիասթափութեան եւ մեկուսացման երգերը քրննելիս՝ մենք տեսանք, որ բանաստեղծը կարողանում է կեանքի մաշվից ազատագրուել՝ հեռաւոր լեռնագագաթները ապաստանելով: Այդ լեռնագագաթների վրայ նա աւելի մտ է արեգակին, որի բոցեղէն լլայերը զուում, մարբազործում են բանաստեղծին: Տեսանք նաեւ, որ այդ լեռնա-

գագաթները թէև հեռու աշխարհից, այնուամենայնիւ աշխարհի նախապատրաստութիւնն են բանաստեղծը այդ հեռուոր ժայտերից շարունակում է նայել կեանքին, ապրել իր եղբայրների ճակատագրով, որոնք հեծեծում են մութ ուղիներում եւ աշխարհի դաժան բանտերում:

Մարդկութեան եւ հաւարականութեան բուն սերը բանաստեղծի մէջ նորէն արթնանում է, նա ձգտում է զէպի դաշտը, զէպի տառապող հոգիար:

✓ Իր հեռուոր ժայտերի վրայ նա անտարբեր չէր ուրեմն զէպի երկրի իրականութիւնը: Ընդհակառակը, այնտեղից աւելի եւս որո՞ւ է տեսնում մեր ամբողջութիւնը, մեր աշխարհի վրայ ինչո՞ղ լոյսը եւ բուսաբուս թռչունի նման ազգարարում է մեզ Արեւածագը:—

“ Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
 Բարձր, բարձր — հեռուոր ու մննաւոր.
 Այնտեղ ցածում դեռ նիրհում են դաշտ ու ձոր,
 Դեռ խաւար է այնտեղ դաժան ու լռի՛ն:
 Սակայն շուտով կատարներից հեռանիստ՝
 Արեւն այնտեղ հուր կը թափէ եւ ոսկի,
 Եւ կը ցընծան դաշտերը լուռ ու հանգիստ,
 Երկիրն անհուն կարօտ կեանքի եւ խօսքի:
 Եւ դու կերգես, զարթնած աշխարհ, իմ առաջ,
 Կարձազանգես իմ ողջոյնին սիրառատ,
 Կը լսեմ ես դարձեալ աղմուկ ու շառաշ
 Ու կը սիրեմ՝ հեքեաթային առօրեաղ:
 Լռութիւն է, մութ է այնտեղ, սակայն իմ
 Սրտում արդէն արշալոյս է՝ յարութիւն.—
 Ողջոյն ձեզ մութ ուղիներում՝ երկրային,
 Իմ՝ եղբայրներ, հեռուներում՝ եւ քանտում:

Ոգեւորութեամբ ու հաւատքով գրուած այս բանաստեղծութիւնը վաճան ցերեանի տրամագրութեան մէջ ուժգին բեկում է ցոյց տալիս՝ գրական ուղղութեամբ բանաստեղծը տեսնում է մարդկութեան ծանր ճակատագիրը: Նթէ առաջ իր զգացողութեան եւ տեսողութեան կենդանը իր անհատական վշտերն էին, այժմ այնպէս չէ սակայն՝ Նա եղբայրներ ունի, որոնք ապրում են „հեռուներում եւ քանտում“ եւ որոնք բանաստեղծին ներշնչում են սեր ու համակրութիւն բանաստեղծը հեռոցհեռէ թողնում:

է իր անհատականութեան անձուկ սահմանները եւ բարոյապէս միանում է հաւարականութեան:

Եթէ նրա աշխարհայեցողութիւնը իր կեանքի նկատմամբ մտայլ էր ու յոռետես, հաւարականութեան նկատմամբ դառնում է բուսական, հաստատող ու բուսաւոր: Նա տեսնում է վաղուան օրը եւ գիտէ, որ մարդկութիւնը պիտի ազատագրուի այսօրուան ստրկական վիճակից—

“... Արեւն այնտեղ հուր կը թափէ եւ ոսկի
Եւ կը ցընձան դաշտերը լուռ ու հանգիստ...”

Մարդկութեան ծանր տառապանքի նկատմամբ բանաստեղծը կը բուսորական վշտակցութիւն չէ, որ ունի Նա ներգործական զեր է կատարում տառապանքը վերացնելու գործում: Աշխարհը պիտի արթնանայ բանաստեղծի մարգարեական կոչերից եւ նրա միջոցով պիտի սկսի զարնեալ “աղմուկն ու շառաչը”, որ պայքարի, կեանքի եւ յաղթութեան նշանակ են բանաստեղծը սիրում է տառապող մարդկութեան անորեան, եւ այդ առօրեայի մէջ տեսնում է հերեաթ ու հրապոյր—

... Ես կը սիրեմ հերեաթային անորեալ...

Մարդկութեան վերածնութիւնը եւ վերածնուած մարդկութեան գործնական կեանքը բանաստեղծի համար նոյնպէս իդէալներ են, որպէս իր անուրջներն ու երազը:

Եւ բանաստեղծութիւնն էլ իր վտեմ առումով թերեւս այդ մարդկութեան յարութեան երգն է, որ երգում է քերթող՝ զողորմն սիրով եւ ներշնչուած ու կարտապին շեշտերով:

Վահան Տերեան անհատական բանաստեղծից հետզհետէ դառնում է հաւարականութեան իդէալների բանաստեղծը — եւ մտնւմ է միշտ մաքուր քնարերգու բանաստեղծ...

Երազը, որոնույթները, որոնք բնորոշում են նրա բանաստեղծութեան առաջին շրջանը, իրապէս չեն պարտուում նրա բանաստեղծութեան վերջին շրջանում: Միայն թէ այս երազն ու որոնույթները այժմ կապուած են կեանքի եւ իրականութեան հետ, եւ կրում են ռեալիզմի կենդանի շունչը:

Գառնալով հաւարականութեան երգիչ եւ արտայայտելով իր սերնդի իդէալները — Վահան Տերեան հետզհետէ տեսնում է այն կենդանուր, ուր խտանում են այդ իդէալները եւ ուր պատրաստուում է “յաղթական մարտի ցնձութիւնը”, Վ.յգ կենդանուր նրա համար ժամանակակից մեծ բաղաւթն է, աշխատանքի ուսանել, որի գեղարուեստական պատկերը գծել է նա մի սքանչելի բանաստեղծութեան մէջ եւ որի յաղթութիւնը նախատեսել է նա բանաստեղծական պայծառ հայեցողութեամբ—

“... Միշտ նոյն խոհերի շուկին հլու,
 Միշտ նոյն կարօտի կսկիծը պահած,
 Ես դուրս եմ գալիս նորից շրջելու
 Նեղ փողոցներն ու կրկէաները բաց...”

Եփոթ նուազով աղմուկ ու սուլոց
 Եարժում են առաջ օրը ժրաջան —
 Բոցոտ խնջոյքում, ծուլուած խինդ ու կոծ,
 Հիւսել են կեանքի կախարդուած շրջան:

Հապճեպ հոսանքում եւ մարդ եւ անիւ,
 Ալեկոծութեամբ մի խայտանկար,
 Խենթ փողոցների բաւիղներն անթիւ
 Զրերի նման խառնում են իրար:

Ամերի ծայնով երկաթն է խօսում,
 Պողպատն է ծշում շաշինով դողդոզ —
 Եւ բազմադաղակ օրերի լեզուն
 Հնշում է այստեղ, որպէս մարտակոշ:

Այս աղմկահիւս կեանքի խենթ բոցում,
 Այրում է սիրտս սրբազան մի դող,
 Յուզում է հոգիս մի վեր հիացում,
 Եւ սարսափեցին թում է դիւթող...

Մաշուած է կեանքս վշտում անաղարտ
 Եւ տառապանքի օրերում յամառ,
 Բայց ցաւած սիրտըս բացել եմ հպարտ
 Նորից ու նորից սիրելու համար:

Ուզում եմ, վաղուայ ցնծութեան գուշակ,
 Կարօտըս նետած լուսեղէն հեռուն,
 Վառել երգերս որպէս դրօշակ,
 Ու մեռնել որպէս հերոսն է մեռնում...

Վաճան Տէրեանի հոգեբանական զարգացումը այսպիսով հասնում է իր տրամաբանական վերջաւորութեան Նա կարողանում է գուրս գալ կրաւորական երազների հերթաթափին շրջանից, նա կարողանում է մաշակել անցնել տառանդանների, հիասթափումի եւ մեկուսացման ծանր շրջանը եւ դիմել դէպի մարդկութեան պայծառ արեւածագը:

Եւս շրջանում նրա հոգեբանութիւնը զարմանալի կերպով յուզուած է: Հաշտութեան եւ համակերպումի տախի ու գորշ հոգեբանութիւնը չէ, որ նրան երեւում է Նա տեսնում է զարնեալ եւ նրա հոգում մտնում է միշտ «նոյն կարտի կակի՞՞՞ր...», Ներքնապէս ապրում է նա նոյնպիսի բուռն սիրով եւ նոյնպիսի խռովեալ տրամադրութեամբ, որպէս պատանեկան տարիներում, այն տարբերութեամբ որ այդ շրջանում նրա սերը աւելի եւս խորն է ու իմացական, եւ նրա խռովքը արգասաւոր է ու գիտակցական: Նրա տարտամ երազներն ու որոնումները դառնում են այժմ լուսաւոր իդէալներ:

Մեր «ազնկահիւս կեանքի խնթ բոցում», բանաստեղծը ուժգին զգացումներ է ունենում, եւ նրա սիրտը «այրում է սրբազան մի զոռ», Նա տեսնում է այն հեռաւոր պայծառ առաւօտը — եւ նրա հոգին «յուզում է մի վեհ հիացում», Նա գիտէ թերեւս, որ դժուարին պատահարներ պիտի ունենայ այդ գեղեցիկ օրում հասնելու համար, սակայն «սարսափելին թում է դիմող»:

Նա բանաստեղծ է իր հոգու բոցը կողմերով — սրանելի, երազական, կարտապից ու կախարդական: Իր հոգեբանական եւ բանաստեղծական կատարելագործութեան մէջ նա մտնում է միշտ երազող եւ տեսնող: Իր վշտագին հիասթափումից եւ մտայլ մեկուսացումից յետոյ նա դառնում է «վազուան ցնձութեան գուշակ», բայց մինչեւ իսկ այդ բարձր գերի մէջ նա չէ գոհանում այլ անցնում է բարձրագոյնը, վառելով երգերը որպէս դրօշակ եւ մեռնելով որպէս հերոսն է մնոնում:

Վաճան Տէրեանի տրագեդիան մեր լուսագոյն երիտասարդութեան տրագեդիան է: Եւս յ երիտասարդութիւնը նրա ժամանակ դեռ չէր կազապարուել մտաւորապէս եւ բարոյապէս Վաճան Տէրեան եղաւ ոչ միայն այդ սերնդի երգիչը, այլ եւ նրա բարոյական ազգարարը, նրա կենդանի անձնաւորումը:

1905 թուականի յեղափոխութիւնից յետոյ այդ սերունդը երազներից ընկաւ հիասթափութեան ու յուսահատութեան մէջ:

Բայց այս հիասթափութիւնն ու յուսահատութիւնը սերնդի լուսագոյն տարրերի վրայ երկար չի խեցին: Հաւատքը, իդէալը, գազափարը վերագարձան — եւ նրան տարան դէպի նոր Յեղափոխութիւն:

Հոգեբանօրէն չափազանց հեռաբրբերական է այս շրջանի պատմութիւնը: Մի կարճատեւ ժամանակաշրջանի մէջ ամփոփուած ու խտացուած է մեր կեանքի այնչափ կարեւոր կտորը, որ զարագբաւ զարձաւ:

Վահան Տերեան այդ ժամանակաշրջանի բանաստեղծն է իր երազներով ու որոնումներով, իր հիասթափութեամբ ու մեկուսացումով, իր վերագարձով և իղէալներով:

Կրա երկերի մէջ մենք տեսնում ենք մեր զգացումները, մեր բարոյական տագնապը, մեր հաւատքն ու իղէալները: Կրա բանաստեղծութեան մէջ ցոլանում է մարդկային հոգին և մարդկային պատմութիւնը, այսինքն անհատը և հաւարականութիւնը:

Եւ որովհետեւ այդ երգերը գրուած են ամենամարտը ներշնչումով և մարդկային բարձր սիրով, որովհետեւ նրանք գրուած են տաղանգով և ոգով — այդ պատճառով և նրանք կը մնան մեր գրականութեան պատմութեան մէջ և կապրեն յետագայ սերունդների համար ևս:

Եւ երբ յետագայում մենք ունենանք նոր շրջանի աւելի հասուն և աւելի ուժեղ բանաստեղծներ — մենք պիտի յիշենք, որ այդ շրջանի նախերգանքը երգող բանաստեղծը Վահան Տերեանն էր: Պիտի յիշենք երախտագիտութեամբ, որ այդ առեղծուածային բանաստեղծը մեր նոր կեանքի մուտքի առջև՝ նրզերը վառեց որպէս մի դրօշակ և մնուաւ, որպէս հերոսն է մննում...

VIII

Տ Է Ր Ե Ը Ն Լ Ր Ո Ւ Ե Ս Ս Ե Կ Է Տ

Ինչ յատկութիւններ ունի Վահան Տերեանի արուեստը:

Ըյն նիւթը, որ ներկայացրինք մեր աշխատութեան նախորդ էջերի մէջ, կապուած է մեծ մասամբ նրա արուեստի ներքին կողմին — հոգեբանութեան Ընդունշա, հոգեբանութիւնը ինքնին արուեստ է, և աւելի էական արուեստ, քան այն, ինչ որ մեր մէջ յաճախ երևւան է զալիս արուեստի մեծանուն կոչումով: Ինչպէս արուեստի և ոգու մէջ մենք զժուարութեամբ ենք հակասութիւն ենթադրում, այնպէս էլ ներքին և արտաքին արուեստի մէջ մենք շնոր կարող ընդհարում ընդունել:

Գեղարուեստական երկի արժէքը նրա ամբողջութեան մէջ է և ոչ նրա զանազան մասերի: Չեւր և նիւթը կապուած են միմեանց հետ անբաժանելի կերպով և երկուսն էլ միասին ստեղծում են այն, ինչ մենք անուանում ենք գեղարուեստական միութիւն:

Վահան Տերեանին և նրա բանաստեղծութիւնը մենք բարձր ենք որպէս մի հոգեբանական, պատմական, սոցիալական ամբողջութիւն, կապուած կեանքի և պատմութեան հետ բազմազան կապերով: Կրա գրական

գործը իր էութեամբ այդ կապերի արդիւնք է եւ նրա արուեստն էլ հոգեբանօրէն արտայայտութիւնն է այդ ամբողջութեանը)

Վահան Տէրեանի արուեստի ներքին կողմերի մասին մենք ասացինք այն, ինչ որ մեր տեսակէտով կարելոր համարեցինք:

Սակայն արուեստը ունի նաեւ իր արտաքին կողմը, որի այս կամ այն կատարումից կախուած է արուեստի ամբողջութիւնը:

Եյս արտաքին կողմը մենք համարում ենք գրուածքի տեսակը, բանաստեղծութեան չափը, յանգը, ոտանաւորի կանոնները, լեզուն, ոճը, պատկերները, երաժշտականութիւնը — մէկ խօսքով այն միջոցները, որոնցով կերտուած է բանաստեղծութիւնը: Մեր մէջ յաճախ արուեստագէտ ասելով հասկանում ենք այս մասը, որ անշուշտ արտայայտուած է ընդհանուր բառով եւ որ բոլորովին ճշգրտութեամբ չէ թարգմանուած գաղափարը:

Չկամենալով ծանրանալ այս խնդիրների վրայ աւելի մանրամասն, կուզէինք մի քանի խօսք ասել Տէրեան արուեստագէտի մասին — հասկանալով այս խօսքը իր տեքնիքական նշանակութեամբ: Եւ սրանով կուզէինք փակել մեր ուսումնասիրութիւնը, որի մէջ մենք կարելոր համարեցինք Տէրեանի հոգեբանութեան եւ նրա ներքին արուեստի քննութիւնը:

Ի՞նչ արժէք ունի Տէրեան իրրեւ տեքնիք արուեստագէտ:

Անշուշտ երիտասարդ բանաստեղծի նկատմամբ չենք կարող շատ խստապահանջ լինել: Բանաստեղծութիւններ ունի նա, որոնք երկրորդ անգամ զբժուար են կարգացուած: ունի նաեւ ոտանաւորներ, որոնց ընթերցանութիւնը յաճախ չենք կարողանում վերջացնել:

Արանք բանաստեղծի թող կողմերն են: Եւ այս կողմերը անկարելի է անգիտանալ:

Բայց չի կարելի բանաստեղծին չափել իր թող եւ անյաշող էջերի մէջ: Բանաստեղծին պէտք է կարգալ իր լուսագոյն էջերի մէջ եւ նրա ստեղծագործական կարողութիւնը այնտեղ պէտք է տեսնել:

Վահան Տէրեան այս տեսակէտից սրանչելի էջեր ունի, որոնց մէջ փայլում է ոչ միայն տրամադրուած, ներշնչուած, կուլուած բանաստեղծը, այլ եւ արուեստագէտ կատարողը:

Իրրեւ արուեստագէտ՝ Վահան Տէրեան մեր բանաստեղծութեան պատմութեան մէջ կարելոր տեղ ունի: Նրա անուր կարելի է զննել այն մի քանի սակաւաթիւ անուանների մօտ, որոնք մեր զբաղանութեան մէջ յայտնի են որպէս առաջնակարգ արուեստագէտներ: Նրանց մէջ նա ամենէն երիտասարդն է — եւ ամենէն վերջինը չէ: Արտշ տեսակէտով նա թերեւս նաեւ ամենէն շատ ինքնուրոյնն է: Իր նախորդների մէջ միայն Աւետիք Իսահակեանն է, որին նա նման է իր բանաստեղծական գործի մէկ մասով: Բայց միաժամանակ որչա՛փ տարբեր է նա Աւետիք Իսահակեանից եւ որչա՛փ ինքնուրոյն՝ թէ իր շեմով եւ թէ արուեստով:

Վահան Տէրեան գրել է միայն չափական էջեր: Նրա գրական գործի մէջ արձակը տեղ չունի: Եւ իր բանաստեղծական չափի մէջ գրել է ներբութիւն եւ բազմազանութիւն: Ըյս տեսակէտից Վահան Տէրեանի արուեստը նման է իր բանաստեղծութեան հոգեբանական կողմին: Ըյն ներբութիւնը, որ մենք նկատում ենք նրա տողերի ներքին էութեան մէջ — տեսնում ենք նաեւ չափի մէջ: Չափը անշուշտ մի պատահական եւ արուեստական պարագայ չէ: Նա իր ներքին իմաստն ունի եւ արտայայտութիւն է հոգեբանական տրամադրութեան: Եւ համաձայն այդ տրամադրութեան նա ստանում է որոշ ձեւ եւ որոշ կառուցում:

Վահան Տէրեան գործ է ածել տասնհինգամենայ չափից սկսած մինչեւ ամենակարճ չափը, շորտոնենայ, եւ բոլոր այդ չափերի մէջ մնացել է բնական, ազատ, անկաշկանդ:

Պատմուածքի նմանութիւն ունեցող կտորները մեծ մասամբ գրուած են երկար չափով, նոյնպէս եւ այն էջերը, որոնց մէջ արտայայտուած է նուազուն, յոգնած հոգեբանութիւն: Իսկ կտրուկ ու հատու տրամադրութիւնը արտայայտուած է մեծ մասամբ փոքր, յաճախ հատուածական չափերով: Ըմենափոքր չափի գեղեցիկ օրինակ կարելի է համարել «Բիւր մարդոց մէջ», բանաստեղծութիւնը, որ սակայն ձեւի եւ արտայայտութեան կողմից լրիւ է եւ կատարելապէս վերջացած:—

Բիւր մարդոց մէջ,
Պաղ մարդոց մէջ,
Որպէս տրտում
Անապատում —
Մենակուծիւն,
Մենակուծիւն . . .

Ախ, այս տրտում,
Երկրի ցրտում
Անուր ընկան,
Անիստ հանգան
Երկնքի յուշ
Երգերս անուշ:

Եւ իմ՝ հոգում,
Յուրտ ու միգում,
Խինդը մեռաւ,
Բախտը մարաւ,
Ապերադարձ,
Ապերադարձ . . .

Վաճան Տէրեանի բանաստեղծութիւնների մէջ *ցեղորաները* — *Հատածները* — յաճախ անկանոն են, այսինքն նրանք վերջնում են, երբ տակաւին բառը չէ վերջացած: Այսպիսով բառի չվերջացած մասը անցնում է հետեւեալ ցեղորային, ինչ որ թուլացնում է չափը եւ փաստում է գրուածքի երաժշտականութեանը: Բայց այս թերութիւնները, ինչպէս եւ յանգի անկատարութիւնները բնաւ չեն խանգարում, որ Վաճան Տէրեան ընդհանրապէս մեր բանաստեղծների շարքում չափի, յանգի, սիմֆի, երաժշտականութեան տեսակէտից բացառիկ պատուաւոր տեղ ունենայ:

[Վաճան Տէրեանի լեզուն ոչ շատ ուժեղ է, ոչ կատարելագործուած ու բիրեղացած, բայց իր տեսակով ազնիւ է, մաքուր, սահուն ու գեղեցիկ, եւ գտնուում է կատարելագործութեան ու բիրեղացման ճանապարհի վրայ:

Նրա լեզուն ազատ է գաւառական — թաթարական ազդեցութիւնից, ինչ որ նրան զրկում է որոշ կենդանութեանից եւ ձկնութիւնից: Բայց այդ ազատութիւնը նրան պահում է գրական լեզուի գեղեցիկ մթնոլորտի մէջ եւ զարգացնում է նրան այդ ուղիի վրայ, ապալով նրա լեզուին յաճախ դասական ազնութիւն, ճաշակ եւ վայելչութիւն:

Այս տեսակէտից Վաճան Տէրեան մեր բանաստեղծական գրականութեան մէջ որոշ հոսանք մտցրեց, որ սրբազրեց գաւառական-առնական ազդեցութեան թերի կողմերը, տանելով լեզուն եւ բանաստեղծութիւնը դէպի գրական - հոգեբանական բարձրութիւն:] Եւ որովհետեւ ինքը հայ գաւառից էր, գիտէր մեր գաւառի լեզուն ու բանաստեղծութիւնը — այդ պատճառով եւ կարողացաւ միաժամանակ մեալ հայ լեզուի կենդանի ոլորտում:

Վաճան Տէրեան չէ պատկանում ընդհանրապէս այն բանաստեղծների թուին, որոնք պատկերներով են իրենց հոգեկան տրամադրութիւնն արտայայտում: Բայց իր բանաստեղծութիւնների մէջ նա յաճախ տուել է այնպիսի պատկերներ, որոնք վերին աստիճան յուզիչ են եւ հազորդական: Պատկերների մէջ նա պահպանել է նոյն նրբութիւնը եւ նոյն ազնիւ ճաշակը, ինչ որ լեզուի մէջ: Նրբութեան ձեւերի ու շարժումների փոխարէն նա տուել է ողի եւ իմաստ: Արձանագործութիւնը եւ նկարչութիւնը նա հասկացել է իրենց ներքին խորութեան մէջ եւ ոչ իրենց արտաքին, պրակտիքական կողմով:

Այս տեսակէտից նայելով արուեստին նա նկարչութիւնը մտնեցրել է բանաստեղծութեան եւ բանաստեղծութիւնը երաժշտութեան:

Վաճան Տէրեանի բանաստեղծութիւնը գեղեցիկ երաժշտութիւն է: Բառերը հնչիւններ են գառնում այնտեղ եւ նախադասութիւնը սիմֆոնիա: Իչեր ունի նա, որոնց ընթերցումը ապալի է մեզ այն յոյսերն ու խաղճը, ինչ որ կարող է ապա մի երգ, մի նուագ: Եւ քնարերգակ բանաստեղծը յաճախ գառնում է իսկական քնարերգու:

Հատ բան, ինչ որ ասացինք Վահան Տէրեանի արուեստի մասին՝ պէտք է ընդունել ոչ թէ իրենց կատարելագործութեան, այլ իրենց սկզբունքի մէջ:

Բայց ասացինք եւ շեշտենք նաեւ, որ նրա տաղանդը գնում էր դէպի կատարելագործութիւն ու բիւրեղացում:

Ինչպէս իր բանաստեղծութեան նիւթով եւ ներքին պրօբլեմներով, որոնումների եւ հիասթափութեան միջից, գնում էր նա դէպի հանրամարդկային իդէալը — այնպէս էլ իր արուեստով, տառանումների եւ սայլաբունների միջից, գնում էր դէպի ոյժն ու գեղեցկութիւնը:

Եւ նշանակելի է այն, որ հանրամարդկային իդէալի հետ զուգահեռաբար է նրա արուեստի խորութիւնն ու կատարելութիւնը:

Այսպէս հետզհետէ մեծացաւ եւ գեղեցկացաւ մեր նոր սերնդի բանաստեղծը:

✓ Նա հեռացաւ մեզանից այն ժամանակ, երբ մեր աշխարհն ու ամբողջ մարդկութիւնը փոթորկուած են հիմքից եւ գնում են դէպի նոր կեանք, նոր պատմութիւն, նոր գրականութիւն:

✓ Այս մեծ եւ զսեմ ժամին Վահան Տէրեան չկայ մեր մէջ — եւ նրա տեղը մինչեւ այսօր էլ բաց է մեր գրականութեան տխուր ասպարիզում:

Իր մի գեղեցիկ եւ ողբերգական բանաստեղծութեան մէջ Վահան Տէրեան ծանր երկիւղ է ունեցել, թէ մի գուցէ Նաիրեան երկրի վերջին բանաստեղծն է նա: Այդ խորհրդաւոր եւ դառնագին տեսիլներից յետոյ մեր երկիրը եւ մեր ժողովուրդը սարսափելի օրեր ունեցան: Գի վայրկեան թուում էր իրօք, թէ Վահան Տէրեան մեր հնագոյն երկրի վերջին բանաստեղծը պիտի լինի:


Բայց ահաւասիկ աճիւնների միջից բարձրանում է նոր Հայաստանը, ուսական եւ կովկասեան Մեծ Յեղափոխութիւնից յետոյ, որ ուզում է ապրել եւ ստեղծագործել նոր կեանքով ու նոր իդէալներով:


Վահան Տէրեան վերջին բանաստեղծը չէ:

Ահաւասիկ երևում են նորերը, Վահան Տէրեանի անմիջական յաջորդները, որոնք պիտի շարունակեն նրա գործը եւ պիտի տեսնեն նրա երգած լուսապայծառ Առաւօրը:

Այս նոր Հայաստանի մէջ Վահան Տէրեան երևում է որպէս բանաստեղծական գեղեցիկ սիմբոլ՝ մեր որոնումների, մեր հիասթափութեան եւ մեր Երեւածագի:

Եւ իբրեւ այդպիսին՝ Վահան Տէրեան մեզ համար միշտ կենդանի կը մնայ...





[In 504]

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031948

A $\frac{11}{31948}$